

**ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ,  
ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**Կարապետյան Եգոր Աղվանի**

**Իրավական ռեժիմի ինստիտուտը ազգային իրավական համակարգում.  
տեսական – իրավական վերլուծություն**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

**Գիտական ղեկավար՝  
Իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Գ.Հ. Սաֆարյան**

Երևան - 2017

## Բովանդակություն

<b>Ներածություն.....</b>	<b>3</b>
<b>Գլուխ 1</b>	
<b>Իրավական ռեժիմի հասկացությունը, էությունը և բնութագրական հատկանիշները.....</b>	<b>13</b>
1.1. Իրավական ռեժիմի էությունը և ընդհանուր բնութագիրը իրավունքի տեսության մեջ.....	13
1.2. Իրավական ռեժիմի հասկացությունը և հատկանիշները.....	26
<b>Գլուխ 2</b>	
<b>Իրավական ռեժիմի կառուցվածքն ու գործառույթները.....</b>	<b>46</b>
2.1. Իրավական միջոցները իրավական ռեժիմի կառուցակարգում.....	46
2.2. Իրավական սկզբունքներն ու երաշխիքները իրավական ռեժիմի կառուցակարգում.....	63
2.3. Իրավական ռեժիմի գործառույթները. հասկացությունը և դասակարգման հիմքերը.....	80
<b>Գլուխ 3</b>	
<b>Իրավական ռեժիմների դասակարգման հիմնախնդիրները իրավունքի տեսությունում և գործող օրենսդրությունում.....</b>	<b>88</b>
3.1. Իրավական ռեժիմների դասակարգման հիմնախնդիրները իրավունքի տեսության մեջ.....	88
3.2. Իրավական ռեժիմների դասակարգման օրենսդրական հիմքերը.....	97
3.3. Ճյուղային իրավական ռեժիմների առանձնահատկությունները.....	130
3.4. Հանրային իրավական ու մասնավոր իրավական ռեժիմները. համեմատական վերլուծություն.....	145
<b>Ամփոփում.....</b>	<b>162</b>
<b>Օգտագործված գրականության ցանկ.....</b>	<b>166</b>

## Ներածություն

**Թեմայի հետազոտության արդիականությունը.** Սույն հետազոտությունը պայմանավորված է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման խնդիրներին համակարգված և համարժեք մոտեցումների գործադրման անհրաժեշտությամբ:

Իր հերթին, ժամանակակից հայ հասարակության զարգացման դինամիկան, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումների զարգացող ոլորտին զուգահեռ, օբյեկտիվորեն պահանջում է կարգավորման որակի արդիականացում, այնպիսի օպտիմալ կարգի ստեղծում, որը հնարավորություն կտար առավել արդյունավետ և օրենքին խիստ համապատասխանությամբ լուծել այս կամ այն կենսական իրավիճակը (իրավաբանական գործը), ապահովել օրինականությունը և իրավակարգը:

Հատկապես նման հատուկ կազմակերպված կայունությամբ և միևնույն ժամանակ հարաշարժությամբ տարբերվող մեխանիզմ, սոցիալական իրավիճակների շեղումներին պատեհաժամ լուծում տալու և իրավական կարգավորումների մեջ խաթարումները կանխարգելու նպատակով հանդես է գալիս իրավական ռեժիմը:

Իրավական ռեժիմները ապահովում են հասարակական հարաբերությունների կայուն նորմատիվային կարգավորում, ինչն էլ խիստ կարևոր է տնտեսական, քաղաքական և սոցիալական վերակառուցումների շրջանում: Դրանք մարմնավորում են իրավունքի գործառնական բնույթը՝ իրավական միջոցների համալիրում մարմնավորված իրավական կարգավորումների որոշակի կարգը, վերջիններիս օգնությամբ ձեռք են բերվում իրավական կարգավորման նպատակները:

Ներկայումս <<իրավական ռեժիմ>> հասկացությունը ակտիվորեն կիրառվում է ինչպես տարբեր մակարդակի նորմատիվ- իրավական ակտերում, այնպես էլ գիտական գրականության մեջ՝ հանդիսանալով իրավունքի և պետության տեսության և ճյուղային իրավաբանական գիտությունների մեջ կարևոր և լայնորեն տարածված հասկացություններից մեկը:

Բոլոր դեպքերում, չնայած, որ իրավական ռեժիմի կատեգորիան իրավաչափորեն պահանջված է գիտական գիտելիքի տարբեր ոլորտներում և մշտապես հանդիպում է

նորմատիվ-իրավական ակտերի տեքստերում: Այս հասկացությունը տարբեր իրավական վիճակների համար ներառվել է իրավաբանական տերմինաբանության և հասարակական-քաղաքական բառապաշարի մեջ, կարելի է հաստատել, որ մնում է իրավաբանության մեջ առավել բարդերից և անբավարար ուսումնասիրվածներից մեկը:

Իրավական ռեժիմների նորմատիվ-իրավական ամրագրման առանձնահատկությունների և իրավակարգավորումների կառուցակարգի համակողմանի տեսական հետազոտությունը, մեր կարծիքով, որոշակիորեն կնպաստի ինչպես օրենսդրի, այնպես էլ իրավակիրառողի, իրավական հարաբերությունների այլ սուբյեկտների արդյունավետ աշխատանքի ծավալմանը:

Վերոնշվածով է պայմանավորված թեմայի գիտական հետազոտության արդիականությունը:

### **Թեմայի գիտական մշակվածության վիճակը:**

Իրավական ռեժիմի վերաբերյալ իրավագիտությամբ կուտակված գիտելիքները մի շարք դեպքերում պահանջում են վերաիմաստավորում փոփոխված սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններին համապատասխանությամբ: Անբավարար է մշակված նաև համապատասխան հասկացությունների ապարատը, որը հանդիսանում է իրավական ռեժիմի և դրա այնպիսի տարատեսակությունների էության և բովանդակության իմացության միջոց, ինչպիսիք են՝ հատուկը, ճյուղայինը, հանրային և մասնավոր իրավունքը, նյութական և դատավարական իրավունքը:

Այս առումով գտնում ենք, որ սույն հետազոտությունը մասամբ կլրացնի իրավագիտության մեջ առկա բացը և հնարավորություն կընձեռի հետագա ուսումնասիրողների համար:

**Հետազոտության օբյեկտն** է հասարակական հարաբերությունների և պետաիրավական երևույթների համալիրը, որի կարգավորմանն է կողմնորոշված իրավական ռեժիմների ազդեցությունը:

**Հետազոտության առարկան** ընդհանուր օրինաչափությունների, հասկացությունների, հատկանիշների, սկզբունքների, իրավաբանական միջոցների,

մեթոդների, մեխանիզմների հանրագումարն է, որը սահմանում է իրավական ռեժիմի՝ որպես ինքնուրույն իրավաբանական կատեգորիայի էությունը և բովանդակությունը:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:**

Ատենախոսական աշխատանքի նպատակն է իրավական ռեժիմի՝ որպես ամբողջական գիտատեսական խնդրի դերի և նշանակության, էության և բովանդակության ընդհանուր տեսական համակարգված ուսումնասիրությունը, ինչպես նաև ըստ իրավական ռեժիմների օպտիմալացմանն ուղղված գիտականորեն հիմնավորված առաջարկությունների և հանձնարարականների մշակումը:

Առաջադրված նպատակին հասնելու համար անհրաժեշտություն է առաջանում լուծել հետևյալ **խնդիրները**.

- իրականացնել <<իրավական ռեժիմ>> կատեգորիայի էության և բովանդակության ընկալման համար գիտական մոտեցումների համեմատական վերլուծություն, որի հիման վրա մշակել դրա միասնական գիտականորեն հիմնավորված սահմանումը:

- սահմանել իրավական ռեժիմի էությունը, ներկայացնել այս հասկացության տարբերությունները միջանկյալ իրավաբանական կատեգորիաներից և առանձնացնել հատուկ հատկանիշներ, որոնք հնարավորություն կտան սահմանել վերջինիս ինքնուրույն իրավաբանական կատեգորիայի որակով,

- ներկայացնել իրավական ռեժիմի կառուցվածքի համակողմանի բնութագրություն, բացահայտել իրավական միջոցների, սկզբունքների և երաշխիքների դերը վերջինիս ձևավորման և գործառնության մեջ,

- բացահայտել իրավական ռեժիմների գործառույթների էությունը և բովանդակությունը հասարակական հարաբերությունների վրա դրանց (իրավական ռեժիմների) ազդեցության հիմնական ուղղությունների որոշման նպատակներով,

- առաջարկել իրավական ռեժիմների համակողմանի դասակարգում, բնութագրել դրանց հիմնական տեսակները,

- վերլուծել առավելություններին և սահմանափակումներին հենված իրավական ռեժիմները, սահմանել դրանց հասկացությունը, հատկանիշները և բովանդակային առանձնահատկությունները,

- ուսումնասիրել ճյուղային, հանրային-իրավական և մասնավոր-իրավական ռեժիմները իրավական կարգավորման առարկայի, մեթոդի, մեխանիզմների և սկզբունքների դիրքերից, սահմանել դրանց հատկանիշները, նմանությունները և տարբերությունները:

**Հետազոտության մեթոդաբանության հիմունքները:**

Աշխատանքի մեջ կիրառված են տրամաբանական իմացության տարբեր ընդհանուր գիտական եղանակներ և միջոցներ, վերլուծություն և սինթեզ, վերացարկում, մոդելավորում, համակարգակառուցվածքային վերլուծության, գործառնական և ֆորմալ-տրամաբանական մոտեցումներ:

Հատուկ մեթոդները ներկայացված են իրավաբանական վերլուծության, համեմատական-իրավական և իրավունքի նորմերի մեկնաբանության մեթոդներով:

Ընդհանուր գիտական մեթոդները կիրառություն են գտել քննարկվող խնդիրների հիմնավորման տեսությունում, իրավական ռեժիմի երևույթների հասկացության հարցերի քննարկման, իրավական կարգավորման գործընթացներում դրա նշանակության սահմանման դեպքերում:

Իրավական ռեժիմների ուսումնասիրության նկատմամբ համալիր տեսական-կիրառական միջառարկայական մոտեցումը պայմանավորել է աշխատանքում համակարգային մեթոդի կիրառության անհրաժեշտությունը, որի շրջանակներում իրականացվել է տեսական վերացարկումների, գործող օրենսդրության մեջ ամրագրված դրույթների և իրավաստեղծ, իրավակիրառ պրակտիկայի նյութերի համակողմանի վերլուծություն և ընդհանրացում:

Համեմատական-իրավական մեթոդը գերադրապես կիրառվում է իրավական այլ կատեգորիաների հետ իրավական ռեժիմների դասակարգման և դրանց տեսակների բնութագրման համար չափորոշիչների բացահայտման նպատակներով: Ֆորմալ-իրավաբանական վերլուծության մեթոդը վերաձվել է գործող նորմատիվային-իրավաբանական ակտերի վերլուծության հիմքի: Իրավական նորմերի մեկնաբանության մեթոդը նպաստել է օրենսդրության մեջ հակասությունների և խնդիրների

բացահայտմանը, ըստ վերջինիս կատարելագործման նպատակով առաջարկությունների մշակմանը:

**Հետազոտության նորմատիվ հիմքն են՝** միջազգային և ներպետական նորմատիվ իրավական ակտերը, պաշտոնական փաստաթղթերը, իրավակիրառ և դատական պրակտիկայի նյութերը:

**Հետազոտության տեսական հիմքն են՝** իրավունքի և պետության ընդհանուր տեսության, պետական կառավարման տեսության, վարչական, քաղաքացիական և սահմանադրական իրավունքների, ինչպես նաև պատմության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության գիտական հետազոտությունների արդյունքները:

Որպես տեսական հիմք ծառայել է հայրենական և արտերկրյա հետազոտողների՝ մասնավորապես՝ Գ.Բ. Դանիելյանի, Գ.Գ. Հարությունյանի, Գ.Հ. Սաֆարյանի, Հ.Մ. Ստեփանյանի, Վ.Վ. Ստեփանյանի, Ա.Վ. Ավերինի, Ն.Գ. Ալեքսանդրովի, Ս.Ս. Ալեքսեևի, Վ.Ս. Անդխինի, Մ.Ի. Բայտինի, Վ.Մ. Բարանովի, Ի.Ս. Բարզիլովայի, Դ.Ն. Բախրախի, Վ.Պ. Բեյլակի, Վ.Վ. Բոլգովայի, Օ.Վ. Բերժնևի, Վ.Մ. Վեդյախինի, Ն.Վ. Վիտրուկի, Ն.Ա. Վլասենկոյի, Լ.Դ. Վոևոդինի, Ն.Ն. Վոպլենկոյի, Վ.Մ. Գորշենևի, Օ.Ս. Իոֆֆենի, Վ.Բ. Իսակովի, Վ.Ն. Կարտաշովի, Ս.Ա. Կոմորովի, Ա.Բ. Լիսուտկինի, Ա.Վ. Մակոյի, Ն.Ի. Մատուիզովի, Ա.Ս. Մորդովեցի, Ի.Ս. Մորոզովայի, Լ.Ա. Մորոզովայի, Պ.Ե. Նեդբայլոյի, Վ.Ն. Պրոտասովի, Տ.Ն. Ռադկոյի, Յու. Ս. Ռեշետովի, Ի.Ս. Սամոշենկոյի, Վ.Ա. Սապունի, Վ.Ն. Սաֆոնովի, Ի.Ն. Սենյակինի, Յու. Ն. Ստարիլովի, Վ.Մ. Սիրիխի, Յու.Ա. Տիխոմիրովայի, Ե.Ե. Տոնկովի, Պ.Մ. Ֆիլիպովի, Ա.Պ. Ֆոկովի, Ռ.Օ. Խալֆինայի, Վ.Ե. Չիրկինի, Լ.Ս. Յավիչի և ուրիշների աշխատությունները:

**Ատենախոսության գիտական նորույթը** կայանում է նրանում, որ դրանում ձևակերպված տեսական դրույթների և գործնական հանձնարարականների հանրագումարը կողմնորոշված է կոնկրետ գիտական խնդրի լուծմանը՝ իրավական ռեժիմի համալիր և համակարգված ընդհանուր տեսական հետազոտությանը:

Այս առումով ատենախոսության մեջ.

- առաջարկվել է իրավական ռեժիմի որպես դրա այնպիսի բաղադրիչների համակարգի սահմանումը, ինչպես իրավական միջոցները (ներառելով իրավական

կարգավորման եղանակները), իրավական սկզբունքները և իրավական երաշխիքները, որոնք էլ սահմանում են իրավական կարգավորման հատուկ կարգը,

- բացահայտվել են իրավական ռեժիմի էական հատկանիշները, որոնք էլ հնարավորություն են տալիս բացահայտել վերջինիս համալիր և համակարգային բնույթը,

- սահմանված և բնութագրված են տարրերը, որոնք բնութագրում են իրավական ռեժիմի էությունը և բովանդակությունը՝ դրա նպատակները, գործառույթները, սկզբունքները, երաշխիքները և այլն,

- դիտարկվել են իրավունքի սուբյեկտի համար առավելությունների և սահմանափակումների ստեղծմանը հենված իրավական ռեժիմների հատուկ տեսակներ և նախանշված են դրանց կատարելագործման ուղիները,

- իրավունքի ընդհանուր տեսության դիրքերից դիտարկված և վերլուծված են ճյուղային իրավական ռեժիմները, բացահայտված են հիմնական կողմնորոշիչները, որոնց օգնությամբ վերջիններս պետք է ուսումնասիրվեն ճյուղային իրավաբանական գիտությունների կողմից,

- համակողմանի ուսումնասիրված են հանրային-իրավական և մասնավոր իրավական ռեժիմները, ինչն էլ հնարավորություն է տալիս սահմանել ճյուղային իրավական ռեժիմներին չհանգեցվող դրանց էությունը և դրանց դերը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումների մեջ:

Այսպիսի մեթոդաբանական մոտեցումով հիմնավորվում է իրավական ռեժիմի տեսության համակարգային հետազոտության շնորհիվ ստացված արդյունքները, ինչպես նաև դրա վերաբերյալ տեսական-կիրառական գիտելիքների ընդարձակումը հանդիսանում է հիմնական արդյունքներից մեկը, որը հաստատում է իրականացված գիտական հետազոտության նորարարությունը:

**Գիտական նորույթի տարրեր են պարունակում պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները.**

1. Իրավական ռեժիմի կիրառության նկատմամբ գործառույթային մոտեցումը հնարավորություն է տվել դիտարկել իրավական ռեժիմը դինամիկայում, առանձնացնել վերջինիս ինչպես կառուցվածքային տարրերը, այնպես նաև իրականացման փուլերը: Իրավական ռեժիմի տակ հասկացվում է հատկապես իրավական կարգավորման հատուկ

կարգը, որը գործողության մեջ է դրվում ըստ հատուկ պատճառների, սոցիալական իրավիճակի ինքնաբավության հաշվառմամբ և նույն ձևով կիրառական չէ որևէ այլ ոլորտներում: Իրավական ռեժիմի բացառապես որպես նորմերի կամ իրավունքի ինստիտուտների համախմբի ընկալումը, հակառակը, էական աղքատացում է դրա բովանդակությունը, վերածում ստատիկ երևույթի, նույնականացում նորմատիվ-իրավական ակտերում ամրագրված իրավական նորմերի առավել կամ պակաս արժեքավոր խմբերի հետ:

2. Իրավական ռեժիմին բնորոշ է հետևյալ էական հատկանիշները. պարտադիր նորմատիվ-իրավական ամրագրում, հատուկ նպատակի հետապնդում, կարգավորման հատուկ կարգ, բարենպաստ (անբարենպաստ) պայմանների ստեղծում իրավունքի սուբյեկտների շահերի բավարարման համար, համալիր և համակարգային բնույթ, հատուկ կառուցվածք:

Իրավական ռեժիմի հատկանիշների առանձնացումը և վերլուծությունը հնարավորություն է ընձեռում լիարժեք բացահայտել դրա էությունը և սահմանել որպես իրավական միջոցների (այդ թվում իրավական կարգավորման եղանակների) համակցությանը հենված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման հատուկ կարգ, օպտիմալ սոցիալ-արժեքավոր արդյունքի ձեռքբերմանն ուղղությամբ իրավունքի սուբյեկտի շահերի բավարարման համար ստեղծված բարենպաստ (անբարենպաստ) պայմաններ:

3. Իրավական ռեժիմը ենթակա է պարտադիր նորմատիվ-իրավական ամրագրման, ինչն էլ հնարավորություն է ընձեռում հստակ նշել հասարակական հարաբերությունների կարգավորման (պաշտպանության) համար կիրառվող իրավական միջոցների համալիրը, ինչպես նաև իրավական ռեժիմի սահմաններում սուբյեկտներին տրամադրել տվյալ ռեժիմի շրջանակներում վարքագծային կանոնների վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն:

4. Իրավական ռեժիմի նպատակը՝ պետության կողմից ենթադրվող կամ ամրագրված որոշակի սոցիալական երևույթի (վիճակի, գործընթացի) իդեալական մոդելն է, որը ձեռք է բերվում վերջինիս (իրավական ռեժիմի) կազմում ընդգրկված իրավական միջոցների իրականացման օգնությամբ:

Իրավական ռեժիմների միասնական (համալիր) նպատակը՝ բխելով վերջինիս էությունից, հանդիսանում է հասարակական հարաբերությունների առանձին խմբերի օպտիմալ կարգավորումը, սուբյեկտների (իրավական միջոցների և եղանակների) կողմից սեփական շահերի բավարարմանն ուղղված բարենպաստ ռեժիմի ձևավորման համար:

5. Կարգավորման հատուկ կարգը որպես իրավական ռեժիմի հատկանիշ կայանում է իրավական եղանակների և միջոցների հատուկ համակցության մեջ. թույլատվություններ և արգելքներ, դրական պարտավորություններ և հանձնարարականներ, խթաններ, սահմանափակումներ և այլն: Հատկապես թույլատվությունների, արգելքների և դրական պարտավորությունների կամ առաջինների, կամ երկրորդների գերակայությամբ նման կոմբինացիան ստեղծում է կարգավորման հատուկ կարգը: Կախված նրանից, թե ինչպիսի իրավական միջոցներ են գերակայում իրավական ռեժիմներում, դրանք լինում են կամ իրավունքի սուբյեկտների համար առավելություններ ստեղծող, կամ նրանց սուբյեկտիվ իրավունքները և ազատությունները սահմանափակող:

6. Իրավական ռեժիմը կրում է համակարգված (համալիր) բնույթ, որն արտահայտվում է նրանում, որ իրավական ռեժիմը, որպես իրավական կարգավորման համակարգում գործիք, միաժամանակ հանդիսանում է նաև ամբողջականությամբ, նպատակաուղղվածությամբ, տրամաբանությամբ, համակցվածությամբ բնութագրվող ենթահամակարգերից բաղկացած համակարգային ձևավորում: Իրավական ռեժիմը՝ իրավական միջոցների կարգավորված համախումբ (համակարգ) է: Այս համակարգի շրջանակներում իրավական միջոցները համակցվում են խիստ որոշակի ձևով, սերտորեն փոխկապված են և գործում են համալիր, ստեղծում իրավական կարգավորման որոշակի մթնոլորտ՝ իրավունքի սուբյեկտի շահերի բավարարման համար բարենպաստության (անբարենպաստության) աստիճան:

7. Իրավական ռեժիմների համալիր բնույթը նշանակում է, որ իրավական միջոցների հատուկ համակցության վրա հենված կարգավորումը իրականացվում է լիարժեքորեն, իրավական ռեժիմների ազդեցությունը ընդգրկում է ժամանակային և տարածական սահմաններում վերցված համակարգերի ամբողջական համալիր (իրավունքի սուբյեկտների, իրավունքի օբյեկտների իրավական կարգավիճակներ, իրավաբանական

փաստեր և այլն): Իրավական ռեժիմն ըստ իր իրավաբանական բնույթի տիրապետում է բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են և բավարար դրա գործառնության համար (վարքագծային կանոններ, դրական և բացասական սանկցիաներ՝ ընդգրկելով պահանջների ռեժիմների խախտման համար իրավաբանական պատասխանատվությունը և այլն):

8. Իրավական ռեժիմի կառուցվածքում ընդգրկվում են տարբեր կազմության և մակարդակի իրավական միջոցներ (պարզ և համալիր) իրավական կարգավորման մեխանիզմի տարրեր (իրավական նորմեր, իրավունքի կիրառման ակտեր, հարաբերություններ, իրավաբանական փաստեր և այլն), իրավական ռեժիմի իրականացման երաշխիքներ (այդ թվում նաև իրավաբանական պատասխանատվություն պահանջների ռեժիմների խախտման համար), իրավական սկզբունքներ, իրավական կարգավորման նպատակներ և եղանակներ: Ենթադրվում է, որ իրավական ռեժիմի նման կառուցվածքը (կազմությունը) առավել օպտիմալ է, քանի որ դրանում հստակ ներկայացված են հետազոտվող կատեգորիայի բաղադրիչները (կոմպոնենտները), և այն լիարժեք համապատասխանում է վերջինիս բովանդակությանը:

9. Իրավական ռեժիմի սկզբունքները՝ դրանք ելակետային որոշիչ գաղափարներ, բազային դրույթներ են, որոնք ստեղծում են իրավական միջոցների կիրառության որոշակի կարգ՝ սուբյեկտների կողմից սեփական շահերի ձեռք բերման նպատակներով: Իրավական ռեժիմի սկզբունքների համակարգում ընդգրկված են իրավական ռեժիմի ընդհանուր սկզբունքները (հիմնական նախադրյալներ, որոնք սահմանում են իրավական ռեժիմների առավել էական գծերը, դրանց բովանդակությունը և առանձնահատկությունները, տարածվում են իրավունքի բոլոր ոլորտների վրա անկախ իրենց կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթից և առանձնահատկություններից) և իրավական ռեժիմի հատուկ սկզբունքներ (ճյուղեր, ճյուղային և ինստիտուցիոնալ):

10. Իրավական ռեժիմի երաշխիքներ են նորմատիվային ամրագրված պայմանները, միջոցները (այդ թվում նաև մեխանիզմները), որոնք կոչված են ապահովել իրավունքի

սուբյեկտի օրինական շահերի օպտիմալ բավարարումը, իրավունքների և ազատությունների իրականացումը թույլատրված իրավական ռեժիմի պայմաններում:

**Հետազոտության տեսական նշանակությունը** կայանում է իրավական ռեժիմների տեսության որպես հիմնարար և հեռանկարային գիտական ուղղություններից մեկի սահմանման և հիմնավորման մեջ: Հետազոտության արդյունքները կարող են որոշակիորեն խորացնել մեր գիտելիքները պետության և իրավունքի ընդհանուր տեսության, իրավունքի փիլիսոփայության, ինչպես նաև ճյուղային և կիրառական իրավաբանական գիտությունների ոլորտում:

**Հետազոտության գործնական նշանակությունը** պայմանավորված է դրա արդյունքների օգտագործումը հետազոտվող խնդրի հետագա գիտական մշակումներում, իրավաստեղծ և իրավակիրառ բարելավման, հայ հասարակությունում բարեփոխությունների և ձևափոխությունների մարտավարությունների մշակման և պետության իրավական քաղաքականության իրականացման գործընթացներում:

**Ատենախոսական աշխատանքի փորձաքննությունը.** Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ տեղի է ունեցել աշխատանքի քննարկումը և երաշխավորումը:

Աշխատանքի հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գրել հեղինակի հրատարակված հինգ մենագրություններում և երկու գիտական հոդվածներում:

**Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը.** Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է հիմնախնդրի հետազոտության նպատակով, խնդիրներով և մեթոդաբանությամբ: Դրան համապատասխան աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ինը ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

## Գլուխ 1

### Իրավական ռեժիմի հասկացությունը, էությունը և բնութագրական հատկանիշները

#### 1.1. Իրավական ռեժիմի էությունը և ընդհանուր բնութագիրը իրավունքի տեսության մեջ

<<Իրավական ռեժիմ>> եզրույթը ակտիվորեն կիրառվում է գիտական գրականության մեջ, օրենսդրությունում և պրակտիկայում: Տվյալ հասկացությունը շատ հարուստ է՝ ըստ բովանդակության, և կիրառվում է տարբեր իմաստներով ու ենթատեքստերով, սակայն ընդհանրականը այն է, որ այն պատկերում է իրավունքի գործառնական բնութագիրը՝ իրավական կանոնակարգման որոշակի մեթոդը, որն իրականանում է իրավական միջոցների համալիրում և որոնց միջոցով նրա նպատակները իրագործվում են:

Դիտարկվող իրավական հասկացությունը ենթարկվել է շատ թե քիչ խորը վերլուծության արդեն վաղուց, սակայն <<իրավական ռեժիմ>> կատեգորիայի մասին պարզորոշ պատկերացում այնպես էլ մինչև օրս չի մշակվել:<sup>1</sup>

Պայմանականորեն կարելի է առանձնացնել նման իրավիճակի առնվազն երեք պատճառներ:

Առաջին հերթին, իրավաբանական գրականության մեջ բացակայում է կարծիքների միասնություն՝ իրավական ռեժիմների ընդհանուր տեսական բնույթի վերաբերյալ:

Երկրորդ, տվյալ կատեգորիան համեմատաբար վերջերս սկսել է լայնորեն կիրառվել իրավունքի տարբեր բնագավառներում:

Եվ որպես հետևանք, երրորդ՝ <<իրավական ռեժիմ>> եզրույթը հարաբերականորեն ազատ և հաճախ չհիմնավորված կերպով կիրառվում է օրենսդիրների կողմից տարբեր նորմատիվ- իրավական ակտերում:

Արդյունքում, չնայած <<իրավական ռեժիմ>> հասկացության նշանակությունների բազմազանության, իրավաբանական գրականության մեջ այն դեռևս չի ստացել լիարժեք

<sup>1</sup> Տե՛ս **Пржиленский В.И.** Философия юридической науки. М., 2016, էջ 176-177:

լուսաբանում և հիմնականում կիրառվում է իրավունքի տարբեր բնագավառներում իրավական կարգավորման օբյեկտների բնութագրի հանդեպ:

Կարելի է հանդիպել իրավական ռեժիմի այսպիսի սահմանումներ իրավական կարգավորման օբյեկտների հանդեպ, օրինակ <<տեղեկատվության իրավական ռեժիմ>><sup>2</sup> և այլն:

Խնդիրը խորանում է նաև նրանով, որ անգամ իրավունքի ճյուղային հետազոտությունների շրջանակներում իրավական ռեժիմ հասկացությունը հաճախ կիրառվում է որպես շրջանառու, արդեն հայտնի և ճշգրտման կարիք չունեցող: Այսպիսի հետազոտություններում իրավական ռեժիմը հաճախ հիշում են միայն աշխատանքի անվան մեջ:<sup>3</sup>

<<Իրավական ռեժիմ>> կատեգորիան լայն տարածում է ստացել գործող ազգային օրենսդրության և Եվրասիական Միության օրենսդրությունում:<sup>4</sup>

Կան նաև այնպիսի դեպքեր, երբ «իրավական ռեժիմ» բառակապակցությունը հազվադեպ է հանդիպում նորմատիվ-իրավական ակտերում, բայց ճյուղային իրավական գիտությունը ու ուսումնական դասընթացներն ակտիվորեն կիրառում են տվյալ եզրույթը:

Օրինակներ կարող են ծառայել «Հողային իրավունքի» գիտությունն ու ուսումնական դասընթացը, որոնք ակտիվորեն կիրառում են այնպիսի հասկացություններ, ինչպես օրինակ «գյուղատնտեսական նշանակության հողերի իրավական ռեժիմը», «բնակավայրերի հողերի իրավական ռեժիմը», «հատուկ պաշտպանվող տարածքների ու օբյեկտների հողերի իրավական ռեժիմը» և այլն, այն դեպքում, երբ օրենսդիրը դրանք հաճախ է կիրառում: Սույն ատենախոսական հետազոտության տեսանկյունից այս դեպքում կարելի է խոսել ուսումնասիրվող կատեգորիայի հիմնավորված կիրառման մասին, քանի որ իրավական միջոցները, երաշխիքներն ու սկզբունքները հարաբերությունների տվյալ խմբի իրավական կանոնակարգման շրջանակներում, միավորվելով, ձևավորում են իրավական ռեժիմը:

<sup>2</sup> Տե՛ս **Терещенко Л.К.** Правовой режим информации: автореф. дис...д-ра юрид. наук. М., 2011:

<sup>3</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. 2-е изд., М. 2008, էջ 215-216: Актуальные проблемы теории государства и права. Отв. ред. **Р.В. Шагиева**, М. , 2011, էջ 214-215:

<sup>4</sup> Տե՛ս, օրինակ՝ Ռազմական դրության մասին ՀՀ օրենքը (Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999) Գիրք Բ, Երևան, 2000, էջ 136-137):

Այսպիսով, իրավական ռեժիմը բազմանշանակ, միջոյուղային ու միջդիսցիպլինար հասկացություն է, որը կիրառվում է գիտական գիտելիքի ու նորմատիվ իրավական ակտերի տարբեր բնագավառներում, որը ամբողջապես ներմուծվել է իրավաբանական գրականություն և հասարակական-քաղաքական բառապաշար, իրավունքի բնագավառում տարբեր իրավական վիճակների որոշակման համար:

Ինչպես իրավացիորեն նշում է Յու. Ա. Կուդրյավցևը՝ «ռեժիմ» հասկացության բազմանշանակությունը վկայում է միջդիսցիպլինարության մասին, այն մասին, որ այն կիրառվում է գիտական գիտելիքի տարբեր բնագավառներում: Հիմնականում այն կիրառվում է քաղաքական-իրավական հետազոտություններում, քանի որ թույլ է տալիս ավելի խորը ու լիարժեքորեն բացահայտել ժամանակակից հասարակության վիճակը, նրանում տեղի ունեցող փոփոխությունները»:<sup>5</sup>

Միաժամանակ իրավական ռեժիմ հասկացությունը համարվում է առավել չուսումնասիրված ու բարդ կատեգորիաներից մեկը իրավագիտության մեջ ներկայացնելով լայն դաշտ նրա ընդհանրության, բնույթի, նշանակության ու իրավական ռեժիմների բնութագրի մասին գիտական քննարկումների համար:

Այսպիսով, իրավական ռեժիմների նեղ հասկացումը ու նորմատիվ-իրավական ակտերում և գիտական հետազոտություններում այս եզրույթների կիրառումը հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է իրավական ռեժիմների, որպես հիմնարար ընդհանուր տեսական ուղղության, ուսումնասիրության անհրաժեշտություն:

Կարելի է սահմանել ռեժիմ հասկացության իմաստային նշանակության հետևյալ խմբերը՝

ա) պետական կառուցվածք, իշխանության իրականացման միջոցների, մեթոդների, եղանակների միասնականություն, որը բնորոշում է երկրում քաղաքական վիճակը,

բ) կյանքի՝ աշխատանքի, հանգստի և այլնի մասին հաստատված կանոնակարգ,

---

<sup>5</sup> **Кудрявцев Ю.А.** Демократия как разновидность политического режима (теоретико-правовой аспект): автореф. дис. ... канд. юрид. наук. СПб., 2002, с. 9.

գ) կանոնների, միջոցառումների համակարգ, որոնք անհրաժեշտ են այս կամ այն նպատակի համար, արտադրությունում անվտանգության ռեժիմ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ռեժիմների հիմնական նշանակությունը կայանում է որոշակի միջոցների, մեթոդների շնորհիվ որոշակի սոցիալական կամ տեխնիկական կարգի անվտանգության ապահովման մեջ:

Ռեժիմի ընդհանուր բնութագրումից անդրադառնանք իրավական ռեժիմների հասկացությանը:

Անդրադառնալով հարցի պատմությանը, կարելի է նշել, որ այս հասկացության հետազոտության սկիզբը դրվել է դեռևս նախորդ դարի կեսերին Ն. Գ. Ալեքսանդրովի, Ս.Գ. Բերեզովսկու, Ի.Ս. Սամոշենկոյի աշխատանքներում:

Սակայն 20-րդ դարի 50-ական թթ. խորհրդային իրավաբանական գրականության մեջ «ռեժիմ» հասկացությունը կիրառվում էր բացառապես օրինականության բնութագրի համար: Այսպես, Ն.Գ. Ալեքսանդրովը ու Ս. Գ. Բերեզովսկայան սահմանել են խորհրդային օրինականությունը ոչ թե որպես օրենքների կատարում, այլ որպես հատուկ ռեժիմ, որը բնորոշվում է օրենքներին պարտադիր հետևելով<sup>6</sup>, որը արդյունքում առաջ բերեց խորհրդային օրինականության ու իրավական ռեժիմի փաստացի նույնացմանը:<sup>7</sup>

Տվյալ կարծիքը ենթարկվեց քննադատության Ի. Ս. Սամոշենկոյի աշխատանքներում, որի տեսանկյունը հետևյալում էր. «իրավական ռեժիմը կանոնակարգ է. որպես իրավական ռեժիմ՝ օրինականության սահմանումը նշանակում է տերմինաբանորեն նմանեցնել այն իրավակարգի հետ»:<sup>8</sup>

---

<sup>6</sup> Տե՛ս **Александров Н.Г.** О роли советского социалистического государства и права развития советского общества: учеб. пособие по теории государства и права. Вып. 1. М., 1953, էջ 21; **Березовская С.Г.** Прокурорский надзор в советском государственном управлении. М.: Госюриздат, 1954, էջ 9:

<sup>7</sup> Տե՛ս **Александров Н.Г.** Законность и правоотношения в советском обществе. М.: Госюриздат, 1955, էջ 68:

<sup>8</sup> Տե՛ս **Самощенко И.С.** Охрана режима законности советским государством. М.: Госюриздат, 1966, էջ 13:

Միայն 20-րդ դարի 60-ական թթ. աշխատանքներում, որոնք նվիրված են իրավակարգավորման թեմային, զարգանում է նաև «իրավական ռեժիմ» հասկացությունը իրավական կանոնակարգման տիպերի համադրման ենթատեքստում:<sup>9</sup>

Իր ժամանակակից նշանակության մեջ իրավական ռեժիմների խնդրի ուսումնասիրումը իրավաբանական գրականության մեջ ժամանակի մեջ համընկել է իրավական ռեժիմների բարեփոխումների փուլի հետ 20-րդ դարի 90-ական թթ. սահմանին, որի հիմքում հայտարարվեց անցում դեպի իրավակարգավորման նոր որակի և մեթոդաբանության:<sup>10</sup>

Սկզբում խոսքը գնում էր հատուկ մեխանիզմների որոնման մասին, որոնք օրենսդրական կանոնակարգման շրջանակներում ունակ են ապահովել խնդիրների լուծումը, կայունացնել սոցիալ-տնտեսական գործընթացները, սահմանափակել ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ բացասական գործոնների ազդեցությունը:

Հենց այս ժամանակ որպես հատուկ կազմակերպված մեխանիզմ, որն ունակ է իր առջև խնդիրները ինքնուրույն լուծել ու տարբերվում է կայունությամբ, հարաշարժությամբ, սոցիալական իրավիճակում շեղումներին ժամանակին արձագանքելու հնարավորությամբ, և կանխարգելել իրավակարգավորման մեջ թերությունները, առաջարկվեց իրավական ռեժիմը:

Իրավական ռեժիմների հետ կապված՝ այժմ կան մի քանի մոտեցումներ: Համաձայն նրանցից առաջինի՝ իրավական ռեժիմը սահմանվում է որպես որոշակի օբյեկտի սոցիալական ռեժիմ, որն ամրագրված է իրավական նորմերով ու ապահովված է իրավաբանական միջոցների միասնականությամբ:<sup>11</sup>

Վերոնշյալ մոտեցման թերություններն են հանդիսանում ռեժիմի կիրառումը որպես սահմանող հասկացություն և հենց սահմանման մեջ որոշակի անպարզությունը: Սակայն տվյալ սահմանման մեջ պարունակվում են սոցիալական-իրավական ռեժիմի մասին դատողություններ և իրավական ռեժիմի կառուցվածքային տարրեր. իրավունքի նորմերն

<sup>9</sup> Տե՛ս, օրինակ, **Алексеев С.С.** Механизм правового регулирования в социалистическом государстве. М., 1966; **Иоффе О.С.** Юридические нормы и человеческие поступки // Актуальные проблемы советского гражданского права. М., 1964, էջ 16-26:

<sup>10</sup> Տե՛ս **Осипов М.Ю.** Системы в праве и правовые процессы. Монография. М., 2015, էջ 105-106:

<sup>11</sup> Տե՛ս **Матвеева М.А., Шагиева Р.В.** Правовое регулирование и правотворчество в правовой системе общества // Государство и право, № 12, декабрь, 2014, էջ 5-13:

ու այլ «իրավաբանական միջոցները» թույլ են տալիս միանգամից սահմանազատել իրավական ռեժիմը այլ ընդհանուր տեսական կատեգորիաներից, որոնք բխում են իրավական նորմերի միասնությունից: Այդպիսով իրավական ռեժիմը հանդես է գալիս հատուկ իրավաբանական կատեգորիայով, իրավական կարգավորման հատուկ միջոցով, որն իր մեջ միավորում է համալիր իրավական գործիքավորումը:

Իրավական ռեժիմի վերը նշված սահմանումը, որպես իրավական միջոցների միասնականություն, արդարացի է նաև իրավական կանոնակարգման ռեժիմի համար, այս նշելով՝ Ս.Ս. Ալեքսեևը հասկանում է «կարգավորիչ ազդեցության հատուկ համակարգ, որը բնութագրվում է կանոնակարգման հատուկ միջոցներով իրավունքների ու պարտականությունների բովանդակության առաջացման ու զարգացման հատուկ կարգով, նրանց իրականացմամբ, սանկցիաների առանձնահատկությամբ, իրականացման միջոցներով, միասնական սկզբունքների, ընդհանուր դրույթների ազդեցությամբ»:<sup>12</sup>

Այս դեպքում նշմարվում է խնդրի առավել խորը վերլուծություն, որն արտացոլվում է նախ և առաջ ոչ միայն իրավական ռեժիմի հանդեպ, այլ նաև նրա բնույթի առանձնահատկությունների հանդեպ. «յուրաքանչյուր իրավական ռեժիմ հանդիսանում է ուղղակի ռեժիմ և նրա հասկացությունը իր մեջ կրում է այս բառի հիմնական երանգները՝ իրավաբանական կանոնակարգման կոշտության աստիճանը, հայտնի սահմանափակումների ու արտոնությունների առկայությունը, սուբյեկտների ակտիվության թույլատրելի մակարդակը, նրանց իրավական ինքնուրույնության սահմանները»:<sup>13</sup>

Ս.Ս. Ալեքսեևը առաջարկում է իրավական ռեժիմների ևս մեկ բնութագիր, որոնք այլ գիտնականների կողմից ընկալվում են որպես ավանդույթ, որի հիմքը կազմում է իրավական ռեժիմի ընկալումը որպես «կանոնակարգման կարգ, որն արտահայտված է իրավական միջոցների համալիրում, որոնք բնորոշում են իրար հետ փոխգործակցող թույլատրությունների, արգելքների, ինչպես նաև դրական պարտականությունների հատուկ համատեղում և ստեղծում են կանոնակարգման հատուկ ուղղվածություն»:<sup>14</sup>

---

<sup>12</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. 2-е изд., перераб. и доп. М. 2008, էջ 67:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 268:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 278:

Տվյալ սահմանման դրական կողմերից է համապատասխան սահմանող «կարգ» եզրույթի կիրառումը, ինչպես նաև եզրույթի բնույթի խորացումը. Նրանում շեշտադրված է համատեղումը իմպերատիվ ու դիսպոզիտիվ մեթոդների, որպես իրավունքի սուբյեկտների վրա ազդեցության հիմնական միջոցների ռեժիմում:

Միաժամանակ այսպիսի մոտեցման դեպքում գիտնականի, տեսադաշտից դուրս է գալիս իրավական ռեժիմի այնպիսի կարևոր նյութական հատկանիշ, ինչպիսին է նրա իրավունքի սուբյեկտների համար բարենպաստության աստիճանը: Ալեքսեևը ընդունում է, որ «յուրաքանչյուր իրավական ռեժիմ ինքնին ռեժիմ է. Պետք է ուշադրություն դարձնել այս բառի հիմնական իմաստային երանգների վրա, այդ թվում նաև այն, որ իրավական ռեժիմը արտահայտում է իրավաբանական կարգավորման կոշտության աստիճանը, հայտնի սահմանափակումների ու արտոնությունների առկայությունը...»:<sup>15</sup>

Իրավական ռեժիմի հասկացության սահմանման երկրորդ մոտեցման իրավական ռեժիմը իրավական կարգավորման միջոցների մեթոդների, եղանակների որակապես ամբողջական հատուկ համակարգ է, որն արտահայտվում է նորմատիվ-իրավական հարաբերությունների ու անհատական նախատեսումների, իրավահարաբերությունների առաջացման առանձնահատկություններում, իրավական հետևանքներում, իրավունքի պահանջների իրականացման ապահովման միջոցներում: Այն կանոնակարգման այնպիսի կարգ է, որն արտացոլված է իրավական միջոցների համալիրում, որոնք ստեղծում են կարգավորման հատուկ ուղղվածություն և բնորոշում են իրար հետ փոխգործակցող թույլատվությունների, արգելքների, ինչպես նաև դրական պարտականությունների միջև հատուկ համադրություն:<sup>16</sup>

Տվյալ սահմանումը հաշվառում է իրավական ռեժիմի հիմնական գծերը, կողմնորոշված է ռեժիմային պահանջների կազմակերպչական-իրավական ու կազմակերպչական-տնտեսական ապահովմանը: Ուշադրություն դարձնելով հիմնական սահմանման ընդարձակությանը՝ պետք է նշել, որ խնդրի տարբեր կողմերի լայն վերլուծության դեպքում հեղինակների կարծիքները որոշակի շտկման կարիք ունեն:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 278-279:

<sup>16</sup> Актуальные проблемы теории государства и права. Отв. ред. **М.В. Баранова, О.Б. Купцова**. М., 2012. с. 52-53

Իրավաբանական գրականության մեջ իրավական ռեժիմը հասկացվում է երկու նշանակությամբ. լայն իմաստով՝ որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գործունեության, գործողությունների կամ վարքագծի օրենսդրական կարգավորման հատուկ կարգ է հասարակական հարաբերությունների տարբեր բնագավառներում կամ որոշակի օբյեկտներում, որոնք իրենց մեջ ներառում են թույլատվությունների, դրդապատճառների, նորմատիվների, երաշխիքների, արգելքների, սահմանափակումների, պարտականությունների համակարգի փաստացի իրականացման ապահովման մեխանիզմի հաստատում, ինչպես նաև նրանց իրավասու կիրառում հարկադրանքի ու մեղավորների պատասխանատվության ենթարկելու միջոցներ. նեղ իմաստով՝ այն իրավունքի նորմերում ամրագրված իրավաբանական գործիքավորման հատուկ համադրություն է, որը բնորոշվում է որոշակի պայմանների, հասարակական հարաբերությունների կոնկրետությամբ և հասարակության ու պետության համար օգտակար նպատակին հետևելով:<sup>17</sup>

Տվյալ սահմանումը զուրկ չէ տրամաբանական հակասություններից (օրինակ՝ հոմանիշ “գործունեություն, գործողություններ, վարքագիծ” հասկացությունների կիրառումը ստորակետի միջոցով), անճշտություններից (սահմանման մեջ միայն ֆիզիկական ու իրավաբանական անձանց հիշեցումը իրավական ռեժիմների ազդեցությունից հեռացնում է այն սուբյեկտներին, որոնք չեն հանդիսանում իրավաբանական անձ՝ որոշ հասարակական միավորումներ, մասնաճյուղեր և իրավաբանական անձանց ներկայացուցչություններ և այլն), տարընթերցումներից (մեկ շարքում այնպիսի հասկացությունների կիրառումը, ինչպիսիք են “թույլատվություններ, դրդապատճառներ, նորմատիվներ, երաշխիքներ, արգելքներ, սահմանափակումներ, պարտականություններ”, ուր նորմատիվների հասկացությունը իր մեջ պարունակում է բոլոր մնացած հասկացությունները) և այլն:

Իրավաբանական գրականության մեջ իրավական ռեժիմի սահմանման ևս մեկ տարբերակ որն առաջարկում է Վ.Ա. Գորլենկոն, ըստ որի իրավական ռեժիմը. “պետության ինքնուրույն իրավական միջոց, որը կիրառվում է քաղաքացիների

---

<sup>17</sup> Տե՛ս **Беляева Г.С.** Правовой режим: общетеоретические исследование. дис. ...-д-ра юрид. наук. М., 2013:

անվտանգության ապահովման ու սահմանադրական կարգի պահպանման համար՝ որպես իրավունքի սուբյեկտների գործունեության մասնագիտացված կարգ, որը նախատեսված է հատուկ խնդիրների լուծման կամ հատուկ հանգամանքներում հանրային-իշխանության սուբյեկտների գործարկման համար”:<sup>18</sup>

Տվյալ դեպքում հեղինակը, բացահայտելով իրավական ռեժիմի հասկացությունը, ճշտությամբ մատնանշում է նրա գործիքային բնույթը, նպատակներն ու խնդիրները: Միաժամանակ, չնայած նա ուղղակիորեն նշում է, որ տալիս է համաիրավական կատեգորիայի սահմանումը, նրանում շեշտադրումը տեղափոխված է դեպի հանրային-իրավական բնագավառ:

Երրորդ ուղղության շրջանակներում որպես իրավական ռեժիմ հասկացվում է իրավական միջոցների համակարգերի հասարակական հարաբերությունների վրա կանոնավորող ազդեցության արդյունքը, որոնք բնորոշ են իրավունքի կոնկրետ բնագավառին և ապահովում են հասարակական հարաբերությունների բնականոն գործառնությանը:

Նման կարծիք է հայտնում Վ.Ա. Սոպունը, որը հաստատում է, որ իրավագիտության մեջ ձևավորվել են հետևյալ հասկացության երկու հիմնական մոտեցումներ: Ըստ նրա՝ գիտնականների առաջին խումբը ենթադրում է, որ իրավական ռեժիմը պետական կամասահմանմա արդյունք է և միաժամանակ սոցիալական կարգ, որը ձևավորվել է օբյեկտիվորեն գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների հետևանքով: Այլոք համարում են, որ իրավական ռեժիմը կարգ է, որը հատուկ սահմանված է պետության կողմից իրավաբանական միջոցներով ու մեթոդներով սոցիալական հարաբերությունների սուբյեկտների վարքագծի վրա կարգավորող ազդեցության նպատակով:<sup>19</sup>

Իրավական ռեժիմը նաև իրավական կարգ է, որը նպաստում է կոնկրետ նպատակային կարգավորումների ձեռքբերմանը, որը իրականացվում է իրավաբանական միջոցների ու մեթոդների ձեռքբերման միջոցով, որոնք իրենց հերթին ուղղված են

<sup>18</sup> Տե՛ս **Горленко В.А.** Режим правового регулирования (теоретико-прикладной аспект). Дис. ...канд. юрид. наук. СПб., 2002, էջ 52-53:

<sup>19</sup> Տե՛ս **Сапун В.А.** Теория правовых средств и механизм реализация права. Дис. ...док. юрид. наук. Н.Новгород, 2002, էջ 81-82:

վարքագծի կանոնների իրականացմանը, ինչպես նաև իրավական պատասխանատվության միջոցների իրականացմանը:

Այս առումով կարելի է համաձայնվել Վ.Ա. Գոռլենկոյի հետ, ըստ որի իրավական ռեժիմը հանդես է գալիս որպես նորաստեղծ գործունեության արդյունք, բայց կարելի է այն անվանել արդեն առկա կապերի ամրապնդում:<sup>20</sup>

Հանդիսանալով իրավունքի նորմատիվության իրականացում՝ իրավական ռեժիմը ներդրվում է իրավունքի հիմնական սոցիալական նշանակության ապահովման համար հասարակական հարաբերությունների կարգավորում: Իրավունքի կարգավորիչ գործառույթը իրականացվում է իր տարատեսակների՝ կարգավորիչ դինամիկ ու կարգավորիչ ստատիկ, միջոցով: Առաջինի հիմքում իրավական նորմերն են, որոնք ուղղված են իրավաբանական միջոցներով այս կամ այն սոցիալական գործընթացների սպասարկմանը, երկրորդը իրականացնում է իրավունքի սոցիալական նշանակության այն հատվածը, որը կայանում է հասարակությունում իրավունքի միջոցներով որոշակի կարգավիճակների ամրապնդման ու սոցիալական-իրավական արժեքների կայունության պահպանման մեջ:<sup>21</sup>

Հետևաբար, իրավական ռեժիմը իր մեջ պետք է ինտեգրի նվազագույնը երկու ենթահամակարգեր կարգավորիչ ազդեցության համակարգը, որն իրավաբանական միջոցների համալիր է, որոնք ենթակա են իրավական բնագավառի շրջանակներում իրավական կարգավորման համապատասխան մեթոդով, սա դինամիկ բնագավառն է, կարգավորող ազդեցության արդյունքը հանդիսանում է հասարակական հարաբերությունների կարգավորվածության ձեռքբերված մակարդակը, որն արտացոլում է իրավունքի սուբյեկտների կամ օբյեկտների դրության սահմանման մեջ. սա էլ ստատիկ բնագավառն է:

Իրավական ռեժիմի յուրահատուկ համադրված սահմանով, որը մշակվել է ավելի վաղ դիտարկված տեսանկյունների դրական ու բացասական կողմերի հաշվառմամբ, կարելի է համարել Մատուզովի ու Մալկոյի դիրքորոշումը, որն ուղղված է իրավունքի ֆունկցիոնալ

<sup>20</sup> Ст'ю Горленко В.А. Режим правового регулирования (теоретико-прикладной аспект). автореф. дис. ...канд. юрид. наук. СПб., 2002, էջ 21-22:

<sup>21</sup> Ст'ю Оксамытний В.В. Общая теория государства и права. М., 2011, էջ 368-369:

բնութագրին. «Իրավական ռեժիմը կարգավորման հատուկ կարգ է, որն արտահայտվում է իրավաբանական միջոցների հատուկ համադրման մեջ և ստեղծում է ցանկալի սոցիալական իրավիճակում բարեհարմարության կամ անբարեհարմարության կոնկրետ աստիճան իրավունքի սուբյեկտների հետաքրքրությունների բավարարման համար»<sup>22</sup>

Իրավական ռեժիմի նմանատիպ սահմանում է տալիս Օ.Ս. Ռոդիոնովան. «Իրավական ռեժիմը օրենսդրությամբ սահմանված կարգավորման հատուկ կարգ է, որը ներկայացված է իրավական միջոցների հատուկ համալիրով, որը դրդապատճառավորող ու սահմանափակող տարրերի օպտիմալ համադրման միջոցով ստեղծում է բարեհարմարության կամ անբարեհարմարության կոնկրետ աստիճան իրավունքի սուբյեկտների կողմից իրենց շահերի իրականացման նպատակով»<sup>23</sup>

Իրավական ռեժիմների նշված սահմանումներում արդեն կան նրանց հիմնական բնութագրային բնորոշիչները ու առանձնացվում են հիմնական նախանշանները. 1) նրանք սահմանվում են օրենսդրությամբ ու ապահովվում են պետության կողմից, 2) ունեն հատուկ միջոցով հասարակական հարաբերությունների կարգավորման հպատակ՝ ժամանակային կամ տարածական սահմաններում առանձնացնելով իրավունքի այս կամ այն սուբյեկտները կամ օբյեկտները, 3) իրենցից ներկայացնում են իրավական կարգավորման որոշակի կարգ, որը կազմված է իրավաբանական միջոցների միասնականությունից ու բնութագրվում է նրանց որոշակի սահմանմամբ. 4) ստեղծում են բարեհարմարության կամ անբարեհարմարության կոնկրետ աստիճան՝ սուբյեկտների ու միավորումների հետաքրքրությունների բավարարման համար:

Մեծ կարևորություն է ստանում իրավական ռեժիմների այնպիսի բնութագիրը, ինչպիսին է իրավունքի սուբյեկտների բավարարման բարեհարմարության կամ անբարեհարմարության աստիճանը, այսպես կոչված, իրավական կարգավորման տեղեկատվական-հոգեբանական բնագավառը, որը բնութագրվում է իրավական շահերի ու սահմանափակումների հստակ համադրմամբ:

<sup>22</sup> Տե՛ս **Матузов Н.И., Малько А.В.** Правовые режимы: понятие и виды // Право и политика: современные проблемы соотношения и развития. Воронеж, 1996, էջ 21-22:

<sup>23</sup> Տե՛ս **Родионов О.С.** Механизм установления правовых режимов российских законодательством: дис. ...канд. юрид. Наук. Саратов, 2001, էջ 38:

Համաձայն համընդհանուր ընդունված մոտեցման՝ իրավական ռեժիմի հատուկ տրամադրվածությունը կախված է իրավական կարգավորման տիպից՝ թույլատվական կամ հնարավորության առկայությամբ:

Ինչ վերաբերում է շահերի ու սահմանափակումների բառակապակցությանը, որպես իրավական կարգավորման միջոցների ռեժիմային կարգավորման շրջանակներում սահմանողների, ապա այն լիովին արդարացված է, բայց հենց իրավունքի գործողության տեղեկատվական-հոգեբանական տեսության շրջանակներում:<sup>24</sup>

Այս դեպքում շահագրգռվածությունը դիտվում է ոչ միայն ուժեղ զարթնացնող պահ, ներքին կամ արտաքին գործոն, որն առաջացնում է հակազդում, այլ կոնկրետ իրավական ռեժիմում սահմանող իրավական կարգավորման միջոց<sup>25</sup>, որը հիմնվում է իրավական կարգավորման թույլատվական տիպի վրա, որն արթնացնում է իրավունքի սուբյեկտին դրական վարքագծի հանդեպ և նրա համար ստեղծում է բարեհարմարության ռեժիմ: Սահմանափակումը իրավական կարգավորման միջոց է, որը հիմնված է իրավական կարգավորման ու դրական պարտականությունների թույլատվական տիպի վրա, որն իր հերթին սահմանափակում է սուբյեկտների հակաիրավական վարքագիծը և ստեղծում է պայմաններ այլ անձանց իրավունքների ու օրինական հետաքրքրությունների իրականացման համար:

Այս բնագավառը առանձնանում է նաև այլ, տվյալ խնդրի ավելի վաղ հետազոտություններում: Այսպես, Ս.Ս. Ալեքսեևը նշում է, որ իրավական ռեժիմը արտահայտում է հայտնի սահմանափակումների ու արտոնությունների առկայությունը, սուբյեկտների ակտիվության թույլատրելի սահմանը, նրանց իրավական ինքնուրույնության սահմանները և դրա հետ մեկտեղ ընդունում է առաջնային իմաստը տարբեր իրավական առավելությունների ու սահմանափակումների իրավական ռեժիմների լուսաբանման համար:<sup>26</sup>

Իրավաբանական գրականության մեջ իրավական ռեժիմը սահմանվում է նաև որպես «տեղեկատվական- հոգեբանական մոտեցման տեսանկյունից կարելի է դիտարկել

<sup>24</sup> Տե՛ս **Терещенко Л.К.** Правовой режим информации: автореф. дис. ...докт. юрид. наук. М., 2011, էջ 31-32:

<sup>25</sup> Տե՛ս **Сапун В.А.** Теория правовых средств и механизм реализация права. Дис. ...док-ра юрид. наук. Н.Новгород, 2002, էջ 145-146:

<sup>26</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. М. 2008, էջ 267-268:

որպես իրավական ազդեցության յուրահատուկ տեսակ, որն արտահայտված է իրավական դրդապատճառների ու իրավական սահմանափակումների որոշակի համալիրում>>:<sup>27</sup>

Այսպիսով, վերլուծելով վերոշարադրյալը, կարելի է ձևակերպել ռեժիմի հետևյալ սահմանումը. իրավական ռեժիմը նորմատիվ իրավական ակտով սահմանված և պետության կողմից ապահովվող հասարակական հարաբերությունների կոնկրետ ոլորտների իրավական կարգավորման եղանակ(կարգ) է, որը ժամանակի ու տարածության սահմաններում ներկայանում է իրավական միջոցների համալիրով, որոնք ստեղծում են բարեհարմարության կամ անբարեհարմարության կոնկրետ աստիճան՝ իրավունքի առանձին սուբյեկտների օրինական շահերի բավարարման համար և նպատակ ունի պետությունում ու հասարակությունում պահպանել իրավակարգը և իրավաօրինակությունը:

---

<sup>27</sup> Տե՛ս **Терещенко Л.К.** Правовой режим информации: автореф. дис. ...докт. юрид. наук. М., 2011, էջ 31-32:

## 1.2. Իրավական ռեժիմի հասկացությունը և հատկանիշները

Հիմնական տեսանկյունների արդյունքում, որոնք վերլուծվել են նախկին ենթագլխում, կարելի է արձանագրել, որ իրավական ռեժիմը որոշակի համակարգ է, որոշակի երևույթների միասնականություն, որոնք կոչված են ապահովելու իրավական կարգավորման նպատակների իրականացումը:

Պետք է նշել, որ այս հասկացության հետագա ուսումնասիրությունը բարդանում է կապված, այսպես կոչված, հիմնական սահմանող բառի բացակայության պատճառով, որի միջոցով կարելի է բացատրել իրավական ռեժիմ հասկացությունը:<sup>28</sup>

Դրա համար էլ սույն հետազոտության հեղինակը առաջարկում է գործառնական մոտեցում, այսինքն “կարգ” եզրույթի կիրառումը, քանի որ իրավական ռեժիմի ընկալումը որպես իրավունքի նորմերի կամ իրավական ինստիտուտների միասնականություն, միավորում է նրա բովանդակությունը, դարձնում այն ստատիկ երևույթ՝ նույնականացնելով իրավական նորմերի քիչ թե շատ նշանակալից խմբով, որոնք ամրապնդված են նորմատիվ իրավական ակտում:

Հակառակը մեր կարծիքով, որպես եղանակ սահմանող կատեգորիայի կիրառման դեպքում իրավական ռեժիմը դառնում է դինամիկ կատեգորիա, որում կարելի է առանձնացնել ինչպես նրա կառուցվածքային տարրերը, այնպես էլ նրա իրականացման փուլերը: Միաժամանակ պետք է ի նկատի ունենալ, որ խոսքը գնում է իրավական կարգավորման հատուկ եղանակի մասին, քանի որ այն գործողության մեջ է դրվում ըստ յուրահատուկ դրդապատճառների, սոցիալական իրավիճակի յուրատիպության հաշվառմամբ, անընդունելի է նրա նույն վիճակում լինելը այլ բնագավառներում:

Արդյունքում կարելի է ստանալ առաջնային հիմքը ավելի ճիշտ սահմանման համար, իրավական ռեժիմը իրավական կարգավորման հատուկ կարգ, որը ծառայում է իրավական կարգավորման ընդհանուր նպատակների անարգել իրականացման համար: Իրավական ռեժիմի սահմանման ժամանակ ևս մեկ կարևոր պահ է նրա սահմանազատումը հարակից ընդհանուր տեսական կատեգորիաներից, որոնք պետք է ենթարկել վերլուծության:

<sup>28</sup> См. у Яковлев А.М. Социальная структура общества и права. М., 2015, էջ 24-25:

Իրավական դրությունը (վիճակը) իրենից ներկայացնում է սոցիալական վիճակի կամ դրության տարատեսակ, սուբյեկտների, օբյեկտների կամ հասարակական հարաբերությունների իրավաբանական կեցության միջոց ժամանակի որոշակի պահին ու որոշակի տարածության մեջ, որպես կանոն, օրենքով նախատեսված կարգով ամրագրված ու հաստատված:

Ըստ Ն.Ի. Մատուզովի՝ իրավական դրության կատեգորիան մեթոդաբանորեն արդյունավետ է տարբեր քաղաքական–իրավաբանական երևույթների խմբի վերլուծության ժամանակ: Ավելի նպատակահարմար է նշված կատեգորիայի հետազոտումը՝ որպես մեթոդաբանական գործիքի, իրավական գիտակցության, իրավական մշակույթի, օրինականության, իրավակարգի, իրավաբանական պատասխանատվության վերլուծության ժամանակ: Գիտական ճանաչողությունը իրավաբանության ոլորտում սովորաբար սկսվում է վիճակների տարանջատումից ու մեկնաբանությունից, որոնցում գտնվում է, կարող է գտնվել կամ պետք է գտնվի այս կամ այն իրավական օբյեկտը:<sup>29</sup>

Իրավական ռեժիմը հանդիսանում է կատեգորիա, որը բավականին սերտորեն կապված է իրավական վիճակի հետ: Եվ եթե վերջինս կիրառվում է սուբյեկտների, օբյեկտների կամ հասարակական հարաբերությունների իրավական վիճակի բնութագրի հետ, ապա իրավական ռեժիմը ավելի համընդհանուր կատեգորիա է, քանի որ ակտիվորեն կիրառվում է իրավական երևույթների մեծ շրջանակի հանդեպ:

Եթե նորից անդրադառնանք ‘ռեժիմ’ հասկացության ստուգաբանությանը, ապա նրա սահմանման մեջ կարելի է առանձնացնել երկու բնագավառներ. ռեժիմը որպես որոշակի օբյեկտի գոյության միջոց (իրականում առկա այս կամ այն օբյեկտի որոշակի չափումների միասնականություն) և որպես գոյության տվյալ միջոցին հասնելու ուղի (կանոնների, միջոցների ու մեթոդների միասնականություն, որոնք ուղղված են օբյեկտի տվյալ չափումների ձեռքբերմանը):

Հետևաբար իր նյութական նշանակության առումով իրավական ռեժիմ հասկացությունը կարող է նույնական համարվել իրավական վիճակ հասկացությանը և

<sup>29</sup> Տե՛ս **Матузов Н.И.** Правовая система и личность. Саратов, 1986, էջ 17-19:

հասկացվել որպես որոշակի օբյեկտի գոյության միջոց, որն արտահայտվում է նրա բնութագրերի տեսքով ժամանակի որոշակի պահին և որոշակի տարածության մեջ:

Ինչպես արդեն նշվեց իրավական ռեժիմի սահմանումը անհրաժեշտ է որոշակի սոցիալական արդյունքի առաջացման համար, որին ձգտում է օրենսդիրը առավել օպտիմալ միջոցների ու եղանակների ընտրության ուղիով որպես նրա ձեռքբերման նպատակ: Որպես կարգավորման այսպիսի նպատակ հաճախ հանդես են գալիս որոշակի իրավական վիճակի զարգացումը, ամրապնդումը, պաշտպանությունը և դադարեցումը:

Այսպիսով, եթե իրավական ռեժիմ ասելով հասկանում ենք իրավական կարգավորման եղանակ, ապա իրավական վիճակը այն նպատակն ու արդյունքն է, որին ձգտում է օրենսդիրը՝ սահմանելով այս կամ այն իրավական ռեժիմը:

Դրանով իրավական ռեժիմը իրավական վիճակի շրջանակներում ստեղծում է սուբյեկտների՝ որպես սուբյեկտիվ իրավունքների ու իրավաբանական պարտականությունների օպտիմալ գործարկման ու գոյության կրողների, ու օբյեկտների՝ որպես իրավաբանական նշանակություն ունեցող որոշակի որակների կրողների, համար պայմաններ: Իրավական ռեժիմը սահմանում է իրավական վիճակի կարգավորման եղանակը, այսինքն այն սահմանվում է օրենսդրի կողմից և իրականանում դեպի իրավական վիճակ անցման միջոցով:

Իրավական վիճակը կրում է կայունացնող բնույթ, հանդիսանում է ժամանակի մեջ ընթացող երևույթ (օրինակ՝ ամուսնություն, փոխադարձ իրավունքներ և պարտականություններ, քաղաքացիություն և այլն):

Իրավական վիճակի բովանդակության ու դրսևորման բնույթն ու առաձևահատկությունները անմիջական ազդեցություն են ունենում նրանց կարգավորման միջոցների ընտրության վրա:<sup>30</sup>

Այն դեպքում երբ իրավական վիճակը դրական ազդեցություն է ունենում հասարակական հարաբերությունների ու նրանց մասնակցիների վրա՝ որպես վերջինիս կրողների, օրենսդիրը հիմնավորում է նրա գոյությունն ու զարգացումը:

---

<sup>30</sup> Տե՛ս **Исаев И.А.** Нормативность и авторитарность. Пересечения идей. М., 2014, էջ 199-200:

Իրավական վիճակի բովանդակությունը ազդեցություն կունենա իրավական կարգավորման միջոցների, մեթոդների, իրավաբանական գործիքավորման ընտրության վրա իրավական ռեժիմների շրջանակներում:

Եթե իրավական վիճակը ձևավորվում է մասնավոր իրավունքի շրջանակներում, ապա կարգավորումը կիրականանա ըստ ընդհանուր թույլատրելի տիպի, այսինքն իրավական վիճակի առաջացման, փոփոխության կամ դադարեցման ընդհանուր կարգը տեղի կունենա նրա կրողի կամքով:

Եթե իրավական վիճակը իրականանում է հանրային իրավունքի բնագավառում, ապա առաջնահերթ նշանակություն ունի ոչ թե իրավական վիճակի կրողների կամքը, այլ հասարակության ու պետության օրինական շահերը:

Արդյունքում, կարելի է եզրակացնել, որ իրավական ռեժիմ ու իրավական վիճակ հասկացությունների սահմանազատումը կարելի է անցկացնել հետևյալ հիմունքներով՝

- իրավական ռեժիմը իրավական կարգավորման եղանակ է, որն իր մեջ ամփոփում է իրավական միջոցների համալիր: Իրավական վիճակը սուբյեկտների, օբյեկտների ու հասարակական հարաբերությունների իրավական արտացոլման միջոց է,

- իրավական ռեժիմը մարմնավորում է իրավական կարգավորման կարգը (եղանակը), իսկ իրավական վիճակը՝ նրա նպատակն ու արդյունքը:

Այսպիսով, իրավական վիճակ ու իրավական ռեժիմ հասկացությունների հարաբերակցությունը արտահայտվում է բանաձևով. իրավական ռեժիմը որոշակի կարգավորման եղանակ է:

**Իրավական ռեժիմ և կառավարում, իրավական կարգ:** Համեմատելով իրավական ռեժիմ, կառավարում հասկացությունները կարելի է եզրակացնել հետևյալը:

Եվ կառավարումը, և իրավական ռեժիմը հանդիսանում են պետության՝ հասարակական հարաբերությունների բոլոր բնագավառների վրա ազդեցության միջոցներ: Միաժամանակ կառավարումը հանդիսանում է ավելի լայն հասկացություն իրավական ռեժիմի համեմատ, քանի որ կիրառում է իրավական ռեժիմները, որպես գործիքներ, բացառիկ դեպքերում, որոշակի տարածքների, օբյեկտների, սուբյեկտների հանդեպ:

Այսպիսով, ռեժիմ ու կառավարում հասկացությունները փոխկախվածության մեջ են, բայց նույնական չեն. իրավական ռեժիմները հանդես են գալիս որպես պետական կառավարման համալիր միջոց, կիրառվում են կամ բացառիկ դեպքերում, երբ անհրաժեշտ է համալիր իրավական կարգավորում, կամ սուբյեկտների, տարածքների, օբյեկտների հանդեպ, որոնք մեծ նշանակություն ունեն պետության համար:

Ինչ վերաբերում է իրավական ռեժիմ ու իրավակարգ հասկացությունների հարաբերակցությանը, ապա առաջինը իրենից ներկայացնելով իրավական կարգավորման որոշակի է իրավունքի սուբյեկտների համար որոշակի օպտիմալ պայմանների ստեղծմանը, եղանակ, կարգ, ուղղված է իրավունքի սուբյեկտների համար օպտիմալ պայմանների ստեղծմանը, որոնք իրականացնում են իրենց իրավունքներն ու պարտականությունները որոշակի սոցիալական կարգին, այլ խոսքերով իրավակարգին համապատասխան:

Դրանով իրավակարգը որպես հասարակական հարաբերությունների վիճակ, որի դեպքում ապահովվում է օրենքին ու այլ նորմերին հետևելը հանդիսանում է իրավական ռեժիմի նպատակ:

**Իրավական ռեժիմ ու նորմ, ինստիտուտ, իրավունքի ճյուղ:** Արդեն նշվել է որոշ հեղինակների կողմից իրավական ռեժիմը ինստիտուտի, ճյուղերի, իրավունքի նորմերի միասնականության միջոցով սահմանելու փորձերի մասին:

Այսպիսի իրավիճակը հանդիսանում է մեթոդաբանորեն սխալ հետևյալ պատճառներով: Նշված կատեգորիաները մանրամասն մշակված են իրավաբանական գիտության կողմից, ձևակերպված են նրանց հասկացությունները, հատկանիշները, կառուցվածքը, դասակարգումը և այլն: Իրավունքի նորմերը միավորվում են իրավունքի ինստիտուտների և ճյուղերի, իրավունքի ճյուղերը բաժանվում են ինստիտուտների, որոնք իրենց հերթին կարող են ձևավորել ենթաճյուղեր ու ենթաինստիտուտներ: Սակայն իրավական ռեժիմը իրենից ներկայացնում է որակապես այլ գոյացություն և այս շրջանակներում չի տեղավորվում:

Բացի դրանից՝ իրավունքի նորմերի տվյալ բաժանումը մշակվել է իրավաբանական գիտության կողմից ու կիրառվում է միայն գիտական աղբյուրներում ու ուսումնական

գրականության մեջ, այն դեպքում երբ իրավական ռեժիմ կատեգորիան լայնորեն ներկայացված է տարբեր տեսակի նորմատիվ-իրավական ակտերում:<sup>31</sup>

Դիտարկվող կատեգորիաները տարբերվում են նաև ծավալով: Նորմերը, իրավունքի ինստիտուտները և ճյուղերը, իրավունքի բովանդակության տարրեր, ներառվում են նորմատիվ-իրավական ակտի կամ ակտերի ամբողջական խմբի տեքստում: Իրավական ռեժիմը նույնպես սահմանվում է այս ակտերով, բայց նրանց կողմից ոչ ամբողջովին է ներգրավում, այլ միայն վարքագծի որոշակի կանոնների շարադրման ճանապարհով:

Իրավական նորմերը կազմում են իրավական ռեժիմի հիմքը, ռեժիմի կողմից կանոնակարգվող իրավիճակները, սակայն այն կապված չէ նրա մեխանիկական միասնականության հետ:

Ինստիտուտը և իրավունքի ճյուղը ներառում են վարքագծի նույն թեմատիկ կանոնները, իսկ իրավական ռեժիմը, բացի իրավունքի նորմերից, ձևավորվում է իրավահարաբերություններից, իրավաբանական պատասխանատվությունից, իրավաբանական փաստերի համալիրից և այլն: Որպես իրավական միջոցներ, որոնք դրդապատճառավորում են սուբյեկտների վարքագիծը, հանդես են գալիս ոչ թե իրավունքի նորմերը, այլ տեղեկատվական-հոգեբանական ազդեցության այն միջոցները, որոնք պարունակվում են նրա մեջ՝ իրավական դրդապատճառներ ու սահմանափակումներ:

**«Իրավական ռեժիմ» և սուբյեկտի «իրավական կարգավիճակ»:** Կարգավիճակը սահմանվում է որպես քաղաքացու կամ իրավաբանական անձի իրավական դիրք պետության, նրա մարմինների, ֆիզիկական ու իրավաբանական անձանց հանդեպ. իրավունքի կոլեկտիվ սուբյեկտների համար՝ «այն ծավալում կարգերով ու դրույթներով ամրագրված, որն անհրաժեշտ է նրանց առջև դրված խնդիրների կատարման համար:

Իրավաբանական գրականության մեջ վերոնշյալ հասկացությունների սահմանազատման հարցերով կան տարբեր տեսակետներ:<sup>32</sup>

<sup>31</sup> Մանրամասն տե՛ս **Петров А.А., Шафиров В.М.**, Предметная иерархия нормативных правовых актов. Монография. М., 2014:

<sup>32</sup> Տե՛ս **Правовые модели и реальность.** Отв. ред. **Ю.А. Тихомиров, Е.Е. Рафалюк, Н.И. Хлуденева.** М., 2015, էջ 10-11:

Մասնավորապես, իրավաստեղծման, իրավակիրառման, իրավունքի հետազոտության հանդեպ հնարավոր է ստատուսային մոտեցում, այսինքն սուբյեկտի տեսանկյան մոտեցում, բայց իրավագիտության հանդեպ նաև կիրառելի է, այսպես կոչված, ռեժիմային մոտեցումը, այսինքն ըստ օբյեկտի նշանի նորմերի համակարգումը:

Գտնում ենք, որ իրավական ռեժիմ հասկացությունը ավելի լայն է, քան իրավական կարգավիճակը, քանի որ իրավական ռեժիմը որպես կատեգորիա, որը գործնականում սահմանվում է միայն որպես որոշակի օբյեկտի, սուբյեկտի կամ գործունեության հանդեպ: Խոսելով սուբյեկտների մասին, ըստ հեղինակի, հիմնականում խոսքը գնում է նրանց իրավական կարգավիճակի, բնութագրի մասին: Սակայն իրավական վիճակի առկայությունը կամ տիրապետումը դեռևս չի ենթադրում իրավական ռեժիմի սահմանում:

Իրավական կարգավիճակը համագործակցում է իրավունքի այս կամ այն բնագավառի ռեժիմի հետ: Իրավաբանական ռեժիմը հանդիսանում է «սնուցող միջավայր», որում տեղի է ունենում ու ձևավորվում քաղաքացու սուբյեկտիվ իրավունքների ու իրավաբանական պարտականությունների բովանդակությունը, այսինքն նրա իրավաբանական կարգավիճակի կարծիքով, եթե խոսենք իրավական ռեժիմի ու իրավական կարգավիճակի հարաբերակցության մասին, ապա այն իրենից ներկայացնում է ամբողջի ու նրա բաղկացուցչի հարաբերակցություն, եթե իրավական կարգավիճակ ասելով հասկացվում է բարդ իրավական միջոցը, ապա իրավական ռեժիմը տարբեր մակարդակի իրավական միջոցների համալիր է:

Իրավական կարգավիճակի կառուցվածքային տարրերը ամբողջապես ներառված են իրավական ռեժիմի կառուցվածքում, որը, ի տարբերություն կարգավիճակի, կողմնորոշված է իրավունքի սուբյեկտների այնպիսի կարևոր բնութագրերի վրա, ինչպիսիք իրավական կարգավորման օբյեկտներն են, իրավական կարգավորման մեթոդը, այլ օբյեկտները, որոնք ունեն կոնկրետություն՝ համաձայն կանոնակարգվող իրավիճակների:

**«Իրավական ռեժիմ» և «իրավական մեխանիզմ»:** Իրավական մեխանիզմը իրենից ներկայացնում է իրավաբանական միջոցների համալիր, որոնք անհրաժեշտ են

իրավաբանական նպատակների ձեռքբերման համար, որոնք իրենց հերթին գործում են հաջորդաբար համաձայն որոշակի իրավաբանական ընթացակարգի:

Ըստ ծավալի իրավական ռեժիմը ավելի լայն հասկացություն է, քան իրավական մեխանիզմը<sup>33</sup>, քանի որ ներառում է իրավաբանական միջոցների ավելի լայն հավաքածու, այդ թվում նաև իրավական մեխանիզմներ, այն պարունակում է նաև իրավական կարգավորման յուրահատուկ մեթոդներ ու տիպեր:

Իրավական ռեժիմները մարմնավորում են իրավունքի գործառնական բնութագիրը՝ որոշակի եղանակը, որոնք ուղղված են ոչ միայն արդյունքին, այլ նաև ապահովում են կանոնակարգման գործընթացը ստեղծելով նրա հատուկ ուղղվածությունը ու տրամադրվածությունը:

Իր հերթին իրավական մեխանիզմները ուղղված են արդյունքի վրա՝ սուբյեկտների կողմից իրավաբանական նպատակներին ու խնդիրներին օպտիմալորեն հասնելը:

Բացի դրանից՝ իրավական ռեժիմները ունեն մեծ կայունություն, քանի որ, հանդիսանալով իրավական վիճակի տեսակ, ուղղված են նրանց ամրապնդմանը ու կանոնակարգմանը: Իրավական մեխանիզմները տարբերվում են դինամիկությամբ, քանի որ նախատեսված են գործնական գործունեության համար և իրենցից ներկայացնում են որոշակի սխեմաներ, ալգորիթմներ, որոնք փոխվում են իրավաբանական պրակտիկայի փոփոխմանը զուգընթաց:

**Իրավական ռեժիմ և իրավական կարգավորման մեխանիզմ:** Իրավական կարգավորման մեխանիզմը՝ կարելի է սահմանել որպես իրավական ազդեցության ընդհանուր մոդել, իրավական ռեժիմը՝ որպես իրավական կարգավորման հատակ մեխանիզմ, որը հատուկ կերպով կանոնակարգում է հասարակական հարաբերությունների կոնկրետ խումբը, որն ուղղված է օբյեկտների կոնկրետ տեսակներին, որի շրջանակներում վերջիններս գործում են: Դրա հետ մեկտեղ իրավական ռեժիմը իրականանում է իրավական կարգավորման մեխանիզմի միջոցով, այն նրա յուրատիպ պրոյեկցիան է որոշակի սոցիալական իրավիճակի վրա:

---

<sup>33</sup> Տե՛ս **Сультыгор М.М.** Конституционно-правовой режим ограничения государственной власти. дис. ...докт-ра юрид. наук. СПб., 2005, էջ 111-112:

Տվյալ կատեգորիաները չեն համընկնում ծավալով, բացի իրավական կարգավորման մեխանիզմի տարրերից, որոնք կազմում են իրավական ռեժիմների իրականացման կառուցակարգը, նրա բովանդակության մեջ են մտնում սուբյեկտները, նրանց իրավական կարգավիճակները, օբյեկտները, սուբյեկտների ու օբյեկտների կոնկրետ տեսակների փոխկապակցվածության մեթոդները, երաշխիքների համակարգը, այդ թվում նաև ռեժիմային պահանջների խախտման իրավաբանական պատասխանատվությունը: Իրավական ռեժիմի համար մեծ նշանակություն ունեն այնպիսի պայմաններ, ինչպիսիք են ժամանակը, տարածությունը, անձանց շրջանակը, որոնց վրա այն տարածվում է, լքվում է կոնկրետ բովանդակությամբ՝ համապատասխան կանոնակարգվող սոցիալական գործընթացների:

**Իրավական ռեժիմ և օրինականություն:** Այս կատեգորիաների հարաբերակցության խնդիրը շատ կարևոր է, քանի որ օրինականությունը որոշ գիտական հետազոտություններում սահմանվում է ‘ռեժիմ’ հասկացության միջոցով: Պետք է դիտարկել դրանց հարաբերակցությունը բովանդակային առումով:<sup>34</sup>

Նախ և առաջ օրինականությունը և իրավական ռեժիմը հիմնված են իրավունքի վրա, ներկայացված են իրավական միջոցների համակարգով, հիմնվում են սկզբունքների վրա, ուղղված են որոշակի նպատակների իրականացմանը, որոնց թվում է հասարակությունում իրավակարգի հաստատումը և ապահովումը:

Իրավական ռեժիմը մարմնավորում է իրավունքի գործառնական բնութագիրը, հանդիսանում է իրավական ձևի տարր, այն դեպքում երբ օրինականությունը դիտարկվում է և որպես հասարակական հարաբերությունների իրավական ապահովման սկզբունք, և կարգավորվող հարաբերությունների մասնակիցների վարքագծի մեթոդ, գործող իրավական կառույցների որակի գնահատման հատուկ ինքնուրույն իրավաբանական կատեգորիա:

Ինչ վերաբերում է ռեժիմի միջոցով օրինականության ապահովմանը, ապա այստեղ հիմնականում կիրառվում են ‘հասարակական ռեժիմ, հասարակական կյանքի ռեժիմ’ և այլ կատեգորիաներ, այսինքն ռեժիմը նույնականացվում է հասարակությունում որոշակի

---

<sup>34</sup> Մանրամասն տե՛ս **Денисенко В.В.** Легитимность как характеристика сущности права. М., 2014:

կարգի հետ, իսկ ”իրավական” ածականի կիրառման դեպքում այսպիսի հետազոտությունների շրջանակներում հիմնականում շեշտադրվում է տվյալ կարգի ու իրավունքի փոխհարաբերությունը:

Քանի որ մշակվել է միայն իրավական ռեժիմի սահմանման համար հիմք, անհրաժեշտ է առանձնացնել նաև նրա այլ բնութագրային հատկանիշներ.

**ա) Իրավական ռեժիմը, ինչպես իրավական կարգավորման այլ միջոց, ենթակա է պարտադիր նորմատիվ-իրավական ակտերում ամրագրման:**

Իրավական ռեժիմների ամրագրումը տարբեր մակարդակի նորմատիվ-իրավական ակտերում գրավոր ձևի միջոցով թույլ է տալիս՝

- պարզորոշորեն նշանակել իրավական միջոցների համալիրը, որոնք կիրառվում են հասարակական հարաբերությունների կանոնակարգման համար: Այն անհրաժեշտ է իրավակիրառիչի և այլ սուբյեկտների համար, որոնք իրականացնում են իրավունքը,

- տրամադրել սուբյեկտներին, որոնք ներգրավված են իրավական ռեժիմի ուղեծրում կամ պատրաստվում են մտնել ռեժիմային հարաբերությունների մեջ, տվյալ ռեժիմի շրջանակներում վարքագծի կանոնների մասին տեղեկատվություն և դրանով իսկ ուղղորդել նրանց դեպի իրավաչափ վարքագիծ: Որպես դրդապատճառ կարող է հանդես գալ կամ ընդհանուր կարգավորիչ իրավահարաբերություններում իր իրավունքներն ու օրինական շահերը իրականացնելու, կամ պաշտպանական իրավահարաբերություններում՝ իրավաբանական պատասխանատվությունից խուսափելու ցանկությունը:

- Իրավական ռեժիմների նորմատիվ-իրավական ամրագրումը իրականանում է տարբեր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ-իրավական ակտերում:

Հիմնական նորմատիվ-իրավական ակտերն են, որոնք ամրապնդում են իրավական ռեժիմները, հանդիսանում են սահմանադրությունը և օրենքերը: Նրանցում իրավական ռեժիմները մանրամասնորեն կանոնակարգվում են, ամրագրում են իրավական միջոցները, որոնք ներառված են իրավական ռեժիմների կազմում, նրանց իրականացման

սկզբունքներն ու երաշխիքները, այդ թվում նրանք, որոնք պարունակում են ռեժիմային պահանջների խախտման դեպքում իրավաբանական պատասխանատվություն:<sup>35</sup>

Իրավական ռեժիմները պարունակում են իրավակիրառիչ լիազորություններ և այլ իրավաբանական նշանակալի գործողություններ: Օրինակ՝ հատուկ իրավական ռեժիմների գործողության տարածքում կառավարման հատուկ ժամանակավոր մարմնի ստեղծումը, ղեկավարվելով օրենքով ու որոշմամբ՝ սահմանել կոնկրետ ժամանակահատվածում պարետային ժամ:

**բ) Իրավական ռեժիմի հատուկ նպատակն է հասարակական հարաբերությունների հատուկ կարգավորումը, իրավական կարգավորման հատուկ կարգը, եղանակը:**

Իրավունքի ընդհանուր տեսության մեջ նպատակների խնդրի մշակմանը դարձվում է մեծ նշանակություն: Կարևոր է այն փաստը, որ գիտնականների մեծամասնությունը նպատակ ու միջոց կատեգորիաները դիտարկում են փոխկապված և փոխապայմանավորված երևույթներ:

Որպես վերոնշյալից, փիլիսոփայության մեջ նպատակը հանդիսանում է արդյունքի ակնկալումը գիտակցության մեջ, որը ձեռքբերելու համար կատարվում են գործողություններ: Նպատակը, արտահայտելով մարդկային գիտակցության ակտիվ կողմը, պետք է գործի համաձայն շրջակա աշխարհի ու սուբյեկտի օբյեկտիվ օրենքների ու իրական հնարավորությունների: Նպատակը կարող է ուժ դառնալ, որը փոխում է իրականությունը, միայն որոշակի միջոցների հետ փոխազդեցության պայմաններում, որոնք անհրաժեշտ են նրա գործնական իրականացման համար: Տարբերում են հեռակա, մոտակա ու անմիջական, ընդհանուր, մասնավոր, ընթացիկ ու վերջնական նպատակներ:

Նպատակն իրենից ներկայացնում է ապագա արդյունք, այն, ինչին ձգտում է սուբյեկտը, նպատակը ապագա արդյունքի մասին մոդելն է, որը կարող է բավարարել սկզբնական պահանջմունքը եղած իրական հնարավորությունների դեպքում, որոնք իրենց հերթին գնահատվում են անցյալ փորձի արդյունքներով:

---

<sup>35</sup> Оксамытний В.В. Общая теория государства и права. М., 2011, с. 419-420.

Նպատակահարմարությունը կապված է ժամանակակից հասարակության բոլոր բնագավառների հետ, հանդիսանում է իրավաբանական գործունեության անմիջական պայմանը: Դ.Ա. Քերիմովը նշում է. նպատակը, որպես փիլիսոփայական կատեգորիա, ընկած է իրավունքի բնույթի ճանաչման, նրա ստեղծման ու իրականացման գործընթացի, զարգացման ու կատարելագործման հիմքում:<sup>36</sup>

Իրավական ռեժիմների նպատակների հետազոտության կարևորությունը սահմանվում է մի քանի պատճառներով: Դա թույլ է տալիս, առաջին հերթին, ավելի խորությամբ ուսումնասիրել դիտարկվող երևույթի նշանակությունը իրավական կարգավորման համակարգում, երկրորդ, գիտակցել հասարակական հարաբերությունների ռեժիմային կարգավորման արժեքը իրավունքի սուբյեկտների համար, երրորդ, լուծել այն խնդիրները, որոնք առաջանում են արդյունավետ ռեժիմային կարգավորման ճանապարհին, քանի որ իրավակարգավորումների արդյունավետության կարևոր չափանիշը հանդիսանում է նորմատիվորեն սահմանված նպատակների ձեռքբերման աստիճանը: Իրավական ռեժիմի նպատակը կարելի է սահմանել որպես պետության կողմից առաջարկված կամ ամրագրված որոշակի սոցիալական երևույթի կատարյալ մոդել, որը ձեռք է բերվում իրավական միջոցների իրականացման միջոցով, որոնք իրենց հերթին ներառված են նրա կազմի մեջ:

Նպատակները, որոնք կանգնած են իրավական ռեժիմների առջև, տարազան են: Սակայն իրավական ռեժիմների միասնական նպատակը կարելի է ճանաչել հասարակական հարաբերությունների օպտիմալ կարգավորումը, արգելքների հաղթահարումը, որոնք կանգնած են սուբյեկտների կողմից իրենց հետապնդած շահերի բավարարման ճանապարհին, իրավաչափ գործողությունների համար իրավական ռեժիմի սահմանումը և հակաիրավական գործողությունների համար անբարենպաստ ռեժիմի ներդրումը: Այս առումով անհրաժեշտ նշել, որ իրավական ռեժիմների գործառույթները, որպես իրավունքի ազդեցության կոնկրետ, օպտիմալ ուղղություններ, սահմանվում են նպատակներով, կարգավորել հատուկ եղանակով, կազմակերպել որոշակի

---

<sup>36</sup> См'у Керимов Д.А. Методология права: Предмет, функции, проблемы философии права. 4-е изд., М., 2008, էջ 459-460:

հասարակական հարաբերություններ, ավելացնել իրավունքի օգտակարության գործակիցը, կատարելագործել իրավական կարգավորման մեխանիզմները, առարկայական-գործնական, նրանք կոնկրետացված ու կապված են որոշակի բնագավառի ու որոշակի օբյեկտի հետ: Իրավական ռեժիմի նպատակները սահմանված են նորմատիվ-իրավական ակտերում, որոնք հանդիսանում են տվյալ իրավական ակտի ընդունման, գործարկման, ու գործողության դադարեցման իրավաբանական հիմնավորումը:

Ինչ վերաբերում է իրավունքի ճյուղային իրավական ռեժիմներին, դրանց նպատակը, համաիրավական ռեժիմների նպատակային արտադրիչը սահմանվում են իրավական կարգավորման առարկայով, մեթոդով, իրավունքի այս կամ այն ճյուղի-իրավական կարգավորման տիպով:

Օրինակ, կարելի է դիտարկել վարչական-իրավական ռեժիմների նպատակները, որոնց կարելի է դասակարգել երեք խմբի.

Առաջին խումբը՝ ընդգրկում է վարչական-իրավական ռեժիմներ որոշակի պետաիրավական վիճակների համար:

Երկրորդ խումբը ներառում է գործառական վարչական-իրավական ռեժիմները, որոնք կոչված են ապահովելու կառավարման գործառույթները և գործունեության բնագավառները՝ հարկային, սանիտարական, բնապահպանական և այլն:

Ռեժիմների երրորդ խումբը կազմում են օրինականացնող ռեժիմները, որոնք վերաբերում են ինչպես իրավաբանական ու ֆիզիկական անձանց կարգավիճակին, այլ նաև գործունեության տեսակների հանդեպ նորմատիվ պահանջների կանոնակարգմանը: Դրանով իսկ, կարելի է պնդել, որ վարչական-իրավական ռեժիմների նպատակները պայմանավորված են պետական կառավարման նպատակներով:

Վարչական-իրավական ռեժիմների ընդհանուր նպատակն ու հիմնական նշանակությունը նրանում է, որպեսզի ապահովի կառավարման բնագավառում իրավաօրինականությունը, քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ իրավական ռեժիմի նպատակը պարունակում է իրավական ռեժիմի բովանդակային կողմը՝ հիմունքները, սահմանման պատճառները, որից կախված է ռեժիմային տարածությունը:

Իրավաբանական կարգավորումը՝ ազդեցության ժամկետը, տարածման տարածքը, իրավական ազդեցության օբյեկտները, դրդապատճառների ու սահմանափակումների հարաբերակցությունը, ռեժիմային պահանջների խախտման իրավաբանական պատասխանատվությունը և այլն:

**գ) Կանոնակարգման հատուկ կարգը, որը կայանում է իրավական միջոցների թույլատվությունների ու արգելքների, դրական պարտականությունների ու առաջարկների, դրդապատճառների ու սահմանափակումների, հատուկ համադրության մեջ:**

Հենց թույլատվությունների, արգելքների ու դրական պարտականությունների յուրահատուկ կոմբինացիան կամ առաջինների կամ երկրորդների գերակայության դեպքում ստեղծում է կանոնակարգման հատուկ ռեժիմ:

Ինչպես նշում է Մ.Մ. Սուլտիզովը. “իրավական ռեժիմի շրջանակներում արտացոլվում են իրավական կարգավորման տարբեր միջոցներ, բայց յուրաքանչյուր ռեժիմում այն սահմանում է նրա յուրահատուկ տրամադրվածությունը. միջոցներից մեկը հանդես է գալիս որպես գերակայություն մյուսի հանդեպ, որի հետևանքով այդ գերակա միջոցը խաղում է որոշակի դեր իրավական կարգավորման մեջ և դրա հետ մեկտեղ ստեղծում է հատուկ ուղղություն կամ անհրաժեշտ կարգավորվածություն”:<sup>37</sup>

Կախված նրանից, թե ինչպիսի իրավական միջոցներ են գերիշխում իրավական ռեժիմներում, կարող են տարբերվել սուբյեկտների համար առավելություն ստեղծողներ, կամ էլ նրանց սուբյեկտիվ իրավունքներն ու ազատությունները սահմանակողներ:

**դ) Վերը շարադրվածից բխում է իրավական ռեժիմի հետևյալ բնութագրական հատկանիշը՝ բարենպաստ պայմանների ստեղծումը իրավունքի սուբյեկտների բնականոն գործառնությունների ապահովման և օրինական շահերի բավարարման համար:**

---

<sup>37</sup> Տե՛ս Сультыгор М.М., նշված աշխ., էջ 51-52:

Իրավական ռեժիմները, որոնք տրամադրում են առավելություններ սուբյեկտների համար նրանց սուբյեկտիվ իրավունքների ու օրինական շահերի իրականացման մեջ, գերակա թույլատվական սկզբունքով ստեղծում են բարենպաստ պայմաններ իրավունքի սուբյեկտների օրինական շահերի բավարարման համար:

Իրավական ռեժիմները, որոնք հիմնված են սահմանափակումների վրա, սուբյեկտների համար ստեղծում են անբարենպաստ պայմաններ:

**ե) Իրավական ռեժիմների համակարգային բնույթը,** որպես բնութագրական հատկանիշ, արտացոլվում է նրանում, որ իրավական ռեժիմը, լինելով իրավական կարգավորման համակարգի գործիք, ինքնին հանդիսանում է համակարգային գոյացություն, որը կազմված է ենթահամակարգերից, որոնք բնորոշվում են ամբողջականությամբ, նպատակահարմարությամբ, դյուրությամբ, համադրելիությամբ և այլն:

Քանի որ իրավական ռեժիմը իրենից ներկայացնում է փոխկապակցված եղանակների և տարրերի բարդ համակարգ, ամբողջովին արդարացված է համակարգային մոտեցման հանդեպ դիմումը հետազոտության օբյեկտի ուսումնասիրության մեջ, որը թույլ է տալիս բացահայտել իրավական ռեժիմների բնույթը, նշանակությունը, նրանց բաղկացուցիչների բազմազանությունը և համագործակցությունը:

Համակարգային մոտեցման խնդիրների հանդեպ մեծ ուշադրությունը ներկայումս բացատրվում է նրա, որպես մեթոդի, հասարակական պրակտիկայի բարդացված խնդիրներին, մեծ, գերբարդ համակարգերի ճանաչման ու կառուցման խնդիրներին համապատասխանությամբ: Համակարգային մոտեցման երևույթը գիտության զարգացման ժամանակակակից փուլում արտացոլում է որոշակի օրինաչափություն՝ գիտելիքների խորացման և ինտեգրատիվ միտումների իմացության մեջ:

Գիտական ճանաչողության մեջ կարևորվում է վերլուծական մոտեցումը, որի շնորհիվ էլ վերլուծություն բառը դարձել է գիտական հետազոտության հոմանիշ:<sup>38</sup>

Սակայն որոշակի փուլում առաջացել է մեծ պահանջարկ հավաքված նյութի ինտեգրացիայի ու համակարգման մեջ, որը կարող է հաջողությամբ կատարվել

<sup>38</sup> Մանրամասն տե՛ս Социально-культурная природа познания. Том второй. Под ред. **В.А. Лекторского, Т.И. Ойзермана.** М., 1991, էջ 10-11:

համակարգային մոտեցման հիման վրա, որն օրգանապես իր մեջ համադրում է և՛ վերլուծությունը, և՛ համադրությունը: Համակարգային մոտեցման հիմնական բնագավառն է հանդիսանում նաև նրա կիրառման նոր սկզբունքի մշակումը՝ ճանաչման նոր, միասնական ու ավելի օպտիմալ մոտեցման ստեղծումը բոլոր ճանաչվող նյութերի կիրառման համար, հետազոտության օբյեկտի մասին ավելի լիարժեք ու ամբողջական պատկերացում ստանալու նպատակով:

“Համակարգ” հասկացությունը կառավարչական ու սոցիալ-տեղեկատվական իմաստով գործածվում է իրավագիտության մեջ, ենթադրում է իրավական երևույթների հետազոտության հանդեպ համակարգային-կառուցվածքային մոտեցման կիրառումը թույլ է տալիս բացահայտել իրավունքի ներքին միասնականությունը, նրա բաղկացուցիչների օրգանական փոխկապակցվածությունը և ներդաշնակ համագործակցությունը:

Իրավական երևույթների վերլուծության համակարգային մոտեցման կիրառման վրա մեծ ուշադրություն են դարձնում ժամանակակից գիտնականները:<sup>39</sup>

Մասնավորապես Վիտրուկը, վերլուծելով իրավունքի բնագավառում առկա համակարգային հետազոտությունները, նշում է, որ բոլոր պետական ու իրավական երևույթները կարելի է դիտարկել որպես համակարգեր, որոնք կապված են իրար հետ և կազմում են համակարգեր: Ելնելով բարդ դինամիկ համակարգի կիբեռնետիկական մեկնաբանությունից՝ նա դիտարկում է յուրաքանչյուր սոցիալական-իրավական համակարգ որպես ամբողջի փոխկապակցված ու համագործակցող հատվածների միասնականություն, որոնց գործարկումը կողմնորոշված է դրված նպատակին հասնելուն:

Յուրաքանչյուր համակարգում գերակա նշանակություն ունեն նրա բաղկացուցիչների միջև այն ներքին կապերը, որոնք այս կամ այն օբյեկտը դարձնում են համակարգ և բացահայտվում են միայն նրա դիտարկման համակարգային մակարդակում: Համակարգային մոտեցմամբ նրանք ստացել են համակարգաստեղծ կապերի անվանում, որոնց ներկայության շնորհիվ համակարգը ստանում է ամբողջականության հատկանիշ՝ նոր ինտեգրացված որակների առկայություն, որոնք բացակայում են առանձին

---

<sup>39</sup> Տե՛ս **Осипов М.Ю.** Системы в праве и правовые процессы. М., 2015, էջ 4-5:

բաղկացուցիչների մոտ, բայց առաջանում են որոշակի համակարգում նրանց համագործակցության արդյունքում:

Իրավական իրականության երևույթների գիտական ճանաչման մեթոդաբանությունը բխում է նրանից, որ բոլոր իրավական կատեգորիաները կազմված են բազմաթիվ համակարգերից:<sup>40</sup> Իրավաբանական գիտությունները, զբաղվում են գործարկման, որպես իրավական համակարգի, ինչպես նաև կառուցվածքային տեսանկյունից այն կազմող ենթահամակարգերի, նպատակների, խնդիրների, սուբյեկտների, ազդեցության, օբյեկտների, տեղեկատվական գործընթացների ուղիղ ու հետադարձ կապերի ուսումնասիրությամբ:

Իրավական ռեժիմների համալիր բնույթը նշանակում է, որ կանոնակարգումը, որը հիմնված է իրավական միջոցների հատուկ համադրության վրա, իրականանում է համալիրում:

Այս առումով, իրավական ռեժիմը “խոշորացված բլոկ է” իրավական գործիքավորման ընդհանուր զինանոցում, և այս տեսանկյունից իրավական միջոցների արդյունավետ կիրառումը այս կամ այն սոցիալական խնդիրների լուծման դեպքում կայանում է նրանում, որպեսզի ընտրվի օպտիմալ իրավական ռեժիմ համապատասխան խնդրի լուծման համար, մշակվի այս խնդրին ու կարգավորվող հարաբերություններին համապատասխան:

Իրավական ռեժիմը իրավական միջոցների կարգավորված միասնականություն է: Այս համակարգի շրջանակներում իրավական միջոցները համատեղվում են խստորեն որոշակի կերպով, սերտորեն փոխկապացված են և գործում են համալիրայնորեն, ստեղծում են իրավական կարգավորման որոշակի մթնոլորտ՝ իրավունքի սուբյեկտների օրինական շահերի բավարարման համար բարեհարմարության (անբարեհարմարության) աստիճան:

Իրավական ռեժիմը իր իրավաբանական բնույթով մատակարարված է բոլոր միջոցներով, որոնք անհրաժեշտ են ու բավարար նրա գործարկման համար. վարքագծի կանոնները, դրական ու բացասական արգելքները, ներառյալ ռեժիմային

<sup>40</sup> Տե՛ս **Осипов М.Ю.** Системы в праве и правовые процессы. М., 2015, էջ 22-29:

պահանջների խախտման համար իրավաբանական պատասխանատվությունը: Դրա հետ մեկտեղ իրավական ռեժիմների ազդեցությունը բովանդակում է համակարգերի ամբողջական համալիր, որոնք վերցված են ժամանակային ու տարածական սահմաններում՝ իրավունքի օբյեկտների իրավական կարգավիճակներ, իրավունքի օբյեկտներ, իրավաբանական փաստեր ն այլն:

**զ) Իրավական ռեժիմի հատուկ կառուցվածքը:** Կառուցվածքի տեղն ու դերը յուրաքանչյուր սոցիալական համակարգի գոյության մեջ սահմանվում է նրանով, որ կառուցվածքը հանդիսանում է նրա ներքին կարգավորվածության կրողը, պայմանավորում է նրան բնորոշ ամբողջականությունը և հարաբերական կայունությունը: Այս իմաստով “կառուցվածք” հասկացությունը արտացոլում է համակարգի “ստատիկան”: Համակարգի տվյալ ստատիկ դրության հետազոտությունը սովորաբար անվանում են կառուցվածքային վերլուծություն և առաջարկում են այն դիտարկել որպես համակարգային մոտեցման կոնկրետ, հարաբերականորեն ինքնուրույն բնագավառներից մեկը:

Պետք է ի նկատի ունենալ, որ կառուցվածքային վերլուծության ճիշտ հասկացումը և արդյունավետ կիրառումը հնարավոր է համակարգը կազմավորող բաղկացուցիչների բացահայտման ու տարբերակման հիման վրա, որոնց որակական բնույթը, նրանց կապերն ու փոխազդեցությունները ազդում են ոչ միայն կառուցվածքի, այլ նաև այս կամ այն համակարգի այլ կողմերի, որակների, առանձնահատկությունների վրա:

Կառուցվածք հասկացությունը իրավաբանական ու փիլիսոփայական գրականության մեջ նույնքան հեռու է միասնական մեկնաբանությունից, ինչպես համակարգ հասկացությունը: “Կառուցվածք” հասկացությունը կարելի է դիտարկել որպես համակարգի բաղկացուցիչ կարգավորվածության տեսակից, որը կայուն է նրա որոշակի փոփոխությունների, ձևափոխումների հանդեպ:

Այսպիսի մոտեցման դեպքում արտացոլվում են յուրաքանչյուր սոցիալական համակարգի կառուցվածքի բովանդակության երկու սկզբունքորեն կարևոր առանձնահատկություններ՝

- համակարգի կառուցվածքը արտացոլում է նրա բաղկացուցիչների ու նրանց միջև կապերի առանձնահատկությունը,

- կառուցվածքն ունի ժամանակի հարաբերական կայունություն, որի շնորհիվ համակարգը առկա է որպես հարաբերականորեն ինքնուրույն ու հարմարեցված օբյեկտ: Ավելին, հանդիսանալով համակարգի առավել կայուն բնորոշիչ, այն թույլ է տալիս որոշակի սահմաններում կուտակել քանակական փոփոխություններ, որոնք անխուսափելիորեն տեղի են ունենում գործարկման գործընթացում՝ կանխորոշելով հետագա զարգացումը, համակարգի վերաճնավորումը:

Իրավական ռեժիմի կառուցվածքի վերաբերյալ գիտության մեջ կան երեք մոտեցումներ

- իրավական ռեժիմը նույնականացվում է իրավական կարգավորման մեխանիզմի հետ, որի արդյունքում համընկնում է նաև նրանց կառուցվածքը,

- իրավական ռեժիմը իրավունքի ինստիտուտ է և նրա կառուցվածքն է կազմում իրավական նորմերի միասնականությունը,

- իրավական ռեժիմ հասկացությունը ավելի լայն է իրավական կարգավորում հասկացությունից, որի համար էլ իրավական ռեժիմի կառուցվածքում իրավական մեխանիզմի տարրերից ներառվում են նաև իրավունքի սկզբունքները, իրավական ազդեցության մեթոդները և այլն:

Այսպիսով, իրավական ռեժիմի ու հարակից համընդհանուր տեսական կատեգորիաների համեմատական վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ իրավական ռեժիմը հանդիսանում է իրավական վիճակի տարատեսակ, որը կապված չի ոչ իրավական նորմերի միասնականության, ոչ էլ իրավաբանական կարգավորման մեխանիզմի հետ:

Իրավական ռեժիմի կառուցվածքում կարող են ներառված լինել տարբեր կազմության ու մակարդակի իրավական միջոցներ. իրավական կարգավորման մեխանիզմի տարբեր՝ իրավական նորմեր, հարաբերություններ, իրավունքի իրականացման ակտեր, իրավաբանական փաստեր և այլն, իրավունքի սուբյեկտների ու օբյեկտների կարևոր բնութագրեր, կարգավորվող հարաբերությունների տարածաժամանակային բնութագրեր, իրավական ռեժիմի իրականացման երաշխիքների

համակարգ, իրավական սկզբունքներ, իրավական կարգավորման նպատակներ ու միջոցներ:

Այլ խոսքերով, իրավական ռեժիմը ընդգրկուն համակարգ է, որը միասնական աշխատանքային կառույցում միավորում է իրավական միջոցների որոշակի համալիր՝ համապատասխան առաջացող նպատակների:

Իրավական ռեժիմի առաջարկվող կառուցվածքը ավելի օպտիմալ է, քանի որ նրանում պարզորոշորեն ներկայացված են հետազոտվող կատեգորիայի բաղկացուցիչները և այն ամբողջությամբ համապատասխանում է նրա բովանդակությանը:

Հանրագումարելով վերոնշյալը՝ իրավական ռեժիմը կարելի է սահմանել որպես հասարակական հարաբերությունների կարգավորվածության հատուկ եղանակ, որը հիմնված է իրավական միջոցների, իրավական կարգավորման միջոցների, սկզբունքների, երաշխիքների որոշակի համատեղման վրա, որը ստեղծում է իրավունքի սուբյեկտների օրինական շահերի բավարարման, սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ և ուղղված է սոցիալապես նշանակալից արդյունքի ձեռքբերմանը:

Իրավական ռեժիմի բնույթը կայանում է նրանում, որ թույլատվությունների, արգելքների, դրական պարտականությունների միջոցով ստեղծվի հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման հատուկ դրություն, սուբյեկտների կողմից իրենց իրավունքների ու օրինական շահերի անարգել իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, հակաիրավական գործունեության սահմանափակումներ, այլ սոցիալականորեն օգտակար նպատակների և բարենպաստ պայմանների ստեղծում:

Իրավական ռեժիմի բովանդակությունն են կազմում տարբեր մակարդակի իրավական միջոցներ՝ ներառյալ իրավական սկզբունքները և երաշխիքները, որոնք ձևավորում ու սահմանում են տվյալ ռեժիմի գործադրման և պահպանման իրավական եղանակը:

## Գլուխ 2

### Իրավական ռեժիմի կառուցվածքն ու գործառույթները

#### 2.1. Իրավական միջոցները իրավական ռեժիմի կառուցակարգում

Իրավական միջոցների խնդիրը իրավաբանական գրականության մեջ<sup>41</sup> առաջնայնորեն առաջացել է ու զարգացել արդիական ընդհանուր տեսական խնդիրների խաչմերուկում, իրավական կարգավորում, նրա մեխանիզմը և իրավունքի արդյունավետությունը, որոնք իրենց սկիզբը վերցնում են 20-րդ դարի 60-ական թվականներից, երբ առաջին անգամ մշակվել են իրավական կարգավորման, իրավունքի սոցիալական ազդեցության հասկացությունները, բացահայտվել են արդյունավետության չափանիշները այնպիսի գիտնականների աշխատություններում, ինչպիսիք են Ն.Գ. Ալեքսանդրովը, Ս.Ս. Ալեքսենը, Վ.Բ. Կազիմիրչուկը, Լ.Ս. Յավիչը և այլք:

Ներկայումս իրավական միջոցների տեսությունը իրենից ներկայացնում է ինքնուրույն հեռանկարային ուղղություն իրավունքի ընդհանուր տեսության մեջ, որի մշակման համար ծառայում են այնպիսի գիտնականների ժամանակակից գիտական աշխատանքեր, ինչպիսիք են Ս.Ս. Ալեքսենը, Ա.Վ. Մալկոն, Ն.Ի. Մատուզովը, Վ.Ա. Սապունը, Վ.Մ. Սիրիխը, Յու.Ա. Տիխոմիրովը և այլք:

Միջոց հասկացությունը ընդհանուր գիտական, միջդիսցիպլինար է, կիրառվում է գիտելիքի տարբեր բնագավառներում և ունի իր առանձնահատկությունները:<sup>42</sup>

Շատ հաճախ միջոց հասկացությունը կիրառվում է տարբեր մակարդակի, ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական, նորմատիվ-իրավական ակտերում:

Իրավաբանական գրականության մեջ որպես իրավական միջոցներ նշվում են տարբեր իրավական երևույթներ՝ գործարքները, պայմանագրերը, ներպայմանագրային պարտականությունները, պատասխանատվության միջոցները, իրավունքի պաշտպանության միջոցները, օպերատիվ ազդեցության միջոցները, մեղքը,

<sup>41</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. М., 2008, էջ 267-268:

<sup>42</sup> Տե՛ս **Арданов М.М.** Эффективность административно-правовых средств принуждения, применяемых милицей: автореф. дис...канд. юрид. наук. Ростов –на-Дону. 1998, **Батурина Ю.Б.** Правовая форма и правовое средство в системе понятий теории права. автореф...дис...канд. юрид. наук. М., 2001:

կանխավարկածները, իրավական ֆիկցիաները, իրավաբանական անձը, իրավաունակությունը, գործունակությունը, ներկայացչությունը:

- թույլատվությունները, արգելքները ու դրական պարտականությունները:
- իրավունքի նորմերն ու սկզբունքները, իրավաբանական փաստերը, սուբյեկտիվ իրավունքներն ու իրավաբանական պարտականությունները, արտոնությունները, խրախուսման միջոցները, պատժի միջոցները, իրավակիրառիչ գործողությունները, իրավունքի տարբեր բնագավառների իրավական կարգավորման մեթոդները,
  - նորմերն ու իրավահարաբերությունները
  - իրավահարաբերություններն ու սանկցիաները
  - օրենսդրական նախաձեռնությունը, համաձայնության հանձնաժողովները, հանրաքվեն, իրավունքի նորմերի պաշտոնական իշխանությունների բաժանման տեսությունը, իմպինջմենթի ընթացակարգը, հայտարարության, միջնորդության, իրավակիրառիչ ակտերի նախապատրաստման հիման վրա:

Մեկնաբանելով մոտեցումների ու կարծիքների այսպիսի բազմազանությունը, Մ.Ն. Մառչենկոն գրում է, որ այս կամ այն իրավական միջոցների հավաքածուն կախված է իրավունքի համապատասխան բնագավառներից ու ինստիտուտներից:<sup>43</sup>

Օրինակ, վարչական իրավունքում, հաշվի առնելով կառավարչական գործունեության իրականացման որոշակի առանձնահատկությունը վարչական իրավական հարաբերությունների կարգավորման նպատակով, որոնք առաջանում են հասարակության վարչական քաղաքական ղեկավարման բնագավառում, հաստատված են պետական սահմանի պաշտպանության ռեժիմները, սահմանապահ ռեժիմը, պետական սահմանի անցագրային կետերի ռեժիմը, արտասահմանյան քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց մուտք գործելու ռեժիմը, որոնց ներդրման շնորհիվ պետության մեջ պետք է ապահովվի անձնական, հասարակական ու պետական անվտանգության բավարար մակարդակ, որն անհրաժեշտ է սեփական

---

<sup>43</sup> Տե՛ս **Марченко М.Н.** Тенденции развития права в современном мире. М., 2015, էջ 326-327:

ազգային հետաքրքրությունների՝ այլ պետությունների միջամտումից պաշտպանելու նպատակով:<sup>44</sup>

Դրա համար էլ իրավունքի տեսության համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում գիտնական-վարչագետների դիրքորոշումը մշակվել են վարչական-իրավական ռեժիմների հարցեր և ենթադրում են, որ հատուկ միջոցների թվին, որոնց միջոցով կատարվում է հասարակական հարաբերությունների կանոնակարգումը կոնկրետ վարչական-իրավական ռեժիմների ներմուծման ժամանակ, վերաբերում են՝

ա) նորմատիվ իրավական ակտեր, որոնք սահմանում են գործունեության հատուկ կարգ իրավական կարգավորման կոնկրետ բնագավառներում,

բ) վարչական իրավունքի սկզբունքները, որոնք օբյեկտավորված են նորմատիվ իրավական ակտերում,

գ) այս կամ այն պաշտպանվող բնագավառում ընդունված իրավական միջոցների իրականացման կազմակերպչական ապահովումը պետական մարմինների համակարգի ստեղծման համար, որոնք լիազորված են ձևավորել ու պահպանել համապատասխան ռեժիմը,

դ) որոշ լրացուցիչ կանոնների ներմուծումը կամ դուրսբերումը համընդհանուր նորմերից,

ե) տվյալ պաշտպանվող գոտում իրավահարաբերությունների զարգացման կարգի վերահսկողության համակարգի ու վարչական-իրավական ռեժիմի շրջանակներում գործունեության համար պատասխանատվության սահմանումը,

զ) իրավական կարգավորման հատուկ մեթոդի առկայությունը, որը հիմնված է կենտրոնացած միջոցի ու կարգավորման իմպերատիվ տիպի վրա, արտահայտվում է իրավահարաբերությունների սուբյեկտների իրավաբանական անհավասարության մեջ, որն առաջ է բերում սահմանափակ թույլատվական ու արգելքների մեթոդների լայն կիրառում, որոնք համադրվում են իրավունքի սուբյեկտների խիստ նպատակային դրդապատճառավորման հետ,

---

<sup>44</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: Ընդ. խմբ. Գ. **Դանիելյանի**: Երևան, 2012, էջ 343-344:

է) հատուկ կազմակերպչական, տեխնիկական, նյութական ու ֆինանսական միջոցների առկայություն:

Բացի դրանից՝ իրավագիտության մեջ կան “վարչական-իրավական միջոցներ” հասկացության այլ հեղինակային սահմանումներ, որոնցով նշանակում են՝

1) վարչական-իրավական նորմերի ամբողջ համակարգը, որը դիտարկվում է նրանց գործառնական նշանակության տեսանկյամբ սոցիալական խնդիրների լուծման, համապատասխան հասարակական հարաբերությունների կարգավորման համար,

2) լիազոր պետական մարմնի, պաշտոնատար անձի, հասարակական կազմակերպության կոնկրետ գործողությունները, որոնք ուղղված են վարչական-իրավական նորմերի իրականացմանը,

3) պետական մարմինների վարչական-իրավական գործունեության մեջ կիրառվող հասարակական հարաբերությունների ձևավորման, փոփոխության և դադարեցման միջոցները՝ համաձայն պետության առջև դրված խնդիրների:

Իրավական միջոցների այսպիսի բազմազանությունը իրավագիտության մեջ, մի կողմից, ճանաչվում է որպես բնական երևույթ: Ինչպես նկատում է Ս.Ս. Ալեքսեևը “իրավական միջոցների հարցը ոչ այնքան հարմարման խնդիր է իրավական գործունեության այս կամ այն տարրերի հատուկ ստորաբաժանումում, որքան նրանց հատուկ տեսլականի հարց խստորեն սահմանված ռակուրսում՝ նրանց գործառնական նշանակության, նրանց դերի որպես սոցիալական խնդիրների օպտիմալ որոշման գործիքների, հարց:<sup>45</sup>

Ավելին, այսպիսի մոտեցման համաձայն արտահայտվում է կարծիք, որ իրավական միջոցներ եզրույթի հետ համատեղ կարելի է կիրառել իրավական երևույթներ, իրավական գործոններ, իրավական պայմաններ եզրույթները, որոնք կարող են համարվել փոխկապակցված:

Մյուս կողմից, կա նաև այլ մոտեցում, որի դեպքում իրավական բոլոր երեւույթների նշանակման համար իրավական միջոց եզրույթի կիրառումը անընդունելի է համարվում:

---

<sup>45</sup> См. **Алексеев С.С.** Правовые средства: постановка проблемы, понятие, классификация // Советское государство и право. 1987, .-№ 6, էջ 14-15:

Այսպես, Բ. Ի. Պուգինսկին դեմ է գնում իրավական միջոցներ եզրույթի կիրառման հանդեպ, որոնք օգտագործվում են իրավական իրական երևույթների հետ, որոնք ունեն սեփական գիտականորեն սահմանված հասկացություններ: Հիմնավորելով իր տեսակետը՝ գիտնականը հղում է կատարում “Օկկամի ածելի” մեթոդաբանական սկզբունքի վրա, որի համաձայն արգելվում է գիտական շրջանառության մեջ օբյեկտների նշանակման համար նոր եզրույթների ներմուծումը, որոնք արդեն ունեն իրենց կոնկրետ անվանումները: Այսպիսով, գիտնականը գալիս է այն եզրակացության, որ իրավական միջոց եզրույթի ներմուծումը իմաստ ունի այնպիսի իրավական երևույթներից իրավական նորմերի, ինստիտուտների ու իրավահարաբերությունների անջատման դեպքում, որոնք չեն տեղավորվում ավանդական եզրույթների բովանդակության մեջ:<sup>46</sup>

Խուսափելով առաջին ու երկրորդ մոտեցումների ծայրահեղություններից պետք է նշել, որ “իրավական միջոցներ” հասկացությունը թույլ է տալիս ընդհանրացնել իրավական իրականության բաղադրիչների բազմազանությունը իրավական նորմեր, սուբյեկտիվ իրավունքներ ու պարտականություններ, իրավահարաբերություններ, իրավունքի իրականացման ակտեր և այլն, որոնք կոչված են ապահովելու իրավական կարգավորման նպատակների ձեռքբերումը գործելով նպատակ-միջոց-արդյունք միասնական կապի մեջ:<sup>47</sup>

Իրավական միջոցների հիմնական գիտական ու գործնական կիրառական նշանակությունը կայանում է, նրանում, որ նրանք բնորոշում են իրավական երևույթների գործառութային բաղկացուցիչը:

Ըստ Ս.Ս. Ալեքսենկի այն ենթադրում է տնտեսական ու սոցիալական խնդիրների լուծման հանդեպ իրավաբանական գործիքավորման այնպիսի կիրառում, որի դեպքում կհասնեն արդյունքի, որն իրականացնում է սոցիալական արժեքը, իրավունքի արժանապատվությունը և ապահովում է ձևավորվող հարաբերությունները հուսալիության ու կայունության իրավական ռեժիմներում, կապահովվեն սուբյեկտիվ իրավունքների հետ կարգավորման կապը, սուբյեկտիվ

<sup>46</sup> Пугинский Б.И., Եզվ. աշխ., էջ 92-93:

<sup>47</sup> См'у Малько А.В. Правовые средства: вопросы теории и практики// Журнал российского права. 1998. -№ .8, էջ 66; նույնի Правовые средства: понятие и признаки// Общая теория государства и права: академический курс. Т.3/ под ред. М.Н. Марченко. М., 2001, էջ 287:

իրավունքների խիստ շրջանակները, միաժամանակ նրանց երաշխավորվածությունը, պաշտպանվածությունը, իրավաբանական պարտականությունների իրական կատարումը երաշխավորող հուսալի միջոցների համալիրը, իրավաբանական գործողությունների, գործընթացային ձևերի ու մեխանիզմների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգը, որոնք ուղղված են սուբյեկտիվ իրավունքներին ու կոնֆլիկտային իրավիճակներում ճշմարտությանը ձգտելը:<sup>48</sup>

Դրանով իսկ իրավական միջոցները ապահովում են իրավունքի կարգավորող ազդեցության դրական գործոնների ուժեղացման համար հնարավորությունը վերացնելով արգելքները, որոնք նվազեցնում են իրավունքի ազդեցության արդյունավետությունը:

Ինչպես նշում է Վ.Մ. Սիրիխը, արդյունավետորեն գործող նորմերը կոչված են ամրագրել այնպիսի իրավաբանական միջոցներ, որոնք թույլ կտային չեզոքացնել բացասական գործոնները և ուժեղացնել դրականների ազդեցությունը: Հակառակ դեպքում բացասական գործոնների ազդեցությունը ավելի ինտենսիվ կլինի, քան իրավական միջոցների դեպքում: Համապատասխանաբար, իրավունքի նորմերի ազդեցության արդյունքները կլինեն այլ, քան պլանավորել էր իրավաստեղծ մարմինը:<sup>49</sup>

Այլ խոսքերով, եթե նպատակի ու արդյունքների միջև արգելքներ չլինեին, անհրաժեշտ չէին լինի նաև իրավական միջոցները, որոնք այս դեպքում հանդիսանում են իրավական կարգավորման մեջ առաջացող արգելքների հանդեպ յուրահատուկ հակազդումներ:

Ներկայացված մոտեցման շրջանակներում իրավական միջոց հասկացություն ունի կարևոր նշանակություն, այսպես կոչված, “գործիքային գիտական մոտեցման” զարգացման համար, որը բացահայտում է իրավական իրականության երևույթները՝ որպես տարբեր խնդիրների լուծման միջոցներ տնտեսական, կազմակերպչական, քաղաքական, սոցիալական: Գործիքային տեսությունը, ըստ էության, ներկայացնում է իրավունքի բնագավառի, որպես իրավական միջոցների համակարգի, նպատակաուղղված ու կենտրոնացած հետազոտություն:

<sup>48</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. М., 2008, էջ 276-277:

<sup>49</sup> Տե՛ս **Сырых В.М.** Теория государства и права. М., 2004, էջ 156-157:

Տվյալ մոտեցումը իրավագետներին ուղղորդում է նրան, որ իրավական իրականության երևույթները, որպես իրավական միջոցներ ու համալիրներ, դիտարկելիս պետք է ամբողջովին ուսումնասիրել նրանց հնարավորությունները պետության հիմնախնդիրները լուծելու համար: Դրանում է կայանում արդի իրավաբանական գիտության զարգացման արդյունավետ ու սոցիալականորեն պահանջարկված հեռանկարը. ուղղորդել այն պրակտիկայի ավելի գործուն ծառայության համար սոցիալական իրականության առավել հրատապ խնդիրների լուծման համար՝ իրավական կարգավորման օպտիմալացումը, իրավահամակարգի՝ սոցիալական արդյունավետ աշխատանքին ուղղորդումը:

Հետևաբար, իրավական միջոցների ժամանակին ու որակյալ կատարելագործման խնդիրը, իրավական ռեժիմների ու իրավական կարգավորման մեխանիզմներում նրանց օպտիմալ համադրության հիմնահարցը դառնում է ավելի արդիական, գիտականորեն ու գործնակորեն ավելի նշանակալից:

Այս տեսանկյունից ավելի հրատապ է դիտարկել ‘իրավական միջոցներ’ հասկացության վերաբերյալ մոտեցումները իրավաբանական գիտության մեջ:

Իրավաբանական գրականության մեջ, որպես կանոն նշվում է, որ իրավական միջոցները իրենցից ներկայացնում են իրավաբանորեն նշանակալի գործողությունների համադրություններ, որոնք իրականացվում են հայեցողության թույլատրելի աստիճանով սուբյեկտների միջոցով ու ծառայում են նրանց նպատակների իրականացմանը, իսկ ավելի նեղ իմաստով ‘սուբյեկտների կողմից համապատասխան խնդիրների լուծման, նպատակների հասնելու իրավաբանական միջոցներ’:<sup>50</sup>

Տվյալ մոտեցումը լուսաբանում է իրավական միջոցների հասկացությունը միայն գործունեության բնագավառում՝ որպես սուբյեկտների գործողությունների ու համակարգի իրավական ձևերի ու սահմանումների կիրառմամբ, որն ուղղված է իրավական գործունեության առջև դրված խնդիրների կատարմանը՝ իրավաստեղծում, իրավակիրառում, մեկնաբանություն:

---

<sup>50</sup> Տե՛ս **Протасов В.Н., Протасова Н.В.** Лекции по общей теории права и теории государства. М., 2010, էջ 499-500:

Այլ կարծիք է ներկայացված Ս.Ս. Ալեքսենի տարբեր տարիների աշխատանքներում: Այսպես, 1987թ. խնդրի առաջադրման ժամանակ գիտնականը սահմանում է իրավական միջոցներն ու եղանակները որպես սուբստանցիոն ինստիտուցիոն կարգեր ու ձևեր, որոնց կիրառումը առաջ է բերում իրավունքի ուժը և դրա շնորհիվ օժանդակում է իրական, փաստացի սոցիալ-տնտեսական արդյունքի առաջացմանը սոցիալական կյանքում<sup>51</sup>:

Ավելի ուշ աշխատանքում իրավական միջոցները բնորոշվում են որպես օբյեկտավորված սուբստանցիոն իրավական երևույթներ, որոնք ունեն ամրագրված որակներ, որոնք իրենց հերթին թույլ են տալիս իրականացնել իրավունքի ներուժը, նրա ուժը:<sup>52</sup>

Ընդհանրապես, իրավական միջոցները կարելի է բնութագրել որպես իրավական իրականության ինստիտուցիոն գոյացություններ, որոնց կիրառումը հատուկ իրավական գործունեության մեջ առաջ է բերում որոշակի արդյունքի ձեռքբերմանը սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյական և այլ խնդիրների լուծման մեջ, որոնք կանգնած են ժամանակակից հասարակության ու պետության առջև:

Մեր բնորոշման մեջ հիմնական ուշադրությունը կենտրոնանում է իրավական միջոցների, որպես իրավական կարգերի վրա, որոնք, ի տարբերություն իրավական գործունեության, կազմում են իրավունքի սուբստանցիան, այսինքն երևույթներ-կարգավորիչներ, որոնք կազմավորում են նյութ, իրավունքի հանգուցային կետեր, իրավական իրականության առաջնային կենտրոններ, որոնց շուրջ խմբավորվում են այլ իրավական երևույթներ՝ իրավունքի նորմեր, իրավահարաբերություններ, իրավակարողություն, լիազորություններ և իրավասություն, սուբյեկտիվ իրավունքներ ու պատկանություններ, պայմանագրեր, իրավաբանական պատասխանատվություն և պաշտպանության միջոցներ:

Այսպիսով, իրավական միջոցների իրավաբանական բնույթը ենթադրում է նրանց բաժանումը երկու մեծ խմբերի՝ սահմանման միջոցներ և արարքի միջոցներ:

---

<sup>51</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Правовые средства: постановка проблемы, понятие, классификация // Советское государство и право. 1987, -№. 6, էջ 12-19:

<sup>52</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. М., 2008, էջ 278:

Սահմանման միջոցները ձևավորում են իրավական կարգավորման նորմատիվ բազան, հանդիսանում են գործիքներ, որոնց օգնությամբ սուբյեկտները բավարարում են իրենց իրավական շահերը: Նրանց են վերաբերում իրավական նորմերը, իրավական ինստիտուտները, սուբյեկտիվ իրավունքները, իրավաբանական պարտականությունները, խրախուսումները, արտոնությունները, սկզբունքները, իրավունքի կանխավարկածը, իրավական ռեժիմները, իրավական մեխանիզմները և հասարակական հարաբերությունների այլ կարգավորիչներ, որոնք ամրագրված են օրենսդրության մեջ:

Արարքի միջոցներն իրենցից ներկայացնում են օրենքում սահմանված դրույթների, սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների գործնական իրականացման ակտեր: Իրավունքի իրականացման միջոցներից յուրաքանչյուրը արտահայտվում է առանձին վերցրած դեպքում իրավաբանորեն նշանակալի գործողության կամ անգործության, ինչ-որ մի արգելված արարքի կատարումից, պարտականությունից, պայմանագրի կնքումից, հայց ներկայացնելուց, հետաքննության անցկացումից հրաժարվելու տեսքով:

Միաժամանակ պետք է ասել, որ միջոց-արարքների, որպես իրավական միջոցների, ճանաչման մասին հարցը իրավագիտության մեջ դեռևս վիճելի է, որն առաջացնում է խնդրի շուրջ իր մոտեցումը շարադրելու անհրաժեշտություն:

Այսպես, եթե համաձայնվենք, այսպես կոչված, “սուբստանցիոն” մոտեցման ներկայացուցիչների հետ, ապա կարելի է նկատել հետևյալ հակասությունը: Մի կողմից, իրավական կարգավորման մեխանիզմ ասելով՝ հասկանում ենք իրավական միջոցների համալիր, ուր որպես բաղկացուցիչ մաս ներառված են սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների իրացման ակտեր, որոնք չեն ընդունվում իրավական միջոցների կողմից: Այստեղից բխում է նաև այլ հասարակական տարրերի անջատումը. իրավաբանական փաստեր, իրավունքի իրացման ակտեր, որը նույնպես հակասում է տրամաբանությանը և հիմնավորված չէ:

Սույն ատենախոսական հետազոտության հեղինակի կարծիքով, ճիշտ է համարվում այն մոտեցումը, որի համաձայն իրավական միջոցները պետք է ներառեն ինչպես

կատարյալի (իդեալականի), այնպես էլ իրականի տարրեր, որոնք ուղղված են գործիքների կիրառմանը:

Համարյա թե ամբողջ իրավական գործունեությունը իրավունքների ու պարտականությունների իրացման ակտերի միջոցով կարելի է վերագրել իրավաբանական տեխնոլոգիային՝ արարք-միջոցներին, այսինքն յուրաքանչյուր պետական մարմին իրականացնում է իրավակիրառիչ գործունեություն իրավունքի ու պարտականությունների (լիազորությունների) իրականացման միջոցով:

Իրավական միջոցների վերոնշյալ հասկացումը համապատասխանում է փիլիսոփայական մեկնաբանությանը, որի համաձայն այստեղ ներառված են ինչպես գործիքավորումը, այնպես էլ նրա կիրառումը ցանկալի արդյունքի ստացման համար, քանի որ նպատակի բովանդակության մեջ էականը փոխվում է պարտադիրի: Միջոցները դրանով իսկ պետք է ապահովեն պարտադիրի անցումը էականի: Նպատակին հասնելու միջոցները օբյեկտիվ առարկաներ կամ գործողություններ են, որոնք ներառված են նպատակային գործունեության կառուցվածքում ու ապահովում են որոշակի արդյունքի ստացում:

Մեր կողմից իրականացրած հետազոտության արդյունքերը հաստատում են, որ իրավական կարգավորման գործընթացը ստորաբաժանվում է երկու հիմնական փոխապահովող օղակներից՝

- ազդեցության միջոցներ, սուբյեկտների կամքի հանդեպ արտաքին գործոններ թույլատվություններ և արգելքներ, որոնք արտահայտված են իրավունքի նորմերում: Շարադրված եզրույթաբանությունում ոչ այլ ինչ են, քան սահմանիչ միջոցներ:

- իրավունքի իրականացման միջոցներն ամենակարգավորված հասարակական հարաբերություններում. սուբյեկտների՝ իրավական ազդեցության հանդեպ հակազդման արդյունքը թույլատրելի արարքների կատարում, արգելված գործողություններից հրաժարում:

Ելնելով վերոնշյալից՝ համոզված կարելի է արձանագրել, իրավական միջոցների համակարգում երկու մեծ ենթահամակարգերի առկայության մասին՝ սահմանիչ միջոցներ՝ գործիքներ և արարք-միջոցներ՝ տեխնոլոգիաներ:

Կարևոր է շեշտադրել հետևյալ հանգամանքը. եթե ենթադրենք այլ մի երևույթ, ապա իրավական կարգավորման համակարգում բացառապես սահմանիչ միջոցների առկայությունը երբեք չէր թույլ տա իրավունքի սուբյեկտներին պարտադիրի բնագավառից՝ իրավական նախատեսումներից, անցում կատարել դեպի էականի բնագավառ՝ նրանց իրականացում, նպատակից անցնել կոնկրետ արդյունքի:

Այս առումով պետք է ընդգծել, որ սահմանիչ միջոցներն ու արարք-միջոցները գործնականում դիալեկտիկորեն փոխկապակցված են ու ձևավորում են միասնական համակարգ, իրավական կարգավորման ամբողջական մեխանիզմ:

Այսպես, յուրաքանչյուր իրավական միջոց գործնականում դրսևորվում է երկու մակարդակներում. որպես մոդելներ<sup>53</sup> այն ամրագրված է այս կամ այն նորմատիվ իրավական ակտում, իրավաիրացման մակարդակում այս միջոցը մարմնավորվում է որպես որոշակի իրավական արարք կամ գործողություն:

Խորանալով նշված խմբերի բնութագրի մեջ անհրաժեշտ է նշել, որ սահմանիչ միջոցներին բնորոշ են հետևյալ նշանները

- հանդիսանում են սուբստանցիոն երևույթներ, քանի որ նրանք ձևավորում են իրավունքի սուբստանցիա, հանդիսանում են իրավական իրականության կենտրոններ, որոնց շուրջ խմբավորվում են այլ իրավական երևույթներ,

- ունեն տեղեկատվական բնույթ, որն արտահայտվում է նրանում, որ սահմանիչ միջոցները պարունակում են իրավունքի սուբյեկտների համար տեղեկատվություն, որը պարունակվում է իրավաբանական փաստերում, սուբյեկտիվ իրավունքներում, իրավաբանական պարտականություններում, խրախուսանքերում, պատիժներում և այլն,

- կրում են ստատիկ բնույթ, քանի որ ի տարբերություն արարք-միջոցներից, հանդիսանում են միայն մոդելներ, որոնք պահանջում են գործնական մարմնավորում իրավունքի սուբյեկտների գործունեության մեջ,

---

<sup>53</sup> См'и Правовые модели и реальность. Отв. ред. Ю.А. Тихомиров, Е.Е. Рафалюк, Н.И. Хлуденева. М., 2015:

- ամրագրում են օրենքներում, ենթաօրենսդրական ակտերում, որոնք պահանջում են որոշակի վարքագիծ՝ այդպիսով գտնվելով պարտադիր բնագավառում:

Իր հերթին արարք-միջոցները նույնպես տարբերվում են հատկանիշների որոշակի հանրագումարով՝

- ածանցյալ են սահմանիչ միջոցներին, քանի որ կապված են նրանց կիրառման հետ,  
- կրում են դինամիկ բնույթ, քանի որ կապված են իրավունքի սուբյեկտների գործունեության հետ, որոնք իրականացնում են իրենց իրավունքները, պարտականությունները և օրինական շահերը,

- արտացոլվում են սուբյեկտների վարքագծում, նախ և առաջ որպես իրավունքների ու պարտականությունների իրականացման ակտեր:

Միաժամանակ, չնայած սահմանիչ միջոցների ու արարք-միջոցների բազմազանությանը՝ գիտության մեջ առանձնացնում են հետևյալ ընդհանուր հատկանիշները, որոնք բնորոշ են իրավական միջոցների համար՝

- ընդհանրացված կերպով արտահայտում են իրավունքի սուբյեկտների օրինական շահերի ապահովման, նպատակներին հասնելու իրավական միջոցները,

- կրում են ինչպես տեղեկատվական, այնպես էլ էներգետիկ բնույթ,

- իրենց համընդհանրության մեջ հանդիսանում են իրավունքի, իրավական կարգավորման մեխանիզմի, իրավական ռեժիմների գործողության հիմնական տարրեր,

- առաջացնում են իրավական հետևանքներ,

- ապահովվում են պետության կողմից:

Այսպիսով, իրավական միջոցների համակարգը բարդ, բազմամակարդակ գոյացություն է: Տարազան կազմությունը, իսկ երբեմն նաև իրավական միջոցների մակարդակը, որոնք լինում են և՛ պարզ, և՛ համալիր, ենթադրում է հայտնի դժվարություններ նրանց դասակարգման ժամանակ: Սակայն նախաձեռնենք այսպիսի փորձ:

Ըստ կազմության պետք է տարբերել առանձին իրավական միջոցներ և նրանց համալիրներ:

Առաջին իրավական միջոցների թվին են դասվում թույլատվությունները, արգելքները, պարտականությունները և այլն, որոնցից ձևավորվում են համալիր իրավական միջոցներ՝ իրավունքի նորմեր, իրավական ինստիտուտներ, իրավահարաբերություններ, նորմատիվ ու իրավակիրառիչ ակտեր, իրավական մեխանիզմներ, իրավան ուժիմներ և այլն:

Ըստ նշանակության բոլոր իրավական միջոցները կարելի է ստորաբաժանել հիմնական և օժանդակ տեսակների:

Կախված կատարվող գործառնական դերից՝ իրավական միջոցները բաժանվում են կարգավորիչ, որն ուղղված է հասարակական հարաբերությունների կարգավորմանը, պաշտպանական, որն գործում է իրավական կարգավորման նպատակների ձեռքբերման ապահովման անհրաժեշտության դեպքում հարկադիր ուժի միջոցով իրենց իրավունքներն ու օրինական շահերը իրականացնող սուբյեկտների իրավունքի համար տարբեր տեսակի արգելքների առաջացման դեպքում:

Իր հերթին պահպանիչ իրավական միջոցները կարելի է ստորաբաժանել երաշխիքային, միջոցների, որոնք ուղղված են սուբյեկտիվ իրավունքների ու օրինական շահերի ապահովմանը, պետական հարկադրանքի միջոցների:

Ըստ իրավական կարգավորման առարկայի՝ իրավական միջոցները կարելի է դասակարգել սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական և այլ տեսակների: Այսպես վարչական իրավունքին բնորոշ են այսպիսի կարգավորիչ և արգելիչ իրավական միջոցներ:

Միաժամանակ կան նաև միջնուղային իրավական միջոցներ, որոնք տարածում են իրենց ազդեցությունը իրավունքի մի քանի ճյուղերի վրա: Օրինակ, այնպիսի իրավական միջոց, ինչպիսին պայմանագիրն է, կիրառվում է սահմանադրական իրավունքում՝ իշխանության ճյուղերի բաժանման և հավասարակշռման սկզբունքը, քաղաքացիական իրավունքում՝ առք ու վաճառքի քաղաքացիական-իրավական պայմանագիրը, ընտանեկան իրավունքում՝ ամուսնական պայմանագիրը, աշխատանքային իրավունքում՝ աշխատանքային պայմանագիրը:

Ըստ բնույթի իրավական միջոցները բաժանվում են նյութական-իրավական ու դատավարական տեսակների: Կան իրավական միջոցների դասակարգման նաև այլ հիմունքներ՝

- ըստ հետևանքների նշանակության՝ կարելի է ստորաբաժանել վարչական տուժանքների և քրեական պատիժների,
- ըստ ժամանակի գործողության՝ մշտական և ժամանակավոր,
- ըստ իրավական կարգավորման տեսակի՝ նորմատիվ և անհատական,
- ըստ տեղեկատվական-հոգեբանական ուղղվածության՝ դրդապատճառավորող՝ արտոնություններ և սահմանափակող՝ արգելքներ:

Իրավական միջոցների բնութագրման դեպքում չի կարելի չխոսել դրանց գործառույթների մասին: Յուրաքանչյուր միջոց կա այնքանով, որքանով այս ծառայում է ինչ-որ մի նպատակի հասնելուն: Իրավունքի միջոցների հիմնական գործառույթը կարելի է համարել իրավական կարգավորման նպատակներին հասնելը, խաղալով իրավաբանական գործիքների դերը համակարգով իրավական երևույթների համակարգում՝ նրանք ապահովում են սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը, երաշխավորում են նրանց օրինական ու արդարացի բավարարումը, նպատակաուղղված են սոցիալականորեն նշանակալից արդյունքին հասնելուն:

Ըստ Մալկոյի՝ նրանք ներդնում են քաղաքակրթվածություն առկա հասարակական հարաբերություններում, անօրինականի փոխարեն առաջարկելով առաջացող խնդիրների լուծման իրավական մեխանիզմներ, կոնֆլիկտների վերացման իրավական միջոցներ, իրավական էներգիա, իրավունքի սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի ճանապարհին կանգնած խոչընդոտների հաղթահարման մեջ”:<sup>54</sup>

Այսպիսով, իրավական միջոցները իրենցից ներկայացնում են իրավական երևույթներ՝ կարգեր, արարքներ, ձևեր, որոնց օգնությամբ իրականացնում են իրավական կարգավորման նպատակները:

---

<sup>54</sup> См'у **Малько А.В.** Правовые средства: понятие и признаки// Общая теория государства и права/ под ред. **М.Н. Марченко**, էջ 296-297:

Քանի որ իրավական ռեժիմը իրենից ներկայացնում է բարդ, համալիր, բարձր կազմակերպվածությամբ համակարգ, ավելի տրամաբանական է համարվում նրա կառուցվածքի մեջ տարբեր մակարդակների իրավական միջոցների ներառում:

Մեր կարծիքով, հիմնավորված է համարվում Ս.Ս. Ալեքսեևի մոտեցումը, որը իրավական միջոցների ընդհանուր հավաքածում առանձնացնում է՝

- առաջնային իրավական միջոցների՝ իրավական կարգավորման մեխանիզմի տարրերի ու նրա ենթահամակարգերի բաղկացուցիչների մակարդակը (իրավական նորմեր, սուբյեկտիվ իրավական իրավունքներ ու իրավական պարտականություններ),

- ամբողջական իրավական ռեժիմների մակարդակներ՝ իրավական միջոցներ, որոնք ապահովում են կարգավորման արտոնյալ կամ սահմանափակ կարգը,

- օպերացիոն իրավաբանական գործիքավորման մակարդակը՝ իրավական միջոցներ, որոնք կիրառվում են պետական մարմինների, ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների օպերատիվ գործունեության մեջ. պայմանագրեր, հայցեր, տուգանքներ, բողոքներ, որոնք ծառայում են որպես օժանդակ կապող օղակ հիմնական իրավական միջոցների փուլային բլոկերի միջև, որոնք իրենց հերթին միավորվում են իրավական ռեժիմներում:<sup>55</sup>

Ելնելով իրավական միջոցների, ըստ սուբստանցիոն մակարդակների, բաժանումից, իրավական ռեժիմի շրջանակներում նպատակահարմար է առանձնացնել կառուցվածքային տարրերի երեք խմբեր: Առաջին խումբը կազմում են իրավական կարգավորման, մեխանիզմի տարրերը իրավունքի նորմերը, իրավաբանական փաստերը, իրավունքի իրացման ակտերը, իրավակիրառիչ ակտերը, որն իր հերթին նույնպես հանդիսանում է համալիր իրավական միջոց: Իրավական միջոցների տվյալ խումբը կազմում է իրավական ռեժիմի մեխանիզմը, որի միջոցով ի կատար են ածվում նրա գործառույթները:

Իրավական կարգավորման մեխանիզմը իրավական ռեժիմի կառուցվածքի մեջ չի կարող ներառվել, քանի որ նրանց հարաբերակցության մասին կարելի է այսպես ասել,

<sup>55</sup> Алексеев С.С. Общая теория права. М., 2008, с. 276-277.

իրավական ռեժիմը իրավական կարգավորման յուրահատուկ մեխանիզմ է, իսկ իրավական կարգավորման մեխանիզմը իրավական ռեժիմի կմաղք:

Իրավունքի նորմերը իրավական ռեժիմի կառուցվածքում սահմանում են սուբյեկտի վարքագծի մոդելը ռեժիմային իրավիճակում, նրա առաջացման ժամկետը, վայրը, պայմանները, վարքագծի կանոնները, սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները իրավական կարգավորման օբյեկտների հանդեպ, հնարավոր սանկցիաները:

Իրավաբանական փաստերը իրավական ռեժիմում հանդիսանում են օղակ, որը կապում է իրավունքի նորմը և իրավահարաբերությունը: Այստեղ այն խաղում է երկակի դեր. առաջին հերթին, իրավաբանական փաստերը ներառում են իրավական ռեժիմ, օգնում են նրանց անցնել հնարավորի բնագավառից կարևորի բնագավառ, երկրորդ, արդեն առկա ռեժիմային հարաբերությունների շրջանակներում կարող են փոխել իրեց առաձնահատկությունը:

Իրավական ռեժիմի կառուցվածքում իրավական միջոցների տվյալ խմբի հետևյալ տարրերն են իրավահարաբերությունները: Իրավական ռեժիմի շրջանակներում իրավահարաբերությունները խաղում են հատուկ դեր սահմանելով ուղղվածության բնույթը, գործողության բնագավառը և գործառնական ուղղվածությունը: Իր հերթին, իրավահարաբերությունները իրենցից ներկայացնում են համալիր իրավական միջոց, որի տարրերի որոշ մասը հանդիսանում են ինքնուրույն իրավական գործիքներ, իսկ ուրիշները հանդիսանում են ինքնուրույն գոյացություններ:

Բանավիճային է իրավունքի սուբյեկտների ներառումը իրավական ռեժիմի նյութի մեջ: Իրավունքի սուբյեկտները միանշանակորեն կարող են ներառված լինել իրավահարաբերությունների, որպես իրավական ռեժիմի տարրի, կառուցվածքի մեջ, սակայն իրավական ռեժիմի մեջ տվյալ տարրը կխաղա որոշակի դեր ոչ բոլոր, այլ սահմանված դեպքերում, երբ իրավական ռեժիմը սահանվում է ոչ թե գործունեության տեսքով իրավական կարգավորման ու գործունեության տեսակների որոշակի օբյեկտների հանդեպ, այլ իրավունքի սուբյեկտների հանդեպ (օտարերկրյա քաղաքացիներ,անձինք

առանց քաղաքացիության, փախստականներ և այլն), այսինքն, երբ այս սուբյեկտները անցնում են տվյալ իրավական ռեժիմի կարգավորման որոշակիացնող օբյեկտի կարգ:

Իրավահարաբերությունների օբյեկտների բնութագրման ժամանակ իրավական ռեժիմի կազմում պետք է ուշադրություն դարձնել ինչպես հիմնական օբյեկտների առկայության, որոնց առթիվ առաջանում է իրավական ռեժիմը, այլ նաև լրացուցիչ օբյեկտների վրա, որոնք մտնում են իրավական ռեժիմի կազմի մեջ համապատասխան իրավահարաբերությունների շրջանակներում և ուղիղ ազդեցություն չեն ունենում իրավական ռեժիմի վրա:

Իրավունքի իրացման ակտերը, որպես իրավական ռեժիմի կառուցվածքային տարր, որը ձևավորվում է նրա ազդեցության գործընթացում, իրավական ռեժիմը կյանքի կոչելու նպատակ ունեն:

Երկրորդ խումբն են կազմում իրավական միջոցները, որոնք ապահովում են կանոնակարգման արտոնյալ կամ սահմանափակ կարգը, տվյալ եզրույթաբանությունում կարգը, որը հիմնված է առավելությունների կամ սահմանափակումների, այսինքն՝ իրավական ազդեցության դրդապատճառների, սահմանափակումների, թուլությունների, արգելքների, իրավական ազդեցության այլ միջոցների և նրանց հատուկ համատեղման վրա:

Եթե իրավական միջոցները, որոնք ներկայացված են առաջին խմբում, պատասխանատու են իրական ռեժիմի շրջանակներում իրավական կարգավորման հատուկ ուղղվածության ստեղծման համար, ապա դիտարկվող իրավական միջոցները բնորոշում են իրավական ռեժիմի բարեհարմարության/ անբարեհարմարության աստիճանը իրավունքի սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի բավարարման համար, այսինքն այս կամ այն իրավական ռեժիմի բնույթը:

Թույլտվությունների կամ սահմանափակումների գերակայումը այս կամ այն իրավական ռեժիմի շրջանակներում սահմանվում է նրա ազդեցության ոլորտով՝ իրավունքի բնագավառով և նրա կարգավորման մեթոդով:

Սահմանադրական, վարչական, քրեական, քրեակատարողական իրավունքի բոլոր դատավարական բնագավառներում կգործեն իրավական ռեժիմներ, որոնք հիմնականում

կառուցված են սահմանափակումների վրա: Քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային իրավունքում կգերակայեն ռեժիմներ, որոնք հիմնված են թույլատվությունների վրա: Օրինակ՝ գործարքների իրավական ռեժիմները քաղաքացիական իրավունքում հանդիսանում են մեղմ իրավական ռեժիմներ, քանի որ, ինչպես հետևում է քաղաքացիական-իրավական նորմերի մեծամասնության բովանդակությունից, հիմնվում են կողմերի միջև պայմանագրային հարաբերությունների վրա: Իրավական միջոցների երրորդ խումբը կատարում է օժանդակ գործառույթներ: Այն կազմում են օպերացիոն իրավական միջոցները՝ ինքնուրույն իրավական գործիքները, որոնք ունակ են բավարարելու իրավական ռեժիմի աշխատանքը՝ բողոք, տուգանք, հայց, պայմանագիր, միջնորդություն, բացարկ:

Օրինակ, ընտանեկան իրավունքում ամուսնական պայմանագիրը հանդիսանում է ինքուրույն իրավաբանական գործիք ամուսինների, գույքի պայմանագրային ռեժիմում, վճարեկ բողոքը դատարանի վարույթի դատավարական-իրավական ռեժիմում քաղաքացիական դատավարության իրավունքում և այլն:

Այսպիսով, իրավական միջոցները, որոնք ներառված են տարբեր իրավական ռեժիմների կազմի մեջ, չնայած իրենց բազմազանությանը, ունեն մի շարք ընդհանուր գծեր, որոնք թույլ են տալիս միավորել դրանք մեկ խմբի մեջ իրավական երույթների համակարգում, որոնց վրա պետք է ուշադրություն դարձնել այն բանի հետ կապված, որ նրանք հանդիսանում են հիմնական բաղադրիչը՝ իրավական ռեժիմ կատեգորիայի կառուցվածքում:

## **2.2 Իրավական սկզբունքներն ու երաշխիքները իրավական ռեժիմի կառուցակարգում**

Իրավական սկզբունքները և երաշխիքները նույնպես կազմում են իրավական միջոցների կառուցվածքային տարրեր:<sup>56</sup> Սակայն իրավական ռեժիմի բովանդակության համար հատուկ նշանակության ուժով վերջինիս տարրային կազմության շրջանակներում

---

<sup>56</sup> Մանրամասն տե՛ս **Скурко Е.В.** Принципы права. М., 2008:

նպատակահարմար է նրանց դիտարկումը իրավական այլ միջոցներից առանձին որպես ինքնուրույն կառուցվածքային տարր:

Նախ նշենք, որ չնայած իրավական միջոցների կարևորությանը իրավական ռեժիմի բնութագրման ժամանակ առավելությունը պետք է տրվի սկզբունքներին՝ որպես սահմանող գաղափարների, դրույթների, կարգերի, որոնք կազմում են իրավունքի առաջացման, զարգացման ու գործարկման բարոյական ու կազմակերպչական հիմքը: Հանդես գալով որպես համապարտադիր պահանջ, նրանք կատարում են համապատասխան կարգավորիչ գործառույթ ու անմիջականորեն ազդում են հասարակական հարաբերությունների վրա:

Իրավական ռեժիմը կենտրոնացած տեսքով արտացոլում է իրավական կարգավորման համակարգի ֆունկցիոնալ կողմը՝ հանդիսանալով վերջինիս հատուկ կարգ, որն արտահայտվում է իրավական միջոցների համալիրում: Հետևաբար, իրավական ռեժիմի սկզբունքների համակարգի համար բնորոշ են ընդհանուր օրինաչափություններ, ինչը և իրավունքի սկզբունքների համար:

Ըստ Ն.Ի. Մատուզովի պետական-իրավական երևույթների հարցը երկրորդական չէ, այլ շատ կարևոր է, տեսականորեն նշանակալի, թույլ է տալիս բացահայտել ուսումնասիրվող օբյեկտների բանական <<կրեդոն>>, որը հաստատում են իրավագիտության մեջ տվյալ հարցի բազմաթիվ հետազոտությունները:<sup>57</sup>

Դրա համար էլ, ինչպես և այլ իրավական երևույթներ, իրավական ռեժիմը իրականանում է որոշակի սկզբունքների հիման վրա: Այս անհրաժեշտ է նշել, որ իրավական ռեժիմը ունի բարդ կառուցվածք, որը միավորում է դատավարական գործունեության սկզբունքները, իրականացման միջոցներն ու նրա ապահովման երաշխիքները: Իրավագիտական գրականության մեջ իրավունքի սկզբունքները սահմանվում են որպես իրավական նորմերի հատուկ տարատեսակներ, իրավունքի բովանդակության որոշակի հիմնարար գծեր, ընդհանուր ու անհրաժեշտ

<sup>57</sup> Матузов Н.И., Малько А.В. Теория государства и права. Курс лекций. М., 1997, с. 479-480.

առանձնահատկությունների ղեկավարող գաղափարներ, որոնք սահմանում են իրավական կարգավորման ընդհանուր ուղղվածությունը:<sup>58</sup>

Իրավունքի սկզբունքների նշանակությունը իրավական կարգավորման գործընթացում հաստատվում է ՀՀ Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներում:<sup>59</sup>

Իրավական ռեժիմի սկզբունքների մշակումը գործնականում չի գտել իր անհրաժեշտ արտացոլումը իրավագիտական գրականության մեջ:

Դրա հետ մեկտեղ իրավական ռեժիմի սկզբունքների բնութագրման հետ կապված՝ որոշ ասպեկտներ մշակվել են Է.Ֆ. Շամսուրովայի ատենախոսական հետազոտությունում:<sup>60</sup> Մասնավորապես, փորձել է սահմանել վերոնշյալ սկզբունքները, և դիտարկվել է իրավական ռեժիմների ընդհանուր սկզբունքները:

Այսպես, Է.Ֆ. Շամսուրովան սահմանում է իրավական ռեժիմի սկզբունքները. “որպես իրավական իրականության այնպիսի հիմքեր, որոնք բացահայտվել և ձևակերպվել են օրենքում հասարակության կառավարման իրավական միջոցների, մեթոդների, առանձնահատկությունների արտացոլման համար, այսինքն՝ սկզբունքները ռեժիմի հիմքերն են, որոշակիացնող պահեր, որոնք բնութագրում են ռեժիմի էությունը և բովանդակային կողմերը:<sup>61</sup>

Իրավական ռեժիմի սկզբունքների համակարգում հեղինակը ներառում է իրավունքի գերակայության սկզբունքը, օրինականության սկզբունքը, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը, նպատակահարմարությունը, օբյեկտիվության սկզբունքը: Այստեղ առաջանում է պարզորոշ հակասություն: Իրավական ռեժիմի սկզբունքների սահմանման մեջ Շամսուրովը մատնանշում է գիտականության սկզբունքը և այս առթիվ հարց է առաջանում, թե ինչպես օրենսդրորեն գիտականության սկզբունքը կամրագրվի:

---

<sup>58</sup> Տե՛ս Актуальные проблемы теории государства и права. Отв. ред. **Р.В. Шагиева**, М., 2011, էջ 358-359; **Рассолов М.М., Малахов В.П., Иванов А.А.** Актуальные проблемы теории государства и права. М., 2010, էջ 185:

<sup>59</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Հատոր 2, Երևան, 2013, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի գործունեության մասին (2011թ. դեկտեմբեր – 2012թ. դեկտեմբեր): Երևան, 2013:

<sup>60</sup> Տե՛ս **Шамсумова Э.Ф.**, Նշվ. աշխ., էջ 93-94:

<sup>61</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 95:

Մի խումբ հեղինակներ իրավական ռեժիմի սկզբունքների սահմանման ժամանակ՝ կապված իրավագիտական գործունեության դատավարական-իրավական ռեժիմի հետ, դիտարկում են դատավարական-իրավական սկզբունքները՝ որպես այնպիսի հիմնադրույթներ, որոնք ուղղակիորեն ազդում են իրավաբանական գործունեության տեսակներից յուրաքանչյուրի օպտիմալության, նրա արդյունավետության վրա:

Դատավարական ռեժիմի սկզբունքների համակարգի մեջ ներառված են՝

ա) սահմանադրական սկզբունքները՝ օրինականությունը, իրավահավասարությունը, անմեղության կանխավարկածը,

բ) ընդհանուր դատավարական սկզբունքները՝ օբյեկտիվությունը, պրոֆեսիոնալիզմը, արդյունքների ճշմարտացիությունը, դատավարական տնտեսավարությունը, անկախությունը,

գ) մասնագիտացած սկզբունքները՝ իրավաբանական պատասխանատվության անվերադարձելիությունը, դեպի վատը շրջափոխության անթույլատրելիությունը և այլն:

Պետք է նշել, որ այս հեղինակների դիրքորոշման հետ հիմնականում պետք է համաձայնվել. այն կարելի է կիրառել այնքան, որքան կարելի է իրավական ռեժիմի հանդեպ:

“Իրավական ռեժիմի սկզբունքներ” հասկացությունը պետք է արտացոլի ինչպես վերջինիս պատկանելիությունը իրավունքին, այնպես էլ տվյալ կատեգորիայի ռեժիմային բնույթը՝ իրավունքի սուբյեկտների բարեհարմարության կամ անբարեհարմարության կոնկրետ աստիճանը ռեժիմային կարգավորման շրջանակներում իրենց նպատակներին հասնելու համար:

Այսպիսով, իրավական ռեժիմի սկզբունքները կարելի է սահմանել որպես ելակետային սահմանող գաղափարներ, հիմնադրույթներ, որոնք ստեղծում են իրավական միջոցների կիրառման որոշակի կարգ սուբյեկտների՝ իրենց հետաքրքրություններին հասնելու նպատակով:

Ինչ վերաբերում է իրավական ռեժիմի սկզբունքներին, ապա նրա մեջ պետք է ներառել՝

1) իրավական ռեժիմի ընդհանուր սկզբունքները՝ դրանք հիմնական ելակետերն են,

որոնք սահմանում են իրավական ռեժիմների հիմնական գծերը, նրանց բովանդակությունը և առանձնահատկությունները տարածվում են իրավունքի կարգավորման բոլոր բնագավառների վրա՝ անկախ նրանց կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների առանձնահատկությունից. ընդհանուր սկզբունքների որոշ մասը՝ օրինականությունը, օրենքի առջև քաղաքացիների իրավահավասարությունը, ամրագրված են ՀՀ Սահմանադրությունում (օրինակ՝ ‘Բոլորը հավասար են օրենքի առջև’ (ՀՀ Սահ. 28-րդ հոդված) ‘Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը’ (ՀՀ Սահ. 30-րդ հոդված) և այլն):

2) իրավական ռեժիմի մասնագիտացած սկզբունքներ:

Իրավական ռեժիմի ընդհանուր սկզբունքների թվին պետք է դասել իրավունքի գերակայության սկզբունքը գերակայությունների ու սահմանափակումների իրավական ռեժիմում, օրինականության սկզբունքը, իրավահավասարության սկզբունքը, համոզման ու հարկադրանքի համատեղման սկզբունքը, սոցիալական արդարության, իրավունքների ու պարտականությունների միասնականության սկզբունքը, մեղքի համար պատասխանատվության սկզբունքը:

Այս առումով անհրաժեշտություն է առաջանում բնութագրել իրավական ռեժիմի ընդհանուր սկզբունքները և դիտարկել դրանց արտացոլումը մասնագիտացված իրավական ռեժիմներում:<sup>62</sup>

Իրավունքի (օրենքի) գերակայության սկզբունքը<sup>63</sup> առավելությունների կամ սահմանափակումների իրավական ռեժիմում: Այս սկզբունքը իր մեջ համատեղում է երկու սկզբնաղբյուրներ: Առաջինի դեպքում ամեն ինչ թույլատրելի է, բացի նրանից, ինչը օրենքով ուղղակիորեն արգելված է: Երկրորդի դեպքում ամեն ինչ արգելված է, բացի նրանից, ինչը ուղղակիորեն թույլ է տրվում օրենքով: Այս սկզբնաղբյուրները հանդիսանում են այս կամ այն իրավական ռեժիմի կառուցման հիմք: Այսպես առաջինը օրինակ,

<sup>62</sup> Տե՛ս **Попинов П.В.** Правовые средства регулирования рыночных отношений России. Автореф. дис....канд. юрид. наук. Нижний Новгород, 2005, էջ 15-16:

<sup>63</sup> Մանրամասն տե՛ս **Ասատրյան Ա.** Իրավունքի գերակայության սկզբունքը արդի իրավական համակարգի խորապատկերում: Երևան, 2013, **Պետրոսյան Գ.** Իրավունքի գերակայությունը և դրա բաղկացուցիչները // Սահմանադրական դատարան. Տեղեկագիր, -N° 1, 2016, էջ 8-22:

արտահայտվում է ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների իրավական ռեժիմում, իսկ երկրորդը՝ պետական ծառայության ռեժիմում:

Դրա հետ կապված՝ Վ.Ս. Ներսեսյանցը նշում է հետևյալը. «Իրավական կարգավորման տրամաբանությունը և մեխանիզմը այնպիսին են, որ իրավական ազատության առավել չափով արտահայտման համար անհրաժեշտ է որպես իրավական կարգավորման ռեժիմի մեթոդ, միջոց, կարգ, կիրառել իրավական արգելքը, իսկ ազատության ավելի քիչ արտահայտման համար պետք է կիրառել իրավական թույլատվությունը»:<sup>64</sup>

Սա իրավական կարգավորման ընդհանուր օրենք է, իսկ իրավական ռեժիմի սահմանման համար անհրաժեշտ է նրանում առավելությունների ու սահմանափակումների համադրում կամ առաջինների, կամ երկրորդների սահմանող գերակայությամբ:

Օրինականության սկզբունքը սահմանադրական է, այն ամրագրված է Սահմանադրության 6-րդ հոդվածում, որի համաձայն. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով: Պետք է նշել, որ օրինականություն հասկացության իմաստը բարդ է և բազմապլան է:

Այսպես, գիտնականները օրինականությունը դիտարկում են որպես պետության մարմինների, հասարակական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների, գործունեության սկզբունք, իրավունքի սկզբունք, իրավական ռեժիմ, դեմոկրատական սկզբունք, փորձի ու իրավական արժեքների իրացման իրավական ձև, սկզբունք, մեթոդ, իրավական պետության ու քաղաքացիական հասարակության ձևավորման ու գործարկման դեմոկրատական իրավական ռեժիմի տարր, որը իրականացվում է իրավաչափ վարքագծի իրավաբանական ու սոցիալական պահանջների հիմնական սկզբունքների ու նորմերի տեսքով:

Ըստ Բայտինի՝ օրինականության խնդիրը իրավագիտության բոլոր բնագավառներում բոլոր հետազոտությունների հիմնահարցերից մեկն է,

<sup>64</sup> См'и Общая теория права и государства. М., 2015, էջ 276:

օրինականությունը, որպես իրավական առանձին երևույթ, կապող ու անցնումային օղակ է իրավունքի բնույթից, բովանդակությունից ու ձևերից դեպի իրացում, իրավահարաբերություններ ու իրավակարգ:<sup>65</sup>

Օրինականությունը որպես իրավունքի նորմերի խիստ հետևում, կատարում ու կիրառում է տարբեր գործառույթներ, այն իրավունքի բոլոր սուբյեկտների գործունեության մեթոդն է ու սկզբունքը, հանդես է գալիս որպես օրենքներին հետևելու համընդհանուր սահմանադրական պարտականություն, գործնականում ուղղված է իրավաբանական գործունեության ու պրակտիկայի արժեքների իրականացման ապահովմանը, այն պետք է ապահովի իրավաբանական պահանջների օրինականությունը իրավաստեղծման իրավակիրառման մեջ:

Իրավական ռեժիմի հանդեպ օրինականությունը ունի երկակի բնույթ. մի կողմից՝ իրավունքի բոլոր սուբյեկտները իրավական ռեժիմի օրինակներում պարտավոր են խստորեն հետևել օրենքի պահանջներին՝ իրենց իրավունքների և օրինական շահերի բավարարման համար: Մյուս կողմից՝ իրավական ռեժիմի պահպանումը, օրինակ, իրավակիրառ գործընթացում, ապահովում է գործի օրենքով նախատեսված կարգ, ընթացակարգ, օրինական վերջնարդյունք, այսինքն օրինականություն:

Դրանում է կայանում օրինականության ու իրավական ռեժիմի միջև դիալեկտիկական փոխկապակցվածությունը, արտահայտվում է դրանց համագործակցությունը և փոխապայմանավորվածությունը: Օրինականության խիստ ռեժիմի ապահովման անհրաժեշտության պայմաններում իրավակիրառման որակի բարձացումը պայմանավորված է իրավունքի արդյունավետ կիրառման իրավական երաշխիքներով, որոնցից կարևորագույնը իրավական ռեժիմն է:

Օրինականության ապահովման շրջանակներում անհրաժեշտ է հետևել նրա սկզբունքներին՝ որպես օրենքներին հետևելու առնչությամբ իրավաչափ վարքագծի դրդապատճառների ու սուբյեկտների ներքին համոզմունքների ձևավորման մեջ սկզբնաղբյուրներ: Օրինականության սկզբունքները պայմանավորված են հասարակական կյանքի օրինաչափություններով, միջնորդավորված կերպով կանոնակարգում են

---

<sup>65</sup> См'у **Байтин М.И.** Сущность права. Современное нормативное правопонимание на грани двух веков. М., 2005, էջ 338-339:

սոցիալական հարաբերությունները և արտահայտում են նորմատիվ իրավական ակտերի բովանդակության վերաբերյալ հասարակական կարծիքը, իրավահարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից նրանց պարտադիր պահպանումը:

Իրավագիտական գրականության մեջ բացակայում է օրինականության սկզբունքների համակարգի հարցով կարծիքների միասնականությունը: Նրանց թվին են դասվում օրինականության միասնականությունը, քաղաքացիների հիմնական իրավունքների ու ազատությունների երաշխավորվածությունը, կատարված իրավախախտման համար՝ համապատասխան պատասխանատվությունը, օրինականության ու նպատակահարմարության հակադրման կամ փոփոխման անթույլատրելիությունը, օրինականության ու մշակույթի փոխկապակցվածությունը և այլն:

Օրինականության միասնականությունը հիմնարար սկզբունք է: Նրա հիման վրա կազմակերպում են ու գործարկում միասնական իրավական տարածությունը ողջ պետության մասշտաբով: Օրինականության միասնականությունը հանդես է գալիս որպես իրավունքի կարևորագույն հատկանիշներից մեկի՝ նրա համակարգայնության գործնական իրականացումը:

Հիմնական իրավունքների ու ազատությունների երաշխավորվածությունը ոչ միայն նրա օրինականության, այլև իրավունքի կարևոր սկզբունք է: Նրա դերը օրինականության ապահովման մեջ պայմանավորված է մարդու ու քաղաքացու իրավունքներով ու պարտականություններով, օրինական շահերով, նրանց հետևելու անհրաժեշտությամբ:

Իր հերթին, կատարված իրավախախտման համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր հակաիրավական արարք պետք է ժամանակին բացահայտվի և դրանում մեղավորները պետք է կրեն օրենքով սահմանված պատիժը: Հարկադրանքի միջոցները կիրառվում են խիստ անհատական կարգով հավաքված ապացույցների հիման վրա և դատավարական պահանջներին հետևելով որոշակի գործընթացային- իրավական ռեժիմում:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք

պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները: Օրինականության սկզբունքի այս պահանջը նաև սահմանադրական պարտականություն է:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով ու կարգով: Նշված օրենսդրական պահանջից կարելի է եզրակացնել, որ իրավասու պաշտոնատար անձը դատավարական գործողություններ պետք է իրականացվի բացառապես օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

Քրեական դատավարությունում օրինականության ապահովման համար նախատեսվել են հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության, այդ թվում՝ դատական ակտերի բողոքարկման ընթացակարգեր:

Օրինականության սկզբունքի պահանջներից է այն, որ դատավարական գործունեությունը կարգավորող օրենսդրությունը պետք է լինի հստակ, մատչելի, կանխատեսելի և իրավական: ՀՀ սահմանադրական դատարանը 18.04.2006թ. ՍԴՈ-630 որոշման մեջ արձանագրել է, որ որևէ իրավական նորմ չի կարող համարվել “օրենք”, եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: ՀՀ սահմանադրական դատարանը 13.05.2008թ. ՍԴՈ-753 որոշման մեջ նշել է, որ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել “օրենք”, եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական ու

Ֆիզիկական անձանց իրենց վարքագիծը համապատասխանացնել դրան, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջացնել տվյալ գործողությունը: ՀՀ սահմանադրական դատարանը 18.03.2014թ. ՍԴՈ-1141 որոշմամբ սահմանել է, որ իրավական որոշակիության սկզբունքն իրավական պետության ու իրավունքի երաշխավորման անբաժանելի տարրերից է, առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավական որոշակիության սկզբունքը, ենթադրում է նաև, որ իրավակարգավորումների բոլոր սուբյեկտների, այդ թվում իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Այսպիսով, իրավասու մարմինների ու նրա պաշտոնատար անձանց գործունեությունը՝ միջոցներ, ձևեր, մեթոդներ, ընթացակարգեր, պետք է ամբողջությամբ համապատասխանեն օրենքներին ու այլ նորմատիվ իրավական ակտերին: Իրավունքի այլ սուբյեկտների իրավունքներն ու շահերը պետք է խստորեն պահպանվեն նրանց սահմանափակումից խուսափելու նպատակով:

Իրավական ռեժիմի օրինականությունը համակարգային հասկացություն է, ներառում է ինչպես պաշտոնատար անձանց գործողությունները օրենքով սահմանված իրավական ռեժիմում, այնպես էլ այլ անձանց գործողությունները, որոնք ներգրավված են ռեժիմային կարգավորման ոլորտում:

Իրավական ռեժիմի սկզբունքներից է օրենքի առջև հավասարության սկզբունքը. Բոլորը հավասար են օրենքի առջև (ՀՀ Սահ., հոդվ. 28):

ՀՀ քաղաքացիների հավասարության սկզբունքը օրենքի ու դատարանի առջև ենթադրում է արդարադատության իրականացում՝ համաձայն բոլորի համար միասնական, համանման օրենսդրության: Այստեղ ի նկատի ունեն ոչ միայն նյութական, այլև դատավարական օրենսդրությունը: Յուրաքանչյուր քաղաքացի, յուրաքանչյուր իրավաբանական անձ պետք է պաշտպանի իր իրավունքները դատարանում առանց օրենքով սահմանված կարգում որևէ սահմանափակման: Բացի դրանից՝ յուրաքանչյուր

Ֆիզիկական ու իրավաբանական անձ պետք է հետևի օրենքին, և ոչ մեկը չի կարող ազատվել այս պարտականությունից, անգամ դատարանի միջոցով:

Իրավահավասարության սկզբունքը իրավական ռեժիմների շրջանակներում իրականանում է նյութական ու դատավարական իրավահարաբերությունների մասնակիցների հավասար իրավաբանական կարգավիճակում: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև: Իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից արգելվում է:

Նշված սկզբունքից բխում է, որ քրեադատավարական կարգավորումները և ձևավորված իրավակիրառ պրակտիկան որևէ կերպ չեն կարող պարունակել խտրական վերաբերմունք՝ ելնելով սեռից, ռասայից, մաշկի գույնից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Այս պահանջը չի վերաբերում տարբեր դատավարական կարգավիճակներ ունեցող անձանց իրավունքների և պարտականությունների տարբերակմանը:

Դատավարական ռեժիմի հանդեպ իրավաբանական սկզբունքը ձևափոխվում է դատավարական սկզբունքի՝ իրավական գործընթացի մասնակիցների դատավարական իրավահավասարության սկզբունքի:

Այսպիսով, իրավաբանական հավասարությունը հանդես է գալիս որպես իրավական ռեժիմի կարևորագույն սկզբունք, էական սոցիալ-իրավական արժեք, որը պահպանվում է օրենքով:

**Համոզման ու հարկադրանքի համադրման սկզբունքը** բնորոշում է հասարակական հարաբերությունների վրա ազդեցության միջոցը նրանց կարգավորման նպատակով: Այն տարածվում է բոլոր իրավական ռեժիմների վրա, գործում է բոլոր բնագավառներում:

Համոզման մեթոդը հիմնականն է, հիմնվում է իրավահարաբերության սուբյեկտի բարի կամքի վրա: Այս մեթոդին է վերաբերում իրավադաստիարակիչ աշխատանքը: Այն թույլ է տալիս հասնել արդյունքի առանց բռնության կիրառման: Այն դեպքում, երբ համոզման միջոցներով դրական արդյունքի հնարավոր չէ հասնել, անհրաժեշտ է կիրառել ազդեցության այլ միջոց, որը կոչվում է հարկադրանք: Հարկադրանքի կիրառումը թույլ է տրվում դատավարական ձևում, որը սահմանված է օրենքով:

**Սոցիալական արդարության սկզբունքը** հանդիսանում է իրավունքի ընդհանուր սկզբունք և ունի բարոյական-իրավական բովանդակություն: Արդարությունը որպես բարի ու չար, լավ ու վատ, լիցքավորվում է կոնկրետությամբ՝ կախված կյանքի պայմաններից, տարբեր սոցիալական խմբերի ու հասարակությունների հոգևոր ու այլ պահանջմունքներից նրանց զարգացման համապատասխան փուլերում:<sup>66</sup>

Ինչպիսի կոնկրետ բովանդակությամբ կարող է լցվել սոցիալական արդարության համընդհանուր սկզբունքը իրավական ռեժիմներում:

Նրա կոնկրետ մարմնավորումը իրավական ռեժիմներում կարող է և պետք է արտահայտվի անկողմնակալության մեջ իրավունքի, գործի փաստացի հանգամանքների եզրակացությունների հիմնավորվածության, բոլորի՝ օրենքի և դատարանի առջև հավասարության, հանցագործության ու պատժի համաչափության, օրենսդրի նպատակների ու դրանց հասնելու միջոցների միջև համապատասխանության մասին վեճերի լուծման ժամանակ:

Բացի դրանից ռեժիմային կարգավորման շրջանակներում սոցիալական արդարության սկզբունքը արտահայտվում է ընդհանուր իրավական ռեժիմների շրջանակներում սահմանման մեջ իրավունքի բոլոր օբյեկտների համար, իրավունքի հատուկ ռեժիմների սահմանման մեջ իրավահարաբերությունների որոշ մասնակիցների համար:

---

<sup>66</sup> Մանրամասն տե՛ս **Կարապետյան Վ.Կ.** Արդարության կատեգորիայի ձևավորման և զարգացման հիմնախնդիրը իրավաքաղաքական մտքի պատմության համատեքստում: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2015:

Անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը՝ իրավական ռեժիմի հիմնարար սկզբունքներից է:<sup>67</sup> Հայաստանի Հանրապետության փոփոխված Սահմանադրության ... հոդվածը ամրագրել է, որ

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պարտավոր է իր երկրում ճանաչել իրավունքի գերակայության սկզբունքը և այն սկզբունքը, համաձայն որի յուրաքանչյուր անձ, ով գտնվում է իր իրավասության ներքո, օգտվում է մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից: Իրավունքի գերակայության սկզբունքից բխում է՝

ա) մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են,

բ) պետությունն ապահովում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան,

գ) պետությունը սահմանափակված է մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

«Սահմանադրությամբ և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային ակտերում ամրագրված է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, ինչպես նաև

---

<sup>67</sup> Մանրամասն տե՛ս **Ղազանյան Լիլիթ**, Անձի իրավական դրության հիմնախնդիրները ժողովրդավարական իրավական պետությունում: Երևան, 2015:

ծերբակաված, կալանավորված և ազատագրված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք:

Սույն հետազոտության հեղինակը կիսում է այն կարծիքը, որ ժամանակակից ազգային պետության մոդեռնիզացիայի պայմաններում անձի սահմանադրական պարտականությունների շարքը անհրաժեշտ է ընդլայնել և բերել իրավունքների շարքի հետ քիչ թե շատ ներդաշնակ հարաբերակցության: Առավել կարևոր պարտականությունները, որոնք ունեն մեծ սոցիալական նշանակություն, նպատակահարմար է ամրագրել նախ և առաջ երկրի սահմանադրությունում, որպեսզի քաղաքացիները դրանք ավելի լավ իմանան ու խստորեն հետևեն:<sup>68</sup>

Անձի իրավունքները և արժանապատվության հարգելու, ինչպես նաև իրավունքների ու պարտականությունների միասնականության սկզբունքը իրավական ռեժիմներում ամրագրված է իրավունքի ճյուղերի բոլոր բնագավառներում:

Այսպիսով իրավունքի սկզբունքի իրավական կարգավորման շրջանակներում իրավունքի սկզբունքները հնարավորություն են տալիս կարգավորել իրավունքի սուբյեկտների գործունեությունը սահմանված նորմատիվ չափումներով, հաջորդական ծրագրային ուղղվածությամբ, նրա իրականացման ընթացակարգային ամբողջական համակարգի:

**Իրավական երաշխիքներն էլ շատ մեծ կարևորություն ունեն իրավական ռեժիմի պահպանության համակարգում:**

Իրավունքի տեսության մեջ իրավական երաշխիքներ ասելով հասկանում են իրավական միջոցներն ու եղանակները,<sup>69</sup> որոնց միջոցով հասարակության մեջ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների իրականացումը, պայմանների համակարգը, որոնք ապահովում են մարդու հետաքրքրությունների բավարարումը օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների ամբողջական միասնականությունը, որոնք ուղղված են իրավունքների ու ազատությունների իրականացմանը, նրանց ոչ ամբողջական ու անհուսալի իրականացման պատճառների ու արգելքների վերացմանը և խախտումներից իրավունքների պաշտպանությանը, իրավաբանական նորմերով ու անհատական

<sup>68</sup> Մանրամասն տե՛ս **Эбзеев Б.С.** Введение в Конституцию России. М., 2013, էջ 213-214:

<sup>69</sup> Տե՛ս **Болдырев С.Н.** Юридические гарантии обеспечения прав и свобод личности в деятельности органов внутренних дел: теоретико-правовой аспект. Дис... канд. юрид. наук, Ростов-на-Дону. 2001:

իրավական համաձայնությամբ սահմանված հատուկ իրավական միջոցը, որն ուղղված է սուբյեկտիվ իրավաբանական իրավունքի կամ օրենքով պահպանվող հետաքրքրության իրականացմանը, իրավական միջոցները, որոնք արտահայտվում են նորմատիվ-իրավական նախատեսումներում, որոնց իրականացումը կարող է ապահովել կամ ապահովում են նորմատիվ-իրավական նախատեսումների իրականացման հնարավորությունը և այլն:

Երաշխիքները հանդես են գալիս որպես պայմաններ ու միջոցներ, որոնք ապահովում են ինչ-որ մի երևույթի իրականացումը, ինչպես նաև հանդես են գալիս քաղաքականի, տնտեսականի ու հոգևորի հետ համատեղ:<sup>70</sup>

Իրավական ռեժիմի իրավական երաշխիքների թվին են դասվում նորմատիվորեն ամրագրված իրավական պայմանները, միջոցները, որոնք կոչված են ապահովել իրավունքի սուբյեկտների, իրավունքների ու օրինական շահերի իրականացումը թույլատվական իրավական ռեժիմի դեպքում, պարտականությունների, սահմանափակումների ու արգելքների կատարման ապահովումը սահմանափակող իրավական ռեժիմի պայմաններում:

Իրավական երաշխիքների բնույթը արտացոլվում է նորմատիվ-իրավական ակտերի իրավադրույթներում և իրենցից ներկայացնում են՝

- առաջընթացային սոցիալական երևույթ, որն առաջ է եկել հասարակական հարաբերությունների կայունության ապահովման անհրաժեշտությունից,

- հանդես են գալիս օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների միասնականությամբ, որոնք համալիր ազդում են սուբյեկտների կողմից իրենց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի իրացման գործընթացի վրա,

- ապահովում են իրավահարաբերությունների կայունությունը և հարաշարժությունը,

- արտահայտված են հատուկ իրավական միջոցներով, որոնք ունեն նպատակային ուղղվածություն ու իրավաբանական ազդեցության կոնկրետ միջոցներ՝ թույլատվական, սահմանափակող, կողմնորոշված են դեպի արգելքների հաղթահարում, որոնք կանգնած

---

<sup>70</sup> См'у **Беляева Г.С.** Правовой режим: общетеоретическое исследование. дис. ... док-ра юрид. наук, Курск, 2013, էջ 98-99:

են իրավահարաբերությունների մասնակիցների օրինական շահերի բավարարման ճանապարհին,

- բարձրացնում են սոցիալական արժեքը և իրավաբանական հաստատությունների գործունակությունը՝ առաջ բերելով կոնկրետ իրավաբանական արդյունքներ, իրավական կարգավորման անարդյունավետության պատշաճ աստիճան:

Իրավական երաշխիքները<sup>71</sup> ներառված են իրավական կարգավորման մեխանիզմի մեջ, կատարում են կարգավորիչ, պաշտպանիչ ու ապահովող գործառույթներ:

Իրավական երաշխիքների ապահովող գործառույթի բացահայտումը չի համարվում հիմք նրա համար, որ նրանք ստանան օժանդակ գործիքների կարգավիճակ իրավական կարգավորման մեխանիզմում: Բանը նրանումն է, որ այս կամ այն իրավական միջոցի սահմանումը, որպես իրավական երաշխիքի, հնարավոր է միայն միատարր իրավահարաբերությունների շրջանակներում, որոնք ուղղված են այսպիսի հարաբերությունների մասնակիցների համար կոնկրետ նշանակալի արդյունքի ձեռքբերմանը:

Միաժամանակ տվյալ գործընթացի ընթացքում սահմանվում են նաև այլ միջոցներ, որոնք կատարում են միայն իրենց բնորոշ օժանդակ դերը առաջադրված խնդիրները լուծելու նպատակով, այսինքն իրավական երաշխիքները տվյալ իրավահարաբերության մեջ:

Գործնականում հնարավոր է իրավիճակ, երբ առաջանում է իրավական երաշխիքի իրականացման անհրաժեշտություն: Այդ ժամանակ իրավական երաշխիքը դառնում է նոր իրավահարաբերության հիմնական բովանդակությունը և նրա տեղն է զբաղեցնում այլ իրավական երաշխիքը: Հետևաբար, եթե ինչ-որ մի նորմատիվ որոշման իրականացում կատարում է ապահովող գործառույթ այլ որոշման համար, կարելի է խոսել նրա, որպես երաշխիքի մասին:

Բազմազան նորմատիվ-իրավական սահմանումները, որոնք ամրագրվել են, որպես իրավունքի աղբյուր, ընդունվող բոլոր պաշտոնական տեքստերում, հանդիսանում են

---

<sup>71</sup> Մանրամասն տե՛ս **Лощкарев А.В.** Правовые гарантии: теоретические проблемы определения понятия и классификации: автореф. дис....канд. юрид. наук. Краснодар. 2009:

իրավական երաշխիքների արտաքին ձև: Իրավական կյանքի<sup>72</sup> ժամանակակից պայմաններում իրավական երաշխիքները ձևակերպվել են ինչպես նորմատիվ ակտերում, այնպես էլ նորմատիվ պայմանագրերում:

Քանի որ որպես իրավական երաշխիքների արտահայտման ձև, միշտ հանդես են գալիս նորմատիվ-իրավական սահմանումները, որոնք տարազան են, ապա իրավական երաշխիքները միշտ կարելի է ստորաբաժանել՝

1) երաշխիքների, որոնք ամրագրված են նորմատիվ-իրավական ակտերում և իրենց հերթին արտահայտում են իրավունքի նորմեր: Նրանք ունեն կարգավորիչ ազդեցություն, առաջանում են իրավունքներ ու պարտականություններ, ստեղծում են որոշակի իրավական հետևանքներ. հենց այսպիսի երաշխիքները ավելի արդյունավետ են,

2) երաշխիքների, որոնք ամրագրված են նորմատիվ-իրավական ակտերում և իրենց հերթին չեն արտահայտում իրավունքի նորմեր՝ իրավական սկզբունքներ, սահմանումներ, իրավական հոչակագրեր: Չնայած դրան, հասարակական հարաբերությունների, իրավահարաբերությունների վրա, ազդեցության մեխանիզմը ավելի բարդ է, բայց արդյունքը շատ էական է:

Որպես անձի իրավունքների ու ազատությունների սահմանադրական երաշխիքներ՝ հանդես են գալիս իրավական սկզբունքները, սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների, իրավաբանական պարտականությունների արգելքների, սահմանափակումների, պահանջների, պաշտպանությանը, իրավասությանը ուղղված միջոցառումներ:

Մարդու ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանադրական երաշխիքների անհրաժեշտ տարրը հանդիսանում է այն անձանց իրավունքների ու ազատությունների խախտման համար իրավաբանական պատասխանատվությունը, որոնք կատարում են հանրային գործառույթներ պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմիններում:

Բացի դրանից՝ իրավական երաշխիքների շարքին են դասվում իրավախախտումների հայտնաբերման համար իրավունքի նորմերով հաստատված

---

<sup>72</sup> Իրավական կյանքի մասին մանրամասն տե՛ս Правовая жизнь в современной России. Теоретико-методологический аспект. Под ред. **Н.И. Матузов и А.В. Малько**. Саратов, 2005:

միջոցները, պատժի միջոցները և այլ իրավապահ միջոցները իրավունքների պահպանության դատավարական ձևերը:

Որպես եզրակացություն՝ կարելի է նշել, որ այդպիսին են հիմնական երաշխիքները, որոնք իրավական ռեժիմին թույլ են տալիս լինել կայուն ու հուսալի, իրավական կարգավորման արդյունավետությունը ապահովող:

### **2.3. Իրավական ռեժիմի գործառույթները. հասկացությունը և դասակարգման հիմքերը**

Իրավական ռեժիմների գործառույթները ուղղակիորեն կապված են իրավական կարգավորման նպատակների ու խնդիրների իրականացման հետ:

Իրավաբանական գրականության վերլուծությունը, որը նվիրված է իրավունքի գործառույթներին, թույլ է տալիս բացահայտել հետևյալ դրվագները, որոնք սահմանում են տվյալ կատեգորիայի բնույթը՝

- իրավունքի գործառույթները ածանցյալ են և արտացոլում են հասարակությունում իրավունքի նշանակությանը, արտահայտում են իրավունքի էական ու հիմնական գծերը և ուղղված են արմատական խնդիրների իրականացմանը, որոնք կանգնած են իրավունքի առջև հասարակության զարգացման տվյալ փուլում,

- դրանք իրավունքի՝ հասարակական հարաբերությունների վրա ազդեցության հիմնական ուղղություններն են, որոնցում կոնկրետացվում ու անհրաժեշտ նպատակաուղղվածությունն է ստանում իրավական կարգավորումը,

- բնութագրում են իրավական ներգործության՝ հասարակական հարաբերությունների վրա դինամիկան,

- իրավունքի առանձին գործառույթները միասնականության մեջ ներկայացնում են համակարգ:

Իրավունքի գործառույթի բնութագրերը ելքային են նաև իրավական ռեժիմի գործառույթների համար, որոնք կարելի է սահմանել իրավական ռեժիմների՝ առավել նշանակալից հասարակական հարաբերությունների վրա ազդեցության

հիմնական ուղղությունները նրանց օպտիմալ կարգավորման, արգելքների հաղթահարման համար, որոնք կանգնած են սուբյեկտների՝ սեփական իրավունքների ու օրինական շահերի բավարարման ճանապարհին:

Իրավական ռեժիմների գործառույթների դասակարգման մասին խնդիրը դիտարկելիս, պետք է անդրադառնալ իրավունքի գործառույթների դասակարգմանը:<sup>73</sup> Իրավագիտության մեջ առաջացել են դրանց ստորաբաժանման հետևյալ հիմնական տարբերակները՝

1. համընդհանուր սոցիալական ու հատուկ իրավական գործառույթներ՝ ստատիկ, դինամիկ ու պաշտպանական,

2. հիմնական հատուկ իրավաբանական գործառույթներ՝ կարգավորող, պաշտպանական և հիմնական սոցիալական գործառույթներ՝ տնտեսական, քաղաքական, գաղափարական, ոչ հիմնական հատուկ իրավաբանական՝ փոխհատուցող, վերականգնողական, սահմանափակող, և ոչ հիմնական սոցիալական գործառույթներ՝ էկոլոգիական, սոցիալական բառի նեղ իմաստով, տեղեկատվական,

3. ըստ իրավունքի ազդեցության նպատակի ու բնույթի կան երեք հիմնական, հատուկ իրավաբանական իրավունքի գործառույթներ՝ կարգավորիչ-ստատիկ, կարգավորիչ-դինամիկ, կարգավորիչ-պաշտպանական: Բացի դրանից կա իրավունքի դաստիարակչական գործառույթ՝ ոչ հիմնական, ոչ հատուկ իրավաբանական:

4. հասարակական հարաբերությունների բնագավառում՝ հիմնականներին ածանցյալ իրավունքի ընդհանուր գործառույթներ, որոնք կանոնակարգում են հասարակական հարաբերությունների միատարր խոշոր, լայն բնագավառները՝ տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային գործառույթները, և հիմնականներին ածանցյալ իրավունքի մասնավոր գործառույթները, որոնք կանոնակարգում են հասարակական հարաբերությունների որոշակի, քիչ թե շատ լայն բնագավառները, որոնց իրավական կարգավորումը, կապված կոնկրետ պատմական հանգամանքի հետ, առաջին պլան է

---

<sup>73</sup> Տե՛ս **Беляева, Г.С.** Правовой режим: общетеоретическое исследование. дис. ...док-ра юрид. наук. Курск. 2013, էջ 114-115:

մղվում, իր հանդեպ պահանջում է մեծ ուշադրություն՝ բնապահպանական, հարկային և այլն:

Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ իրավունքի գործառույթների ստորաբաժանումը ընդհանուր սոցիալականի ու իրավաբանականի այնքան էլ հիմնավորված չէ, քանի որ առաջին հերթին, իրավունքի բոլոր գործառույթները սոցիալական են, երկրորդ խոսքը գնում է իրավունքի կարգավորիչ կամ պաշտպանողական գործառույթների բեկման մասին՝ կապված հասարակական հարաբերությունների այս կամ այն բնագավառի հետ:

Ինչ վերաբերում է գործառույթների ստորաբաժանմանը համընդհանուր սոցիալական գործառույթների շրջանակներում՝ որպես քաղաքական, տնտեսական, դաստիարակչական, տեղեկատվական և այլն, այստեղ ևս բացակայում է դասակարգման պարզորոշ չափանիշը, առաջին դեպքում իրավական ազդեցության բնագավառն է, իսկ երկրորդում՝ ազդեցության բնույթը՝ գործիքավորում իրավունքի ինքնուրույն պաշտպանիչ գործառույթի առանձնացման վերաբերյալ ավելի նախընտրելի է այն մոտեցումը, որի համաձայն իրավունքը ունի երկու հավասարազոր գործառույթներ՝ կարգավորիչ և պաշտպանողական: Իրավունքի կարգավորիչ գործառույթը պետք է հաստատի ձևավորված կարգը կամ էլ պետք է ստեղծի նոր, ավելի որակյալ կարգ հասարակական հարաբերությունների համակարգում: Պաշպանական գործառույթի նպատակը կարգի պահպանման ապահովումն է, գործոնների վերացումը, որոնք հանդես են գալիս որպես խոտան հասարակության բնականոն գործառնության համար հատուկ միջոցների օգնությամբ և որպես կանոն, դուրս են գալիս իրավական կարգավորման սովորական մեթոդների շրջանակներից:

Իրավունքի գործառույթների բացահայտումը, որպես ինստիտուցիոնալ, խրախուսական-կողմնորոշիչ, երաշխավորական, արգելքային և այլն, հնարավոր է միայն առանձին բնագավառների, անգամ իրավունքի նորմերի ու ինստիտուտների մակարդակում:

Այսպիսով իրավական ռեժիմի բնութագրման ժամանակ առաջարկվում է տարբերակել նրա հետևյալ գործառույթները՝

1. ըստ ազդեցության բնույթի ու նպատակի,

- կարգավորիչ, իր երկու ենթատեսակներով՝ ստատիկ ու դինամիկ,
- պաշտպանիչ, իր ենթատեսակներով՝ կանխարգելիչ, իրավավերականգնողական, փոխհատուցողական, պատժիչ, դաստիարակիչ

2. ըստ հասարակական հարաբերությունների՝

- տնտեսական գործառույթ, որը հանդիսանում է իրավունքի դերի արտացոլում՝ որպես տնտեսական գործընթացների հիմնական, առավել կարևոր կարգավորիչ,

- քաղաքական, որը կոչված է կարգավորել քաղաքական իշխանության կարգավորման ընթացակարգը՝ որպես յուրաքանչյուր հասարակության կենտրոնական օղակ, առանց որի անհնար է նրա արդյունավետ կազմակերպումը,

- մշակութային գործառույթը, որն արտացոլում է մարդկանց կենսագործունեության մտավոր-կրթական բնագավառի վրա իրավական ազդեցության աստիճանը,

- սոցիալական գործառույթը, որը կապված է հասարակության յուրաքանչյուր անդամի բնական 'կենսագործունեության ապահովման հետ, այսինքն ժամանակակից հասկացմամբ, կրթություն, բժշկական օգնություն ստանալու երաշխիքի հետ:

Իրավական ռեժիմի կարգավորիչ գործառույթը ուղղված է նրանում իրավական միջոցների համալիրի միավորմանը, իրավունքի սուբյեկտի իրավունքի և շահերի բավարարմանը:

Իրավական ռեժիմներում կարգավորիչ-ստատիկ գործառույթի օգնությամբ տեղի է ունենում քաղաքացիների իրավական ու գործունակության ամրագրումը, քաղաքացիների իրավական կարգավիճակի փոփոխությունը և ամրագրումը, պետական մարմինների իրավասության սահմանումը, պաշտոնատար անձանց լիազորությունների ու իրավաբանական անձանց իրավական կարգավիճակի սահմանումը:

Կարգավորիչ-դինամիկ գործառույթի միջոցով իրականանում է իրավական փաստերի սահմանումը, որոնք կապված են իրավահարաբերությունների առաջացման, փոփոխության ու դադարեցման հետ, իրավունքի սուբյեկտների միջև կոնկրետ իրավական կապի սահմանումը, իրավական կարգավորման օպտիմալ տիպի որոշումը կոնկրետ հասարակական հարաբերությունների հանդեպ: Կարգավորիչ իրավական

միջոցների այն հատվածը, որը սպասարկում է իրավունքի սուբյեկտների գործունեությունը ներառված է կարգավորիչ-դինամիկ գործառույթի բովանդակության մեջ:

Իրավական ռեժիմի պաշտպանական գործառույթը իրավական ազդեցության ուղղություն է, որը կապված է իրավական կարգավորման հարաբերությունների պաշտպանության, իրավախախտի հանդեպ իրավունքում նախատեսված հարկադրանքի միջոցների կիրառման հետ:

Պաշտպանիչ գործառույթի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն բնորոշում է իրավունքը որպես մարդկանց վարքագծի վրա ազդելու հիմնական միջոց, որն արտահայտվում է նրանց կամքի վրա սանկցիայի, արգելքների սահմանման, պաշտպանական միջոցների իրականացման ու իրավաբանական պատասխանատվության ազդեցության մեջ:

**Սահմանափակումների վրա հիմնված իրավական ռեժիմներ:** Սահմանափակումը իրավունք է, որը սահմանափակում է ինչ-որ մեկի իրավունքներն ու գործողությունները: Սահմանափակման հոմանիշներն են կրճատումը, սահմանը, կտրվածքը, կասեցումը, հակացուցումը, ճնշումը, լրկալիզացիան և այլն:

Գիտության մեջ իրավական սահմանափակումների հասկացության ու բնույթի մասին հարցը վերջիններիս բարդության ու բազմաբնագավառության տեսանկյունից բանավիճային է: Իրավաբանական գրականության մեջ հետազոտվում են սոցիալ-իրավական սահմանափակումները, իրավական սահմանափակումները որպես իրավաբանական կատեգորիա, մարդու ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրավական սահմանափակումները, պետական իշխանության սահմանափակման հիմնադրույթը, պետական իշխանության իրավական սահմանափակումների հասկացությունը և համակարգը, այդ թվում կապված վերջիններիս՝ պետության սահմանադրական կայունության վրա ազդեցության հետ:<sup>91</sup>

Սահմանափակումները դիտարկվում են տարբեր տեսանկյուններից. հասարակական հարաբերությունների կոնկրետ տեսակի պահանջմունքների ու նրանց վրա ազդող համապատասխան իրավական միջոցների տեսանկյունից, որպես իրավական կարգավորման մեթոդներ ու միջոցներ:

Սույն աշխատանքում հեղինակը իրավական սահմանափակումը դիտարկում է որպես իրավաբանական ձև, որն իրենից ներկայացնում է բացառությունների, կոնկրետ արգելքի կամ թույլատվության դուրսբերում, ինչ-որ մի իրավունքից զրկվելու կամ ինչ-որ մի պարտականություն իրականացնելու համար լրացուցիչ պայմանների ներդրում:

---

<sup>91</sup> Տե՛ս **Квиткос А.Ф.** Конституционно-правовые основы ограничения прав и свобод человека и гражданина в Российской Федерации. Дис...канд. юрид. наук. М., 2007:

Որոշ հեղինակներ դիտարկում են իրավական սահմանափակումը որպես տիպային հասկացություն, ըստ բանաձևի, իրավական արգելքի հանդեպ, որոնք իրականացվում են սուբյեկտիվ իրավունքի միջոցով:<sup>92</sup>

Վերոնշյալ խնդրում ավելի բարդ է իրավական սահմանափակման ու իրավական արգելքի միջև հարաբերակցության խնդիրը, որն առաջարկվում է դիտարկել «իրավական սահմանափակում» հասկացության սահմանման ենթատեքստում:

Սահմանափակումը որպես հասկացություն, որպես կանոն, շատ մոտ է արգելքին, սակայն ուղղված է ոչ թե այս կամ այն հասարակական հարաբերության լիակատար ճնշմանը, այլ նրա պահպանմանը կոշտ սահմանափակված շրջանակներում: Սահմանափակումը սահմանվում է որպես արգելք, բայց այն ոչ ամբողջովին է իրացված:

Որոշ հեղինակներ սահմանափակումը համարում են իրավական կարգավորման ինքնուրույն միջոց:<sup>93</sup>

Յուրաքանչյուր արգելք սահմանափակում է, բայց յուրաքանչյուր սահմանափակում արգելք չի իրավունքի բնագավառում:

Մասնավորապես, Ի.Մ. Պրիխոդկոն, սահմանում է իրավական սահմանափակումները որպես իրավական միջոց, որն ուղղված է իրավական սուբյեկտը որոշակի սահմանների մեջ պահելուն հասարակական հարաբերությունները կարգավորելու նպատակով կոնտրսուբյեկտի հետաքրքրություններն ապահովելու ճանապարհով: Արտահայտվելու ձևով, նրանով առանձնանում են իրավական սահմանափակումների այնպիսի տեսակներ, ինչպիսին են արգելքը, կասեցումը, պարտավորությունները, իրավունքների նվազեցումը, չափերը, սահմանները, ցենզերը, պատիժները, պարտադրանքի, արգելանքի, հանման միջոցները:<sup>94</sup>

---

<sup>92</sup> **Гончаров С.Ю.** Политико-правовые ограничения в российском государственном управлении: автореф. дис... канд. юрид. наук. Ростов-на-Дону. 2009, **Приходько И.М.** Ограничения в российском праве. Проблемы теории и практики. Дис...канд. юрид. наук. Саратов, 2001:

<sup>93</sup> Տե՛ս օրինակ՝ **Приходько И.М.** Ограничения в российском праве. Проблемы теории и практики. Дис...канд. юрид. наук. Саратов, 2001, էջ 113-114:

<sup>94</sup> **Приходько И.М.**, նշվ. աշխ., էջ 121:

Նույն հեղինակը իրավական սահմանափակումների մեջ տեսնում է օրինական գործունեության զսպում, որը պայմաններ է ստեղծում կոնտրսուբյեկտի շահերի պահպանման և պաշտպանության մեջ հասարակական շահերի բավարարման համար. դրանք իրավունքում հաստատված սկզբունքներ են, որոնց սահմաններում սուբյեկտները պետք է գործեն, բացառություն են անձանց, գործունեության որոշակի հնարավորությունները:<sup>95</sup>

Այս տեսակետի հետ կարելի է համաձայնվել, քանի որ իրավական սահմանափակումները իրավաբանական գործիքներ են, որոնց միջոցով ապահովում է իրավաբանական կարգավորման որոշ նպատակների հասնելը, դրանք արտահայտվում են երկու հիմնական ձևերով՝ կամ որպես որոշակի իրավունքի լրիվ արգելք (ազատության), որը պայմանավորված է տարբեր տեսակի օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով, կամ որպես հնարավոր, թույլատրելի վարքագծի տարբերակների նվազեցում (որոշակի իրավունքի կամ ազատության սահմաններում) իշխանատար մարմնի կողմից, առաջին հերթին օրինաստեղծ սուբյեկտների կողմից, նման վարքագծի համար տարբեր տեսակի սահմանների (տարածական, ժամանակի սահմաններից, սուբյեկտիվ և այլն) հաստատման ճանապարհով:

Կարիք չկա սահմանափակումը դիտարկել թույլտվությունների, արգելքների ն հրամանների հետ՝ որպես իրավական կարգավորման միջոցների հետ միասին, քանի որ տվյալ պարագայում սահմանափակումը հանդես է գալիս որպես որոշակի սպեցիֆիկ գործընթաց (կամ արդյունք), որին կարելի է հասնել հետևյալ միջոցների միջոցով. իրավական սահմանափակումը պետք է հասկանալ որպես ընդհանրացնող հասկացություն, որն իրականացվում է իրավական կարգավորման բոլոր վերոնշված միջոցների միջոցով, չնայած մեծ մասամբ արգելանքների և դրական պարտավորությունների միջոցով:

Սահմանափակման և արգելքի (կամ պարտավորեցման) հարաբերակցության որպես ընդհանուր և մասնավոր պետք է համարել, որ սահմանափակումը կարող է իրավական արգելք դառնալ կամ պարտականության միայն կոնկրետ իրավական նորմի

---

<sup>95</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 122-123:

դիսպոզիցիայի մակարդակում, և միայն այդ ժամանակ նշված դիրքորոշումը կարող է համարվել ամբողջապես արդար:

Ինչ վերաբերում է սահմանափակման՝ որպես որոշ գործընթացի, արդյունքի և ընդհանուր արգելքի, դրական պարտավորեցման հարաբերակցությանը որպես իրավական կարգավորման միջոցների, ապա այստեղ սահմանափակումն իրականացվում է վերջիններիս միջոցով և կարող է արտահայտվել սուբյեկտիվ իրավունքի ծավալի ժամանակավոր փոփոխությամբ (նրա փոքրացման, լրիվ զրկելու, կասեցման), կոնկրետ արգելքներ, պարտականություններ, սահմաններ, ցենզեր, պատժի միջոցներ, պարտադրանքներ և այլն հաստատելով:

Վերոնշված տեսակետների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել սահմանափակումների վրա հիմնված իրավական ռեժիմների հետևյալ հիմնական հատկանիշները.

- դրանք կրում են նորմատիվ-իրավական բնույթ, այսինքն ենթակա են գործող օրենսդրության մեջ ամրագրմանը;

- ստեղծում են անբարենպաստ (իսկ երբեմն նաև խիստ անբարենպաստ) պայմաններ սուբյեկտների օրինական շահերը բավարարելու հարցում, ուղղված են նրանց զսպմանը և միևնույն ժամանակ կոնտրաագենտների կամ պետության կողմից հսկվող հասարակական շահերի բավարարմանը,

- արտահայտվում են սուբյեկտի իրավունքների (ազատությունների, այլ հնարավորությունների) ծավալի նվազեցմամբ,

- իրականացվում են որպես կանոն ընդհանուր իրավական արգելքների և դրական պարտավորությունների միջոցով,

- արտահայտվում են այնպիսի իրավական միջոցներում, ինչպիսին են կասեցումը, սահմանների, ցենզերի, պատժի, պարտադրման միջոցների և այլն հաստատումը,

- ուղղված են անձի պետության համար հակաօրինական և ոչ ցանկալի վարքագծի զսպմանը, հասարակական շահերի պահպանմանը:

Շարունակելով հետազոտությունները, պետք է վերադառնալ սահմանափակումների վրա հիմնված իրավական ռեժիմի հասկացությանը:

Իրավաբանական գրականության մեջ տվյալ իրավական ռեժիմը, որի հիմքում ընկած է իրավական կարգավորման թույլատրող տեսակը, դիտարկվում է հետևյալ կերպ:

Ա.Ս. Ալեքսեևը սահմանում է տվյալ իրավական ռեժիմը որպես երկրորդական (առաջնային իրավական ռեժիմի մոդիֆիկացիան), որը հատուկ սահմանափակումներ է մտցնում, որոնք արտահայտվում են լրացուցիչ արգելքների և դրական պարտավորությունների միջոցով:<sup>96</sup>

Այս սահմանման մեջ կարևոր ինֆորմացիա է պարունակվում այն մասին, որ դիտարկվող իրավական ռեժիմը հանդիսանում է ընդհանուր իրավական ռեժիմի ենթատեսակ (մոդիֆիկացիա), ինչպես նաև իրավական կարգավորման միջոցների ցուցումներ, առավելապես օգտագործվող տվյալ իրավական ռեժիմի սահմաններում:

Ա.Վ. Մալկոն իր հերթին, սահմանափակող իրավական ռեժիմը բնութագրելիս, գրում է, որ ի տարբերություն խթանող իրավական ռեժիմի, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում կոնկրետ խմբի շահերի բավարարման համար, սահմանափակող իրավական ռեժիմն ուղղված է նրանց կոմպլեքս զսպմանը: Բացի այդ, սահմանափակման իրավական ռեժիմների մեջ գիտնականն առանձնացնում է պարտավորեցնողը, արգելողը, պատժիչը և այլն:<sup>97</sup>

Նշված սահմանման մեջ կարելի է գտնել դիտարկվող իրավական ռեժիմների այլ էական բնութագրերը, հատկապես նշումները այնպիսի հատկանիշների, ինչպիսին է շահերի համալիր պահպանումը, ինչպես նաև նրանց դասակարգմանը:

Առաջին հերթին, իրավական ռեժիմը, որը հիմնված է սահմանափակումների վրա, ընդհանուր առմամբ իրավական ռեժիմի տեսակ է (մոդիֆիկացիա), որը տարբերակում է իր կողմից օգտագործվող իրավական միջոցների հավաքածուն, որոնք զսպում են (ստեղծում են) խոչընդոտներ իրավունքի սուբյեկտների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրականացման համար: Դրանք սահմաններ են, ցենզեր, պատժի չափեր, պարտադրանքներ (հրամաններ) և այլն:

<sup>96</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Общие дозволения и общие запреты в советском праве. М., 1989, էջ 190:

<sup>97</sup> Տե՛ս **Մալկո Ա.Վ.**, նշվ. աշխ., էջ 211-212:

Քաղաքացիների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց վրա կարող են դրվել լրացուցիչ պարտականություններ:

Երկրորդ, այն իրենից ներկայացնում է իրավական կարգավորման եղանակ (կարգ), որը հիմնված է իրավական կարգավորման այնպիսի միջոցների վրա, ինչպիսիք են ընդհանուր արգելքները, դրական պարտականությունները, և իրավական կարգավորման համապատասխան միջոցների վրա՝ կոնկրետ արգելքներ, պարտականություններ և այլն:

Տվյալ հատկանիշի բնութագրման ժամանակ հեղինակը գիտակցորեն շրջանցում է իրավական կարգավորման տվյալ տիպը, այդ իրավական ռեժիմի պատկանելիության հարցը, քանի որ այն չի կարելի անվանել թույլատրելի, քանի որ նրա հիմքում ընկած են ոչ միայն արգելքներ, այլև դրական պարտականություններ: Նրա բնութագրային առանձնահատկությունները կարելի է բնորոշել նախատեսող-արգելող կամ պարտավորեցնող-արգելող բառակապակցությամբ:

Իրավագիտության կողմից ավելի ու ավելի հաճախ են ձեռնարկվում իրավունքի որոշ բնագավառների շրջանակներում իրավական կարգավորման նոր տիպերի բացահայտման փորձեր:

Իրավական ռեժիմի շրջանակներում ընդհանուր արգելքների, որպես իրավական կարգավորման հիմնական միջոցի դիտարկումը, որը հիմնվում է սահմանափակումների վրա: Իրավական արգելքները ստանում են կարևորագույն նշանակություն օրենսդրական համակարգում: Արտաքնապես արգելքը կարող է թվալ կարգավորման ոչ ժողովրդական տեսակ, իրականում այն հանդիսանում է վարքագծի ազատության իրականացման իրավական միջոց, քանի որ ներկայացնում է արգելքի սահմաններից դուրս ամբողջական ու հավասար ազատությունը:

Այսպես, ինչում է կայանում իրավական կարգավորման տվյալ տիպի առանձնահատկությունը: Մի քանի բառերով նրա էությունը կարելի է այսպես մեկնաբանել, որպես կարգավորման միջոցի օրենսդիրը դիմում է այն ժամանակ, երբ անհրաժեշտ է հասարակությանը բաժանել անցանկալի վարքագծից:

Իրավական արգելքի այլ նշանների սահմանմանը, որոնք կազմում են նրա էությունը, թույլ են տալիս իրավագիտության մեջ տվյալ երևույթի մասին հայացքների մասին ասվածը:

Սույն աշխատանքում պարունակվում են իրավական արգելքների մի քանի նախանշաններ, որոնք ընկալվել են ավելի ուշ ժամանակների հետազոտողների կողմից, այսինքն որոշակի նշումներ՝ կապված իրավական արգելքի օբյեկտների, պարտավորության պասիվ բնույթի, հասարակական հարաբերությունների կարգավորման արգելքի նշանակությունը:

Ս.Ս. Ալեքսեևը իրավական արգելքների բնութագիրը հետազոտելիս գրում է, որ իրավական արգելքները համարվում են իրավակարգի ապահովման անհրաժեշտ տարր, որոնց միջոցով ապահովվում է հասարակական հարաբերությունների ամրագրումը, սահմանվում են պետական ու քաղաքական կարգապահության կարևորագույն կողմերը, բարոյական պահանջների նվազագույնը, թույլատրելի ու անթույլատրելի սահմանները քաղաքացիների վարքագծում, պետական մարմինների գործողություններում:

Դրանով տվյալ սահմանման շրջանակներում մատնանշվում է իրավական արգելքների իրավակիրառիչ բնույթը, նրանց ուղղվածությունը ինչպես քաղաքացիների, այնպես էլ իշխանական սուբյեկտների իրավական նորմում՝ ըստ իրավաչափության չափանիշի:

Իրավական արգելքների նշանակությունը իրավական կարգավորման մեջ կայանում է իրավակարգի ամրապնդման մեջ, սահմանվում է նախատեսման իրավական նորմի բնույթով, պետության համար անցանկալի գործողություններ չկատարել:

Իրապես, օրենսդրությունում արգելքները ամրագրվում են իմպերատիվ ձևում և մատնանշում են իրավաբանական պարտականությունը, որի էությունը կայանում է օրենքով նախատեսված որոշակի գործողությունների կատարման արգելքում:

Իրավական արգելքները իրենցից ներկայացնում են պետական-իշխանական կարգադրություններ, որոնց հիմնական նպատակը կայանում է հնարավոր անցանկալի գործողությունների կանխարգելման մեջ, որոնք վնաս են պատճառում հասարակական հետաքրքրություններին:

Բնորոշելով արգելքի առանձնահատկությունը, որպես իրավական սահմանափակման ձև, անհրաժեշտ է նշել, որ նրա խախտման համար կիրառվում են իրավաբանական պատասխանատվության միջոցներ: Իրավական նորմը, որը սահմանում է իրավական արգելքը, ենթադրում է պետական հարկադրանքի միջոցներ, որոնք ապահովում են օրենքով նախատեսված վարքագծի կանոնին հետևում, նրա խախտման դեպքում՝ մեղավորի պատժում:

Սանկցիան իրավունքի արգելող նորմի անհրաժեշտ ու անքակտելի տարր է: Որոշ դեպքերում իրավունքի նորմերը չեն պարունակում որոշակի գործողությունների կատարման կոնկրետ արգելքներ, սակայն սահմանում են որոշակի գործողությունների կատարման համար պատասխանատվություն՝ դրանով իսկ արգելելով դրանք:

Իրավական արգելքը իրավական կարգավորման առանձին միջոց է, որը կայանում է իրավաբանորեն ամրագրված, իրավաբանական պատասխանատվության սպառնալիքի ներքո անցանկալի արարքներից խուսափելու պարտականության մեջ, որը կազմավորում է իրավական ռեժիմ, որը իր հերթին հիմնված է սահմանափակումների վրա:

Դրական պարտականությունները, ի տարբերություն արգելքների ու թույլատվությունների, չեն կազմավորում իրավական կարգավորման սեփական տիպը, սակայն նույնպես ակտիվորեն մասնակցում են սահմանափակումների վրա հիմնված իրավական ռեժիմների ձևավորմանը:

Դրական պարտականությունը իրավական կարգավորման միջոց է, որն արտահայտվում է անձի վրա ակտիվ բովանդակության իրավաբանական պարտականությունների ներդրմամբ, բնութագրվում է նոր հարկադրանքով, անձինք պետք է կատարեն այն, որը նրանք հնարավոր է նաև չեն կատարել ուղիով, որը տարբերվում է կոնկրետացված ու պարտավորեցնող նորմից:

Քանի որ իրավաբանական պարտականությունը կարող է արտահայտվել կամ արգելված գործողություններից խուսափելու, կամ էլ գործողությունների պարտավորված սուբյեկտի կողմից կատարման մեջ, որոնք կազմում են պարտականության

բովանդակությունը, նրա բնույթը չի կարող արտահայտվել տվյալ սուբյեկտի համար ինչ-որ առավելությունների, արտոնությունների ստեղծման մեջ:

Մարդը, կատարելով պարտականությունը գործում է ոչ այնպես, ինչպես արթնացնում են նրա սեփական շահերը, նա անհրաժեշտ է համարում սահմանափակել իր շահերի հնարավոր փաստացի իրականացումը այլոց շահերի պատճառով:

Իրավական սահմանափակումները իրավագիտական գրականության մեջ արդարացիորեն կապնվում են թույլատվությունների նեղացման, արգելքների սահմանման ու լրացուցիչ դրական պարտականությունների հետ:

Դրական պարտականությունը արգելքի հետ համատեղ հանդիսանում է իրավական կարգավորման հիմնական միջոց, առանց որի անհնար է իրավական ռեժիմի գոյությունը, որը հիմնված է սահմանափակումների վրա:

Իրավաբանական պարտականությունը իրավահարաբերությունների սուբյեկտի անհրաժեշտ վարքագծի օրենքով նախատեսված միջոց է, իշխանության կողմից նախատեսված անհրաժեշտ վարքագիծ:

Պարտականությունների իրավաբանական բովանդակությունը բովանդակում է երեք հիմնական բաղադրամասեր՝ անձի կողմից օրենքով նախատեսված որոշակի գործողությունների կատարման անհրաժեշտություն, չնախատեսված գործողությունների համար պատասխանատվություն կրելու անհրաժեշտություն:

Իրավաբանական պատասխանատվությունը կարող է ունենալ և ակտիվ, և պասսիվ բնույթ: Եթե ակտիվ բնույթը կայանում է դրական գործողություններ կատարելու անհրաժեշտության մեջ, ապա պասսիվ բնույթը կայանում է որոշակի հասարակայնորեն վտանգավոր գործողությունների կատարումից խուսափելու մեջ և այս առումով պասսիվ պարտականությունների կատարումը կարող է ընթանալ դեպի իրավական արգելքների իրականացում, եթե նրանք սահմանված են իրավական նորմով՝ որպես արգելքներ:

Այս իմաստով հետաքրքիր է օրենսդրի դիրքորոշումը, որը որոշ դեպքերում սահմանափակում ասելով հասկանում է որոշակի պարտականություն:

Իրավական ռեժիմը, որը հիմնված է սահմանափակումների վրա, կարող է ներկայացված լինել այնպիսի իրավական միջոցներով, ինչպիսիք արգելքներն, պարտականություններն, սահմանափակումներն են:

Քանի որ արգելքներն ու պարտականությունները, որոնք արտահայտվել են իրավական նորմի դիսպոզիցիայում, արդեն դիտարկվել են ընդհանուր արգելքների ու դրական պարտականությունների հետ կապված, առաջարկվում է կարճ անդրադառնալ նաև այլ իրավական միջոցների:

Կասեցումը կարող է բնութագրվել որպես իրավաբանական անձանց, ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների, իսկ որոշ դեպքերում նաև պաշտոնատար անձանց կողմից որոշակի գործունեության իրականացման ժամանակավոր արգելք նրանց կողմից իրավախախտումների իրականացման ու հասարակական վտանգ ներկայացնող հետևանքների կանխարգելման նպատակով իրավաբանական պատասխանատվություն սպառնալիքի վտանգի ներքո:

Կասեցման համար հիմք կարող են դառնալ վերոնշյալ սուբյեկտների հակաիրավական արարքները, այնպես էլ այն հանգամանքները, որոնք առաջացնում են իրենց գործունեության իրականացման անհնարինություն, որը կարող է առաջացնել հասարակության ու պետության համար վտանգավոր հետևանքներ:

Կասեցումը իրականացվում է օրենքով նախատեսված կարգով դրա համար լիազորված պետական մարմնի կողմից և ձեակերպվում է համապատասխան իրավական ակտով:

Կասեցումը կայանում է համապատասխան իրավաբանական անձանց, այլ կազմակերպությունների, ինչպես նաև այլ ֆունկցիոնալ պաշտոնատար անձանց գործունեության իրականացման ժամանակավոր արգելում:

Ցենզը օրենսդրությամբ նախատեսված անձի՝ ինչ-որ քաղաքական իրավունքներից օգտվելու թույլատվության սահմանափակող պայմաններ են:

Ազգային օրենսդրության մեջ ցենզային պահանջները կիրառվում են տարբեր ենթատեքստերում՝

- կրթական ցենզ,
- տարիքային ցենզ,
- նստակյացության ցենզ:

Իրավագիտական գրականության ու օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս իրավաբանական ցենզերը վերագրել իրավական սահմանափակումներին: Իրավական ռեժիմներում ցենզերը սահմանում են իրավունքի սուբյեկտների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները՝ սահմանափակելով թեմայի սուբյեկտիվ իրավունքներից կամ այլ հանգամանքներից օգտվելու հնարավորությունը:

Որպես սահմանափակող միջոց, որոնք կիրառվում են իրավական ռեժիմի կողմից, որը հիմնված է սահմանափակումների վրա, հանդես են գալիս նաև պետական հարկադրանքի ու պատժի միջոցները: Տվյալ կատեգորիաները բավարար չափով հետազոտված են ինչպես իրավունքի տեսության, այնպես էլ բնագավառային մակարդակներում, որն ազատում է նրանց մանրամասն դիտարկման անհրաժեշտությունից սույն ատենախոսական աշխատանքի շրջանակներում:

Երրորդ, իրավական ռեժիմի նորմատիվ-իրավական ամրագրումը, որը հիմնված է սահմանափակումների վրա, ունի որոշակի առանձնահատկություններ:

Թույլատվական տիպի իրավական ռեժիմի համար բնորոշ է այն իրավաբանական կառուցվածքը, որի դեպքում սուբյեկտները ունեն լայն իրավունքները, որոնք ուղղակիորեն նախատեսված են նորմատիվ իրավական ակտերում, իսկ ընդհանուր արգելքին համապատասխանում են որոշակի օրենսդրի կողմից կոնկրետ սահմանված թույլատվություններ:

Իրավական ռեժիմը, որը հիմնված է սահմանափակումների վրա մանրամասնորեն մշակված է, իր մեջ պարունակում է իրավական կարգավորման սուբյեկտների, օբյեկտների ու միջոցների վերջավոր շարք, ներքոհիշյալ մարմինների ու պաշտոնատար անձանց ակտերի համար չի նախատեսում վարքագծի տարբերություն:

Չորրորդ, իրավական ռեժիմի նպատակը, որը հիմնված է սահմանափակումների վրա, չի հանդիսանում տվյալ տիպի իրավական ռեժիմի նշան, ինչպես նաև այն

ռեժիմների դեպքում, որոնք հիմնվել են առավելությունների վրա, չի հանդիսանում իրավական ռեժիմի տվյալ տեսակի հատուկ նշան:

Իրավական ռեժիմները ուղղված են իրավունքի սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի հասարակական հարաբերությունների նորմալ գործարկման ապահովմանը: «Հակաօրինական վարքագծի զսպման» հարցը ընկած է իրավական ռեժիմների գործողության ուղղությունների հարթությունում, այլ ոչ թե իրավական կարգավորման նպատակների հարթության մեջ և վերաբերում է իրավական ռեժիմների գործարկման տեղեկատվական-հոգեբանական բնագավառին:

Բացի դրանից՝ պետք է ուշադրություն դարձնել սահմանափակող իրավական ռեժիմի նպատակի ձևակերպման վրա, քանի որ նրա շրջանակներում կարող է զսպվել նաև իրավաչափ վարքագիծը: Խոսքը գնում է արտակարգ իրավական ռեժիմների մասին:

Հինգերորդ, վերոշարադրյալից բխում է իրավական ռեժիմի այնպիսի նշան, որը հիմնված է սահմանափակումների վրա, որպես իրավունքի սուբյեկտների համար անբարենպաստ պայմանների ստեղծում իրենց շահերի բավարարման համար:

Սահմանափակման իրավական ռեժիմը իրավունքի սուբյեկտների համար ստեղծում է անբարեհարմարության ռեժիմ, քանի որ ուղղված է նրանց շահերի զսպմանը ու միաժամանակ հակադիր կողմից շահերի միաժամանակյա բավարարմանը իրավահարաբերության մեջ ու պաշտպանության ու պահպանության հասարակական հարաբերություններում:

Իրավական ռեժիմը, որը հիմնված է սահմանափակումների վրա, սահմանվում է և գործարկում պետության, պետական մարմինների ու պետական ծառայողների հանդեպ:

Պետական իշխանության իրավական կարգավորումը նախատեսում է նրա կարգավորումը. մի կողմից իշխանական ինստիտուտների ամրապնդման բովանդակային ամրապնդում, իրավասություններով ընձեռում, իսկ մյուս կողմից կանոնների համակարգի իշխանության սահմանափակում է:

Պետական իշխանության սահմանափակումը կրում է երկակի ու անգամ հակասական բնույթ: Մի կողմից այն հանդես է գալիս անպայման բարիքով, քանի որ նրա օգնությամբ ապահովվում է մարդու իրավունքների իրականացումն ու պաշտպանությունը,

իսկ մյուս կողմից իշխանությունը պետք է ուժեղ լինի, որպեսզի ապահովի անձի իրավունքներն ու անձի օրինական շահերի պաշտպանությունն պետական հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությամբ:

Դրա համար էլ պետական իշխանությունը սահմանափակումների կարիք ունի, հակառակ դեպքում այն կարող է դառնալ արհավիրքային անկառավարելի երևույթ, որը զուրկ է իր հիմնական առաքելությունից՝ հասարակությանը ու անձին ծառայելուց:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և ընդունելով պետական իշխանության սահմանափակումը որպես պետության կայունության պարտադիր պայման, անհրաժեշտ պետական իշխանության սահմանափակման իրավական ռեժիմի դիտարկման շրջանակներում վերլուծել նրա սահմանափակման հիմնական ձևերը:

Այսպես ի՞նչը կարող է ծառայել որպես պետական իշխանության սահմանափակման ձև: Տվյալ հարցը չունի միանշանակ պատասխան և պատմական զարգացման տարբեր փուլերում պետական իշխանության սահմանափակման գաղափարը ստացել է տարբեր մարմնավորումներ:

Առաջինը ժամանակագրորեն հայտնվում է հակակշիռի գաղափարը, որի համաձայն պետական իշխանությունը սահմանափակվում է այլ իշխանությամբ՝ աստվածային (Թոմա Աքվինացի), հասարակական դաշինքի (Ջ. Լոկ, Ժ.ժ. Ռուսո):

Իշխանության սահմանափակման երկրորդ էվոլյուցիոն գաղափարը պետական իշխանության ինքնասահմանափակման գաղափարն է՝ Արիստոտել, Էպիկուր, Լոկ և այլն, որը իրական մարմնացում է ստացել իշխանությունների բաժանման տեսության մեջ:

Սկզբնապես իշխանության բաժանումը համարվում էր սոցիալական ուժերի հավասարակշռության հարց, որոնք կազմում են պետություն, քան պետական իշխանության մարմինների միջև հարաբերություններ, որոնք բաժանվել են՝ կախված նրա կողմից կատարված գործառույթներից:

Ժամանակակից հասկացմամբ իշխանության ճյուղերի միջև լիազորությունների բաժանման սկզբունքը առաջին անգամ ձևավորվել է Անգլիայում 18-րդ դարում և այդ օրվանից իշխանության ճյուղերից մեկի գերակայությամբ իշխանությունների բաժանման համակարգից (Ջ. Լոկ) ճանապարհ է անցել դեպի հակակշիռների ու զսպումների

համակարգի հիման վրա իշխանության բաժանման մեխանիզմ, որոնք ապահովում են նրանց հավասար համագործակցությունը օրենքի հիման վրա (Շ.Լ. Մոնտեսքյո):

Այսօր առավելապես պառլամենտական հանրապետություններում ու թագավորություններում, ուժեղ օրենսդրական իշխանության գերակայության սկզբունքը իշխանությունների բաժանման համակարգում, որ գործադիր իշխանությունը փաստացիորեն ստեղծվում է պառլամենտի կողմից:

Իշխանությունների բաժանման սկզբունքը, որը հիմնված է իշխանության ճյուղերից մեկի գերակայության վրա, ամբողջովին չի համապատասխանում ամբողջ հիմնադրույթի իմաստին, որը ձևակերպվել է լուսավորականության դարաշրջանի ֆրանսիացի փիլիսոփա Մենտեսքյոյի կողմից, որը ժամանակի հաշվառմամբ կարող է հնչել որպես «պայքար ուզուպացիայի ու մեկ մարդու ձեռքում իշխանության կենտրոնացման դեմ»:

Եթե պառլամենտը լինի միակ գերագույն իշխանությունը, քաղաքացին փաստացիորեն կզրկվի հակադիր կարծիքը արտահայտելու իրավունքից մինչև հետևյալ ընտրությունները, ինչն այլ դրության մեջ նա կարող էր կատարել իշխանության մեկ այլ ճյուղի միջոցով՝ դիմելով նրա ներկայացուցիչներին:

Այսպիսով, նախընտրելի է իրավիճակը, երբ իշխանությունների բաժանման սկզբունքի հիմքում ընկած է զսպումների ու հակակշիռների մեխանիզմը, որն ապահովում է նրանց հավասար համագործակցությունը և հավասարակշռությունը օրենքի հիման վրա:

Երրորդը իրավունքի միջոցով պետական իշխանության սահմանափակման գաղափարն է, որն իրականանում է «իրավունքի գերակայության» անգլո-սաքսոնական հիմնադրույթում և իրավական պետության մայրացամաքային հիմնադրույթում:<sup>98</sup>

Պետական իշխանության սահմանափակման գաղափարի չորրորդ աստիճանը պետական իշխանության սահմանափակումն է մարդու իրավունքներով:

Տվյալ տեսությունն ամողջովին վերցրած ձևավորվում է նախորդից և հիմնվում է այն հիպոթեզի վրա, որ իրավունքի գերակայությունը, ինչպես ցանկացած երևույթ, հանդես չի գալիս որպես բացարձակ արժեք: Նրա ներկայացուցիչների կարծիքով իրավունքի

<sup>98</sup> Մանրամասն տե՛ս **Ասատրյան Ա.** Իրավունքի գերակայության սկզբունքը արդի իրավական համակարգի խորապատկերում: Երևան, 2013:

գերիշխանությունը՝ որպես պետական իշխանության սահմանափակում պաշտպանում է քաղաքացուն, բայց միաժամանակ նրան տալիս է անշունչ ձևերի իշխանությանը, որոնք փոխարինել են կամայականությանը և զուրկ են մարդկային գործոնը հաշվի առնելու հնարավորությունից (տառապանք, անօգնականություն և այլն):

Վերոնշվածի հետ կապված, թեզ է ձևավորվում այն մասին, որ մարդու իրավունքները որպես համամարդկային, անձնակենտրոն և լիբերալ գաղափար, սահմանում են պետական իշխանության մարմինների ամբողջ համակարգի գործունեության իմաստը և բովանդակությունը: Աքսիոմ է հանդիսանում այն, որ իշխանությունը ձևավորվել է մարդու իրավունքներից և ազատություններից:

Պետական իշխանությունը մարդու իրավունքներով սահմանափակելու գաղափարը ամենից լավ ներգրավվում է մարդու իրավունքների ժամանակակից հայեցակարգի մեջ, որի տեսանկյունից մարդու իրավունքները պահանջում են պետությանը կատարել կամ զերծ մնալ որոշակի գործողություններ կատարելուց՝ պետական մարմինների չարաշահման պայքարի միջոց: Հենց մարդու իրավունքներն են համարվում պայքարի միջոց իշխանության չարաշահման դեմ, քանի որ վերևում թվարկված բոլոր պետական իշխանության սահմանափակման «ներքին» չափանիշներից միայն նրանք են հանդիսանում անհրաժեշտ «արտաքին» գործոն, նրա գործունեություն, անձի իշխանության յուրահատուկ դրսևորումը քաղաքացիական հասարակության կամքը վերահսկելու համար:

Այս տեսության ընդդիմադիրները հաստատում են, որ մարդու իրավունքները կառավարման արդյունավետությունից առաջնային ճանաչելը կարող է առաջ բերել պետական իշխանության անուժության, ինչը, իր հերթին, վտանգում է անվտանգությունը և ազատությունը և կարող է դառնալ կամայականության հաստատման որոշիչ գործոն: Շարունակելով տվյալ միտքը, կարելի է անհիմն կերպով հակադրել պետական իշխանությունը և ազատությունը: Սակայն մարդու ազատության սահմանափակումը պետական իշխանությամբ նաև միևնույն ժամանակ հանդես է գալիս որպես նրա ապահովման և պաշտպանության անհրաժեշտ պայման: Նման կերպ, իրականում

իրավական, ազատությանը հակադրվում է միայն պետական իշխանությունը, վերջինս սահմանափակված չէ իրավունքով:

Վերևում նշված հայեցակարգերի հիմնական գաղափարները արդիական տեսքով իրենց արտացոլումն են գտնում իրավական պետության էության ֆորմալ-իրավաբանական կողմում ավելի հաջորդական կապի պետական իշխանության իրավունքի միջոցով: Հենց իրավունքն է հանդես գալիս որպես հասարակական հարաբերությունների պաշտոնական քաղաքակիրթ և ավելի արդյունավետ կարգավորիչ, կարևորագույն սոցիալական, մշակութային և բարոյական արժեք, անձի ազատության և պատասխանատվության միջոց, պետք է անհրաժեշտ չափով հավասարակշռել պետության ի սկզբանե անհավասար դրույթները (իշխանության կրողներ) և անձանց (միայն ազատության կրողներ), քանի որ օրենքի առջև բոլորը հավասար են, այդ թվում և պետությունը:<sup>99</sup>

Հանրագումարելով վերոնշվածը, կարելի է հաստատել, որ պարտականությունները և արգելքները որպես իրավական սահմանափակման սկզբնական միջոցներ իրենց արտացոլանքն են գտնում պետական իշխանության սահմանափակման հիմնական ձևերում՝ իշխանության բաժանում, օրենքի գերակայություն, անձի և պետության փոխադարձ պատասխանատվություն, որոնք հանդիսանում են ավելի ծավալուն (համալիր) իրավական սահմանափակման միջոցներ (գործիքներ):

Սակայն պետք է նշել, որ իրավական ռեժիմը, որը հիմնված է սահմանափակումների վրա, կարող է հաստատվել նաև ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ կազմակերպությունների նկատմամբ: Այսպես ՀՀ Սահմանադրության 76 հոդվածում ամրագրված է, որ մարդու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ:

Իրավական ռեժիմի, որոնք հիմնված են քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակումների վրա, սահմանադրական-իրավական և

---

<sup>99</sup> Տե՛ս **Դավթյան Ն.Գ.** Իրավունքի կենսագործման տեսագործական հիմնախնդիրները: Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2013, էջ 17-18:

վարչական-իրավական բնագավառներին զուգահեռ, տարածված են նաև օրենսդրության քաղաքացիական, ֆինանսական, էկոլոգիական և այլ ճյուղերում:

Քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակումները հաստատվում է օրենսդրական ակտերում, երկու հիմնական միջոցներով՝ կամ լրացուցիչ պայմանների, արգելքների և պարտականությունների ամրագրման ճանապարհով, որոնք զսպում են սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների իրականացումը, կամ պետական մարմինների և նրա պաշտոնակատար անձանց իրավասությունները ավելացնելու ճանապարհով, կամ այս երկու միջոցներով միաժամանակ: Արդյունքը տվյալ դեպքում մեկն է՝ հնարավոր վարքագծի այն տարբերակների կրճատումը, որոնք կազմում են քաղաքացիների սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների բովանդակությունը:

Օրենսդրությամբ նախատեսված քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակման ձևերը կարող են տարբեր լինել՝

- իրավունքի և ազատության իրականացման որոշակի տարբերակի արգելք, այսինքն վարքագծի սահմանների հաստատում (հարաբերական արգելք);

- իրավունքի(ազատության) իրականացման արգելք ամբողջովին վերցրած (բացարձակ արգելք):

- պարտականություն

- պատասխանատվություն:

Քաղաքացիների իրավունքների և ազատությունների կամայական սահմանափակումը թույլ չտալու և տվյալ բնագավառում պետական իշխանության մարմինների կողմից չարաշահում թույլ չտալու նպատակով անհրաժեշտ են տվյալ իրավունքների սահմանափակման հստակ չափանիշներ.

- մարդու իրավունքների սահմանափակման իրավական հիմքը պետք է լինի միայն օրենքը:

- մարդու իրավունքների սահմանափակման նպատակն է սահմանադրական կարգի հիմունքների, բարոյականության, առողջության, այլ անձանց իրավունքների և օրինական շահերի և պետության անվտանգության պահպանությունը:

- նման սահմանափակումներ հաստատելու պայմանները (անհրաժեշտ են միասնության մեջ) պետական և հասարակական շահերին վնաս պատճառելու իրական կամ պոտենցիալ հնարավորությունն է, այլ միջոցներով նշված շահերը պաշտպանելու անհնարինությունը, ներդրվող սահմանափակումների համաչափությունը, պատճառված վնասը ավելի փոքր է, քան կանխարգելվածը:

- Սահմանափակումները պետք է ընդհանուր (չանձնավորված) բնույթ կրեն, չունենան հակառակ ուժ և չփոխեն հենց սահմանափակվող սահմանադրական իրավունքի (ազատության էությունը):

- Սահմանափակումները պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի ընդհանուր ընդունված նորմերին և սկզբունքներին:

- Սահմանափակումները, որպես կանոն, որոշակի բացառություններով, չպետք է վերաբերեն մարդու հիմնական իրավունքներին և ազատություններին և կրեն դիսկրիմինացիոն բնույթ:

- Իրավական նորմը, որը սահմանափակում է քաղաքացիների իրավունքները և ազատությունները, պետք է հստակ ձևակերպված լինի և թույլ չտա կամայական (տարածող կամ սահմանափակող) բացատրություն:

Հանրագումարելով վերոնշվածը, իրավական ռեժիմը, որը հիմնված է սահմանափակումների վրա, կարելի է սահմանել որպես հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման հատուկ եղանակ, որը հիմնված է իրավական մեթոդների (ընդհանուր իրավական արգելքների և դրական պարտավորեցումների) և միջոցների (արգելքների, կասեցումների, պարտականությունների, ցենզերի, սահմանների, պետական պարտադրանքի միջոցների, պատժի և այլն), երաշխիքների և սկզբունքների որոշակի համադրության վրա, որն ուղղված է ոչ բարենպաստ պայմաններ ստեղծելու ճանապարհով իրավունքի սուբյեկտների սեփական շահերի բավարարման համար օպտիմալ սոցիալական վիճակի հասնելու համար:

### **3.3. Ճյուղային իրավական ռեժիմների առանձնահատկությունները**

Իրավունքի յուրաքանչյուր ճյուղի համապատասխանում է իր յուրահատուկ իրավական ռեժիմը: Այս դրույթը կարևոր է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով:

Ճյուղային իրավական ռեժիմները արդարացիորեն ընդունվում են ավելի բարձր մակարդակի ռեժիմների իրավագիտության կողմից, որոնք ունեն ինտեգրատիվ ու ուղղորդող նշանակություն իրավունքում և մարմնավորում են կարգավորվող հարաբերությունների բովանդակությամբ իրավական միջոցների համալիրի սերտ միասնականությունը:

Ըստ ճյուղերի նորմերի բաժանման համընդհանուր չափանիշների թվի՝ իրավական կարգավորման առարկային ու մեթոդին է ավելանում ևս մեկ չափանիշ, որը թույլ է տալիս սահմանազատել իրավունքի մեկ հարակից ճյուղը մյուսից:

Օրինակ, կախված նրանից, թե ինչպիսի համաձայնություն է կայացած քաղաքացու ու կազմակերպության միջև, կգործեն իրավունքի այս կամ այն բնագավառի նորմերը, որոնք սահմանում են համապատասխան իրավական ռեժիմը:

Առաջին դեպքում կողմերը ընկնում են աշխատանքային իրավունքի իրավական ռեժիմի ազդեցության տակ, ուր գործում են իմպերատիվ ու դիսպոզիտիվ, կենտրոնացած ու տեղային, նորմատիվ ու պայմանագրային կարգավորումները, իսկ պայմանագրի կողմերը բացի պայմանագրային հարաբերություններից ենթակա են աշխատանքի գործընթացում աշխատանքային օրենսդրությանը ու տվյալ կազմակերպության ներքին աշխատանքային կանոնակարգին:

Երկրորդ դեպքում գործում է քաղաքացիական-իրավական ռեժիմը, որը հիմնվում է իրավական կարգավորման թույլատվական տիպի վրա, բնորոշվում է սուբյեկտների իրավաբանական հավասարությամբ, ապահովում է իրավահարաբերությունների սահմանումը կողմերի իրավական ու գույքային ինքնուրույնության հիման վրա:

Այսինքն առաջին ու երկրորդ դեպքերում կարող են համընկնել իրավական կարգավորման և առարկան, և մեթոդը, սահմանազատել իրավունքի տվյալ ճյուղերը հնարավոր է միայն տարրերի հիման վրա, որոնք կազմում են ճյուղային իրավական ռեժիմը:

Ճյուղային իրավական ռեժիմի հիմնադրույթը, որը կայանում է իրավունքի տեսության մեջ, բացահայտում է տվյալ կատեգորիայի առանձնահատկությունները նրա հիմնական տարրերի միջոցով, իրավական կարգավորման ճյուղային մեթոդը, իրավական կարգավորման ճյուղային մեխանիզմը, օրենսդրության հատուկ բնագավառը, որը ղեկավարվում է կողավորված ակտով:

Տվյալ դիրքորոշումը իր արտացոլումն է գտնում նաև ճյուղային մակարդակում: Այս առումով, իրավական ռեժիմը կարելի է սահմանել որպես «կարգավորման իրավաբանական միջոցների միասնականություն՝ բնագավառային իրավաբանական գործիք, որը միջնորդավորված է իրավական ազդեցության բնագավառային մեթոդով ու հիմնվում է տվյալ բնագավառին հատուկ սկզբունքների վրա:

Պետք է ճշգրտել այս հասկացությունների նշանակությունը, որոնք կօգտագործվեն հետագայում՝

1. իրավական կարգավորման մեթոդը հասարակական հարաբերությունների կարգավորման, մարդկային վարքագծի վրա ազդեցության միջոցների ու եղանակների միասնականություն: Եթե առարկան պատասխանում է հարցին, թե ինչպիսի հարաբերություններ է կարգավորում իրավունքը, ապա մեթոդը պատասխանում է այն հարցին, թե ինչպես է իրականանում այդ կարգավորումը:

Իրավական կարգավորման մեթոդները սահմանվում են իրավունքի սուբյեկտների փոխակապակցվածության բնույթով ու բաժանվում են իմպերատիվ ու դիսպոզիտիվ տեսակների:

2. Իրավական կարգավորման մեխանիզմներ-հատուկ իրավական եղանակներ՝ գործիքներ, տեխնոլոգիաներ, ձևեր, որոնք ներառում են իրավունքների ու պարտականությունների առաջացման միջոցներ, իրավաբանական ազդեցության միջոցներ, իրավունքի պաշտպանության եղանակներ, ընթացակարգային-

գործընթացային ձևեր և այլն, այսինքն իրավաբանական գործիքավորման հատուկ հավաքածու, որը կիրառվում է իրավունքի այս կամ այն բնագավառի կողմից:

Վերոնշյալ օրինակում այն մի դեպքում աշխատանքային պայմանագիր է, ներքին աշխատանքային կարգի կանոններ, բողոք, մյուս դեպքում՝ քաղաքացիական– իրավական պայմանագիր, հայց:

3. Իրավական սկզբունքները՝ հիմնարար, ելակետային, ընդհանուր դրույթներ են, որոնք բնորոշում են իրավունքի բնագավառը նրա բովանդակության տեսանկյունից:

Բացի ճյուղային իրավական ռեժիմի վերոնշյալ տարրերից՝ գիտնականները առաջադրում են նաև հետևյալները՝

- օրենսդրական զանգված, որը ղեկավարվում է կոդավորված ակտով,
- նպատակների ձեռքբերման ու խնդիրների լուծման հատուկ տեխնոլոգիա:

Վերոնշյալ չափանիշները թույլ են տալիս, ավելի խորությամբ ու բազմակողմանիորեն բնութագրել սույն աստենախոսական հետազոտության օբյեկտը, սակայն դրանք կրում են սուբսիդիար բնույթ վերոնշյալ տարրերի հանդեպ և որոշ դեպքերում ռեժիմի բնութագրումը:

Ճյուղային իրավական ռեժիմի բնութագրման դեպքում մեծ նշանակություն ունի իրավական կարգավորման ճյուղային առարկան: Այս նշանակությունը չի կարելի ընդունել որպես որոշակի իրավունքի առակայության ուժով հարակից առարկաների հետ համատեղ, սակայն իրավական ռեժիմի ընդհանուր հիմնադրույթում՝ հաշվի առնելով նրա այնպիսի կարևոր հատկանիշ, ինչպիսին է պետության համար առավել կարևոր հասարակական հարաբերությունների վրա իրավական կարգավորման ուղղվածությունը, տվյալ բաղադրիչի վրա հնարավոր չէ ուշադրություն չդարձնել:

Դրա հետ կապված՝ ճյուղային իրավական ռեժիմների հետագա բնութագրման մեջ, բացի վերոնշյալներից, առաջարկվում է կիրառել ճյուղային իրավական ռեժիմի այնպիսի բաղկացուցիչ, ինչպիսին է ճյուղային իրավական կարգավորման առարկան:

Պետք է անդրադառնալ ճյուղային իրավական ռեժիմների առանձնահատկությունների բնութագրմանը իրավական ռեժիմների դիտարկման միջոցով

իրավունքի այնպիսի հիմնական բնագավառներում, ինչպիսիք են սահմանադրական, վարչական ու քաղաքացիական իրավունքները:

Սահմանադրական իրավունքում իրավական ռեժիմը բնորոշում է որպես սահմանադրական ակտերի նորմերի վրա հիմնված ու իրավական միջոցների ու մեթոդների կողմից աջակցվող կարգ, որը ձևավորվում է պետական կառուցվածքի, պետական իշխանության կազմակերպման, անհատի ու պետության համագործակցության առիթով:<sup>100</sup>

Այսինքն՝ սահմանադրական-իրավական ռեժիմը, այս դեպքում սահմանվում է որպես որոշակի սոցիալական կարգավորվածության վիճակ, որը ձևավորվում է սահմանադրական իրավունքի նորմերի ազդեցության տակ իրավական կարգավորման առարկայի շրջանակներում, որը կազմում է սահմանադրական իրավունքի, որպես իրավունքի ճյուղի առարկան:

Այլ հեղինակներ սահմանադրական-իրավական ռեժիմը սահմանում են որպես սահմանադրական հարաբերությունների իրավական կարգավորման հատուկ տեսակ, որն արտահայտված է նորմատիվ իրավական միջոցների համալիրի յուրահատուկ համադրության մեջ: Սահմանադրական-իրավական ռեժիմը արտահայտում է սահմանադրական կարգավորման կոշտության աստիճանը, հայտնի սահմանափակումների ու արտոնությունների առկայությունը, սուբյեկտների ակտիվության թույլատրելի մակարդակը, նրանց իրավական ինքնուրույնության սահմանները:

Առաջարկված հասկացությունը հաշվի է առնում սահմանադրական-իրավական ռեժիմների հիմնական էական առանձնահատկությունները, սակայն սկզբունքային անհամաձայնությունը տվյալ սահմանման հեղինակների հետ արտահայտվում է նրանում, որ իրավական ռեժիմը չի կարող սահմանվել ոչ որպես իրավական կարգավորման տեսակ, ոչ էլ որպես ռեժիմ:

Պետք է դիտարկել սահմանադրական իրավական ռեժիմի հիմնական բաղկացուցիչները:

---

<sup>100</sup> Տե՛ս **Эбзеев Б.С.** Введение в Конституцию России. М., 2013, էջ 377-378:

Հայաստանի սահմանադրական իրավունքի առարկան են կազմում հասարակական հարաբերությունները, որոնք ձևավորում են հասարակության ու պետության կառույցի հիմքը և անմիջականորեն կապված են տարբեր ձևերում պետական իշխանության կարգավորման, իրականացման ու փոխանցման, պետական իշխանության սահմանների սահմանման, մարդու ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորմամբ, մարդու, հասարակության, պետության միջև այս հարաբերությունները և հիմնարար հարաբերությունները:<sup>101</sup>

Սահմանադրական իրավական ռեժիմի շրջանակներում կիրառվող հիմնական մեթոդը իմպերատիվ մեթոդն է, այսինքն պետական-իշխանական նախատեսումների մեթոդը: Այն կոնկրետանում է մի շարք փոխկապացված միջոցներով, որոնց հատուկ համադրությունը և կոնկրետ առարկայի հանդեպ կցումը սահմանում են սահմանադրական-իրավական ռեժիմի առանձնահատկությունը: Սակայն սահմանադրական-իրավական ռեժիմը կարող է ներառել նաև այլ միջոցներ ու մեթոդներ դրանց տարբեր համադրություններով որոշների գերակա դերի ու այլոց օգնող դերի դեպքում:

Օրինակ, պետական իշխանության մարմինների գործունեության ռեժիմը տարբերվում է իշխանության տարբեր ճյուղերի մարմինների գործունեության կանոնակարգումից: Եթե առաջին դեպքում գերակայությունը կլինի իմպերատիվ մեթոդը, գերակա միջոցը կլինի պարտականության ներդրումը, գերական կլինի իրավական կարգավորման թույլատվական տիպը:

Բավականին մեծ է իրավական ռեժիմների հիմնախնդիրը վարչական իրավունքում, որը տարբերվում է վարչական-իրավական ռեժիմների հետազոտման ուղղությունների բազմաբնույթությամբ:

Վարչական-իրավական ռեժիմը իրավունքի սուբյեկտների գործունեության յուրահատուկ կարգ է պետական կյանքի տարբեր բնագավառներում: Այն սահմանվում է օրենքներում ու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում և ուղղված է նրանց խիստ նպատակային ու ֆունկցիոնալ գործունեությանը այն տեղամասերում, ուր

<sup>101</sup> Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Դասագիրք բուհերի համար: Պատ. խմբ. **Ն.Ա. Այվազյան**: Երևան, 2012, էջ 46-47:

անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ պահանջվող պետական իրավիճակի աջակցման համար:

Վարչական-իրավական ռեժիմի բովանդակության մեջ գիտնական-վարչարարները<sup>102</sup> ներառում են՝

- ռեժիմի նշանակությունը և նպատակները, սուբյեկտների միջև լիազորությունների բաշխումը, որոնք պատասխան են տալիս ռեժիմի իրականացման համար,

- ռեժիմի գործողության բնագավառում պետական կառավարման մարմինների համակարգը, նրանց գործարկման ու փոխազդեցության կարգը,

- տեղական ինքնակառավարման ու ռեժիմային կազմակերպության բնագավառում այլ կազմակերպությունների լիազորությունները,

- նորմատիվ կարգավորման մասով ռեժիմային կազմակերպման սուբյեկտների հատուկ լիազորությունները, միջոցառումների ու միջոցների վերահսկողության իրականացումը, որոնք կազմում են տվյալ ռեժիմը, ռեժիմի անմիջական իրականացնողների համակարգը, նրանց սոցիալական կարգավիճակի սահմանումը, համապատասխան նորմատիվ իրավական ակտերի հրապարակումը,

- ռեժիմային միջոցների իրականացման ծախսերի ֆինանսավորման ու փոխհատուցման կարգը ինչպես պետական իշխանության ուղղահայաց համակարգով այնպես էլ տեղական ինքնակառավարման, այլ կազմակերպությունների ու քաղաքացիների հանդեպ:

Բացի բովանդակությունից՝ վարչական իրավունքի ժամանակակից գիտության մեջ առանձնանում են վարչական-իրավական ռեժիմի իրավաբանական կառուցվածքի հիմնական տարրերը, որոնց թվին են պատկանում գործունեության կարգավորումը ռեժիմային բնագավառներում, թույլատվությունների համակարգը, առանձին անձանց կատեգորիաների գործունեության որոշակի տեսակների գրանցումը, անհրաժեշտ հաշվառման ու գործունեության որոշակի տեսակների վերահսկողության ապահովումը, առանձին սահմանումների ուղղակի արգելումը, գործող կանոնների խախտման համար պատասխանատվության տարբեր տեսակների կիրառումը, ինչպես

<sup>102</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ընդ. խմբ. պրոֆ. **Գ. Դանիելյանի**, Երևան, 2012, էջ 342-343:

նաև խախտումների կանխարգելման ու խափանման համար ազդեցության վարչական միջոցների կիրառումը այն անձանց օրինական իրավունքների ու հետաքրքրությունների երաշխիքների պահպանման դեպքում, որոնք ընկել են այս կամ այն ռեժիմի գործողության բնագավառում:

Իրավական կարգավորման հիմնական մեթոդը, որը կիրառվում է վարչական իրավունքի ու քրեական իրավունքի կողմից, իմպերատիվն է:

Վարչական-իրավական մեթոդի բնույթը կայանում է հետևյալում՝

- գործողությունների որոշակի կարգի սահմանումը՝ գործողության հանդեպ նախատեսումը համապատասխան պայմաններում ու հատուկ կարգով, որը նախատեսված է՝ տվյալ վարչական-իրավական նորմով: Այսպիսի կարգի դիտարկումը չի առաջացնում իրավաբանական հետևանքներ, որոնց ձեռքբերումը կողմնորոշում է նորմը,

- որոշակի գործողությունների արգելումը ազդեցության համապատասխան իրավաբանական միջոցների կիրառման ստանալիքի ներքո,

- անհրաժեշտ վարքագծի տարբերակներից մեկի ընտրության հնարավորության տրամադրում, որը նախատեսված է վարչական-իրավական նորմով: Տվյալ մեթոդը հաշվարկված է պաշտոնատար անձանց վարքագծի կարգավորման համար և այդ անձինք չեն կարող խուսափել այսպիսի ընտրությունից: Սա թույլատվության կոշտ տարբերակ է, որը հնարավորություն է տալիս ինքնուրույնության տրամադրման այն անձի հանդեպ վարչական ազդեցության այս կամ այն միջոցի, կամ նրան պատասխանատվությունից ազատման կիրառման հարցի լուծման դեպքում, ով կատարել է վարչական իրավախախտում,

- սեփական կամքով գործելու կամ չգործելու հնարավորության տրամադրում, այսինքն կատարել կամ չկատարել վարչական-իրավական նորմով սահմանված գործողություններ որոշակի պայմաններում: Վերջինս առկա է սուբյեկտիվ իրավունքների իրականացման դեպքում: Օրինակ, քաղաքացին ինքն է որոշում, պետք է արդյոք բողոքարկել պաշտոնատար անձանց գործողությունները թե ոչ,

- որոշակի դեպքերում կողմերի իրավաբանական դիրքի պարիտետի թույլտվություն կարգավորվող հարաբերության մեջ:

Այսպիսով, վարչաիրավական ռեժիմը կարելի է բնորոշել որպես պետական վարչակարգի գործունեության ընդհանուր ռեժիմ, որը սահմանված է ամենօրյա վարչական գործունեության, տիպային սոցիալ-կառավարչական իրավիճակների համար: Միաժամանակ, երբ պահանջվում է գործադիր գործունեության հատուկ միջոցների կիրառում որոշակի տարածքում՝ առանձին օբյեկտի կամ առարկայի նկատմամբ, սահմանվում են հատուկ վարչաիրավական ռեժիմներ: Ընդհանուր վարչական ռեժիմի տարրերից են պետական վարչակարգի գործունեության օրինականության ռեժիմը, անձնագրային, պետական ծառայության ռեժիմները: Սրանց հետ մեկտեղ, գոյություն ունեն հատուկ վարչաիրավական ռեժիմներ (օրինակ՝ արտակարգ և ռազմական դրությունների իրավական ռեժիմները):

Հատուկ վարչաիրավական ռեժիմները հանրային իրավունքի ոլորտում գործող հատուկ իրավական ռեժիմների տարատեսակներից են: Դրանք հիմնականում ուղղված են՝

1) պետության տարածքային ամբողջականությանն ու անվտանգությանը ներքին և արտաքին սպառնալիքների (պետության դեմ ուղղված ագրեսիա, զինված հակամարտություններ, զանգվածային անկարգություններ) առաջացման դեպքերում սահմանադրական անվտանգության ապահովմանը,

2) հասարակական բարձր վտանգավորություն և պետական կարևոր նշանակություն ունեցող օբյեկտների կենսագործունեության ապահովմանը,

3) պետաիրավական պահպանության հատուկ գոտիներ համարվող և այն տարածքներում, որտեղ անց են կացվում հատուկ բնապահպանական, սանիտարական, հակահրդեհային և այլ միջոցառումներ, իրավունքների և պարտականությունների իրացման կարգի, կենսագործունեության պայմանների որոշմանը,

4) արտակարգ իրավիճակների պայմաններում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ապահովմանը, իրավիճակի կայունացմանը, իրավակարգի վերականգնմանը,

5) իշխանության մարմինների արդյունավետ գործունեության, դրանց կողմից վերահսկողական և հսկողական լիազորությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

Հատուկ վարչաիրավական ռեժիմների սահմանման համար հիմք են հանդիսանում այդպիսի ռեժիմների օբյեկտ-կրողների (օրինակ՝ պետական արգելոցի կամ պետական սահմանին անցագրային կետի) ստեղծումը, սոցիալական և բնական-տեխնոգեն բնույթի արտասովոր իրավիճակների և ռեժիմային կարգավորում պահանջող այլ գործոնների առաջացումը:

Որպես հատուկ վարչաիրավական ռեժիմների իրավական հիմք հանդես են գալիս ՀՀ Սահմանադրությունը (օրինակ 119-120-րդ. հոդվածի), օրենքները (օրինակ՝ «Պետական սահմանի մասին» (20.11.01), «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» (05.12.06), «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» (02.12.98), «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» (21.03.12) ՀՀ օրենքները), ՀՀ Նախագահի անհատական հրամանագրերը (օրինակ՝ «Երևան քաղաքում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ Նախագահի 01.03.08 թվականի հրամանագիրը), կառավարության որոշումները (օրինակ՝ ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» թիվ 1925-Ն որոշումը) և այլ իրավական ակտեր:

Հատուկ վարչաիրավական ռեժիմներին բնորոշ են հետևյալ հիմնական հատկանիշները՝

1) դրանք սահմանվում են հանրային վարչակարգի գործունեության ոլորտում՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անվտանգության, պահպանության և պաշտպանության ապահովմանն ուղղված իրենց պարտականությունների կատարման կապակցությամբ,

2) ռեժիմային կանոնները ձևավորող կարգադրագրերը, որպես կանոն, բաղկացած են արգելող և պարտավորեցնող վարչաիրավական նորմերից, որոնք սահմանափակում են ֆիզիկական և իրավաբանական անձանց ընդհանուր իրավասուբյեկտությունը,

3) հատուկ իրավական ռեժիմների պարտադիր սուբյեկտներն են հանրային իշխանության գործադիր մարմինները

4) ռեժիմային կանոնների պահպանման կապակցությամբ բնակչության և հանրային վարչակարգի միջև ծագող իրավահարաբերությունները կարգավորելիս կիրառվում է վարչաիրավական ներգործության մեթոդը

5) ռեժիմի կանոնների խախտումը հանգեցնում է կարգապահական և վարչական հարկադրանքի միջոցների կիրառմանը:

Վարչաիրավական ռեժիմները լայնորեն տարածված են հանրային կառավարման ոլորտում և արտացոլում են գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացվող խնդիրների ու գործառույթների բազմազանությունը: Որքան զարգացած է վարչաիրավական միջոցների համակարգը, որքան բազմազան են վարչական գործունեության ձևերը, այնքան կարևոր է դրանց միավորումը իրավաբանական նշանակություն ունեցող որոշակի հատկանիշներով: Հատուկ վարչաիրավական ռեժիմների դասակարգումը կոչված է օգնելու օրենսդրին համակարգված տեսքի բերելու իշխանության մարմինների տնօրինման ներքո գտնվող վարչաիրավական գործիքների կազմը, որպեսզի հնարավոր լինի ժամանակին արձագանքելու տարբեր ոչ տիպային իրավիճակների առաջացմանը, իրականացնելու հատուկ կարգավիճակ ունեցող տարածքների և օբյեկտների համարժեք և համալիր կարգավորումը:

Հատուկ վարչաիրավական ռեժիմները գրականության մեջ<sup>103</sup> դասակարգվում են տարբեր տեսակների՝ ելնելով տարբեր չափանիշներից: Այսպես, կախված ենթակայությունից՝ դրանք կարելի է բաժանել երեք խմբի՝

1) պետական ռեժիմներ, որոնք սահմանվում և կարգավորվում են պետական իշխանության մարմինների կողմից

2) տարածաշրջանի ռեժիմներ, որոնք սահմանվում են պետական կառավարման տարածքային մարմինների կողմից

---

<sup>103</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ընդ. խմբ. պրոֆ. **Գ. Դանիելյանի**, Երևան, 2012, էջ 344-345:

3) տեղական ռեժիմներ, որոնք սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ մունիցիպալ կազմավորումների տարածքում:

Ընդ որում, հատուկ վարչաիրավական ռեժիմների որոշ տեսակներ կարող են ընդգրկվել վերը նշված բոլոր խմբերում (օրինակ՝ բնական-տեխնոգեն բնույթի արտակարգ դրության ռեժիմը):

Եթե որպես տարանջատման չափանիշ ընտրենք ռեժիմի **օբյեկտ-կրողին**, ապա առանձնացվում են՝

1) տարածքային (օրինակ՝ արտակարգ, ռազմական դրությունների, կարանտինի, տնտեսական գոտու) ռեժիմները,

2) օբյեկտային (օրինակ՝ ատոմային էներգետիկայի օբյեկտի) ռեժիմները,

3) հասարակական բարձր վտանգավորություն կամ պետական կարևոր նշանակություն ունեցող օբյեկտների, առարկաների հետ վարվելու (օրինակ՝ զենքի, պետական գաղտնիք բովանդակող փաստաթղթերի, անձնագրային) ռեժիմները,

4) գործառույթային գործունեության (օրինակ՝ արտակարգ իրավիճակների նախարարության մարմինների գործունեության, հակահրդեհային, տարհանման) ռեժիմները:

**Ըստ կարգավորման առարկայի** առանձնացվում են՝

1) բնապահպանական (օրինակ՝ արգելոցների, ազգային զբոսայգիների) ռեժիմները,

2) պետական անվտանգության ապահովման (օրինակ՝ պետական սահմանի, ռազմական օբյեկտների պաշտպանության) ռեժիմները,

3) հասարակական կարգուկանոնի պահպանության (օրինակ՝ արտակարգ դրության) ռեժիմները:

Ելնելով դրանց **իրավաբանական հատկություններից՝** տարբերակվում են սովորական և արտակարգ ռեժիմները: Վերջիններս կիրառվում են միայն սոցիալական կամ բնական-տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում՝ պայմանավորված, օրինակ, պետության դեմ ագրեսիայով, զանգվածային անկարգություններով, տարերային աղետներով:

Արտակարգ ռեժիմները բնակչության կենսագործունեության, տնտեսական և այլ գործունեության իրականացման, ինչպես նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հատուկ իրավական ռեժիմներ են այն սահմանվում այն տարածքում, որտեղ առաջ է եկել սպառնալիք անվտանգությանը և որը ճանաչված է արտակարգ դրության, զինված հակամարտության, ռազմական գործողությունների գոտի: Այսպիսի ռեժիմների տարբերիչ առանձնահատկություններն են՝

1) ֆիզիկական և իրավաբանական անձանց սահմանադրական իրավունքներն ու ազատությունները սահմանափակող միջոցների կիրառումը,

2) լրացուցիչ վարչաիրավական պարտականությունների և արգելքների սահմանումը,

3) ռեժիմի ապահովման համար իշխանության մարմիններին արտակարգ լիազորությունների տրամադրումը,

4) հատուկ կառավարման ձևերի կիրառումն այն տարածքում, որտեղ սահմանված է արտասովոր ռեժիմ:

Արտակարգ ռեժիմները ժամանակավոր հատուկ վարչաիրավական ռեժիմներ են, որոնք գործում են միայն արտակարգ իրավիճակի առկայության ժամանակահատվածում: Այդ ռեժիմների գործողությունը ենթակա է դադարեցման, եթե վերացել են դրանց սահմանման համար հիմք հանդիսացած հանգամանքները:

Իրավական միջոցների առանձնահատկությունները, որոնք կիրառվում են վարչական-իրավական ռեժիմներով, հանդիսանում է այն, ուր նրանք գործում են պետության անմիջական մասնակցության դեպքում պետական կառավարման լիազորված մարմինների միջոցով, այսինքն իրականանում են վերջիններիս ձեռնարկատիրական գործունեության միջոցով: Վարչական-իրավական ռեժիմների գործողությունը ապահովվում է նրանց կողմից նշանակված պահանջների կատարման, վերահսկողության համակարգով, իսկ անհրաժեշտության դեպքում վարչական-իրավական միջոցների համակարգի կիրառման հնարավորությամբ:

Քաղաքացիական իրավունքում առանձին գիտնականներ ենթադրում են, որ իրավական ռեժիմը բացահայտվում է հատուկ կանոններում, որոնց ենթարկվում են քաղաքացիական-իրավական ինստիտուտները, քաղաքացիական իրավունքների

առաջացման, իրականացման ու դադարեցման առանձնահատկությունները ուսումնասիրվող երևույթի հանդեպ:

Քաղաքացիական իրավունքում իրավական ռեժիմի օգնությամբ սահմանվում է այն իրավական սեկտորը, որը մատնանշում է առանձին սուբյեկտին, թե ինչպես նա պետք է իրեն դրսևորի քաղաքացիական իրավահարաբերությունների այլ մասնակիցների հետ այն հարաբերություններում, որոնք ձևավորվում են քաղաքացիական իրավունքի այս կամ այն օբյեկտի առիթով: Դրանով իսկ դիտարկվող բնագավառում իրավական ռեժիմը բնորոշում է սուբյեկտիվ իրավունքների ու իրավաբանական պարտականությունների համալիր, որոնք առաջանում են քաղաքացիական իրավունքի սուբյեկտների մոտ քաղաքացիական իրավունքի օբյեկտների հանդեպ: Այժմ քննարկենք քաղաքացիական-իրավական ռեժիմի հիմնական առանձնահատկությունները:

Քաղաքացիական իրավունքի առարկան են կազմում գույքային հարաբերությունները՝ անձնական գույքային հարաբերությունները, որոնք կապված են գույքայինի հետ, անձնական ոչ գույքային հարաբերությունները, որոնք կապված չեն գույքայինի հետ:

Գույքային հարաբերությունները կազմում են հարաբերությունների հիմնական խումբը, որոնք կարգավորվում են քաղաքացիական իրավունքի նորմերով: Որպես գույքային սովորաբար հասկանում են հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են տարբեր նյութական բարիքների առիթով, այսինքն առարկաների, աշխատանքների, ծառայությունների և այլ ունեցվածքի առիթով այս բառի լայն իմաստով:

Անձնական ոչ գույքային իրավունքները, որոնք կապված են գույքայինի հետ, հարաբերություններ են, որոնք առաջանում են մտավոր սեփականության օբյեկտների կիրառման առիթով:

Անձնական ոչ գույքային հարաբերությունները, որոնք կապված չեն գույքայինի հետ, հարաբերություններ են, որոնք առաջանում են ոչ նյութական բարիքների՝ չօտարված իրավունքների ու ազատությունների առիթով:

Քաղաքացիական-իրավական մեթոդն իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների կարգավորման դիսպոզիտիվ, թույլատվական միջոց, որը բնորոշվում է սուբյեկտներին իրավունակության, դիսպոզիտիվության ու

իրավաբանական հավասարության սկզբի հիման վրա նախաձեռնության կարողությունների ընձեռմամբ, ապահովում է իրավահարաբերությունների հաստատումը կողմերի իրավական ու գույքային ինքնուրույնության հիման վրա:

Քաղաքացիական-իրավական կարգավորման մեթոդի թույլատվական դիսպոզիտիվ բնույթի տեսանկյունից քաղաքացիական-իրավական միջոցների առանձնահատկությունը ռեժիմային իրավական կարգավորման շրջանակներում հանդիսանում է թույլատվությունների գերակա դերը և արգելքները, պարտականությունների ծառայողական դերը:

Հիմնական քաղաքացիական-իրավական միջոցների այսպիսի յուրահատուկ համադրությունը ուղղված է լիազորված անձի՝ իր կամքով գործելու հնարավորության ու երաշխիքի ապահովմանը՝ համաձայն քաղաքացիական օրենսդրության հիմնական սկզբունքների:

Քաղաքացիական-իրավական նորմերի հիմնական առանձնահատկությունը հանդիսանում է նրանց համակարգում նորմ-պայմանագրային նորմերի, սովորական նորմերի առկայությունը: Քաղաքացիական-իրավական հարաբերությունները առաջանում են, փոփոխվում ու դադարում քաղաքացիական շրջանառության կամքով և իրենցից ներկայացնում են հավասարության հարաբերություններ: Իրավունքի իրականացման ակտերի համակարգում իշխանական իրավակիրառումն ունի օժանդակ նշանակություն և իրականացվում է միայն լիազորված սուբյեկտի իրավաարտահայտությամբ:

Իրավական ռեժիմների առանձնահատկությունների՝ բնագավառային իրավական ռեժիմի միասնական ընդհանուր տեսական հիմնադրույթի մեջ դիտարկման արդյունքում կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները:

Ռեժիմային մոտեցման շրջանակներում իրավունքի բնագավառները հանդես են գալիս ոչ միայն որպես իրավական նորմերի միասնականություն, որոնք միավորված են ըստ ցեղային նշանի, այլ որպես համալիր նորմատիվ-իրավական գոյացություններ, որոնք ներառում են իրավական կարգավորման իրավական գործիքներ ու մեխանիզմներ, միջոցներ ու մեթոդներ, որոնք իրավունքի սուբյեկտներին թույլ են տալիս որոշակի բնագավառում իրականացնել իրենց

իրավունքներն, օրինական շահերին ու խուսափել իրավական կարգավորման նպատակների ձեռքբերման խոչընդոտներից:

Արդյունքում, ճյուղային իրավական ռեժիմը կարելի է սահմանել, որպես հասարակական հարաբերությունների որոշակի բնագավառի իրավական կարգավորման հատուկ կարգ, որը հիմնված է իրավական միջոցների ու եղանակների որոշակի համադրության վրա իրավական կարգավորման բնագավառային առարկայի ու մեթոդի, բնագավառային սկզբունքների գործողության շրջանակներում, որոնք ուղղված են կարգավորվող շրջանում օպտիմալ սոցիալական իրավիճակի ձեռքբերմանը:

Ճյուղային իրավագիտության մշակումներում կարելի է նկատել իրավական ռեժիմի տրամաբանական անհակասական տեսության բացակայությունը:

Հետազոտությունը տվյալ բնագավառում հիմնականում հիմնվում է որոշակի օբյեկտների, գործունեության տեսակների, սուբյեկտների բնութագրի վրա, որոնք կապված են այս կամ այն բնագավառի իրավական կարգավորման գործողության հետ, «իրավական ռեժիմ» եզրույթը կիրառվում է գիտական-բնագավառագետների կողմից ազատորեն ու հաճախ չհիմնավորված կերպով, առանց դիտարկվող կատեգորիայի իրական էության ու նախատեսման հաշվառման:

Որպես, եզրակացություն՝ կարելի է արձանագրել այն փաստը, որ ճյուղային իրավագիտական ներկայացուցիչները գտնվում են յուրահատուկ մեթոդաբանական վակուումի մեջ, «ստիպված են» հայտնագործել իրավական ռեժիմի իրենց հիմնադրույթը: Իրավունքի տեսությունը, հաճախ փակվելով ֆունկցիոնալ մոտեցման շրջանակներում, չի ձգտում կիրառել ճյուղային ֆունկցիոնալ մոտեցումների փորձը իրավական ռեժիմ հասկացության մշակման մեջ, որը կարելի է ճանաչել մեթոդաբանական բացթողում, որը որոշակիորեն չեզոքացվում է սույն ատենախոսական հետազոտության կողմից:

### 3.4. Հանրային-իրավական ու մասնավոր-իրավական ռեժիմները. համեմատական վերլուծություն

Իրավական ռեժիմների առանձին տեսակների՝ հանրային-իրավական և մասնավոր-իրավական ռեժիմների հետազոտությունը՝ պետք է նշել, որ նրանք գործնականում ուսումնասիրված չեն իրավունքի տեսությունում:

Հանրային-իրավական ու մասնավոր-իրավական ռեժիմների ուսումնասիրությունը պետք է կատարվի ոչ թե հանրային ու մասնավոր իրավունքի առանձին ճյուղերի հանդեպ, այլ որպես երևույթներ, որոնք բնորոշում են իրավունքի միասնական ենթահամակարգերը հարմարեցված առարկայով, մեթոդով, իրավական կարգավորման մեխանիզմով ու սկզբունքներով: Այն ոչ միայն իրավունքի ճյուղերի մեխանիկական միասնականություն է, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունների որոշակի տիպ: Բանը նրանումն է, որ իրավունքի նորմերի տարանջատումը իրավունքի ճյուղերի հիմնվում է մեկ չափանիշի վրա՝ իրավունքի ու հասարակական հարաբերությունների համագործակցություն, իսկ իրավունքի նորմերի մասնավոր ու հանրային տեսակների բաժանման հիմքում ընկած է հասարակության ու հանրային իշխանության համագործակցությունը:

Այսպես, Ս.Ս. Ալեքսեևը, հիմնավորելով հանրային իրավունքի ու իրավունքի բնագավառի անհամընկնությունը, գրում է հետևյալը. «հանրային իրավունք» և «վարչական իրավունք» հասկացությունների մերձավորության հետ մեկտեղ, նրանց միջև չի կարելի դնել հավասարության նշան: Եթե հանրային իրավունքը արտահայտում է իրավունքի սկիզբը, որոնք կապված են բանականության հետ, նրա իմաստը, ապա վարչական իրավունքը ազգային իրավաբանական համակարգի ճյուղ է»:<sup>104</sup>

Ճյուղային ու «դուալիստական» մոտեցումների անհամապատասխանության օգտին փաստարկը կայանում է նրանում, որ հանրային ու մասնավոր իրավունքում բաժանման ճյուղային չափանիշների կիրառման դեպքում տեղի է ունենում հանրային ու մասնավոր

<sup>104</sup> Տե՛ս **Алексеев С.С.** Восхождение к праву. Поиски и решения. М., 2001, էջ 549:

իրավունքների մեթոդների ու առարկաների հատում, իսկ ավելի ճիշտ բնագավառների հատում, որոնք պատկանում են մասնավոր հանրային իրավունքին:

Օրինակ, կառավարչական հարաբերությունները ավանդապես կազմում են վարչական իրավունքի առարկան, նշանակում է՝ հանրային իրավունքի առարկան: Սակայն կառավարչական հարաբերությունները նույնպես կարող են հանդիսանալ քաղաքացիական իրավունքի առարկա: Խոսքը գնում է, այսպես կոչված «կորպորատիվ հարաբերությունների» մասին, որոնց բնույթը հիմնվում է իշխանության ու ենթակայության հարաբերությունների վրա:

Ինչ վերաբերում է իրավական կարգավորման մեթոդների հատմանը, որոնք կիրառվում են իրավունքի հանրային ու մասնավոր ոլորտների կողմից, ապա առկա է իրավունքի բնագավառների շարք, ուր կիրառվում են ինչպես հանրային-իրավական, այնպես էլ մասնավոր-իրավական մեթոդներ:

Դա, օրինակ, աշխատանքային իրավունքն է, որը հիմնվում է մի կողմից դիսպոզիտիվ նորմերի, պայմանագրի ազատության, կողմերի ինքնավարության ու իրավաբանական հավասարության, մյուս կողմից աշխատանքային ռեժիմի, պաշտպանության, պատասխանատվության բնագավառներում իմպերատիվ նորմերի վրա: Նույնը կարելի է ասել ընտանեկան իրավունքի մասին, ուր հանրային-իրավական մեթոդների միջոցով կարգավորվում են այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են ծնողական իրավունքներից զրկումը և սահմանափակումը:

Այսպիսով, հանրային-իրավական ռեժիմը նման չէ վարչական-իրավական, իսկ մասնավոր-իրավականը՝ քաղաքացիական իրավականին: Դրանով իսկ առաջանում է հանրային ու մասնավոր-իրավական ռեժիմների, որպես իրավագիտության ինքնուրույն կատեգորիաների պահանջմունք:

Այժմ անհրաժեշտ է անմիջականորեն սկսել հանրային-իրավական ռեժիմների հետազոտությունը:

Այսպես Յու.Ա. Տիխոմիրովը հանրային իրավունքի առարկան կապում է հետևյալ օբյեկտների հետ՝ պետության ու նրա ինստիտուտների կառուցվածքն ու գործարկումը, քաղաքացիական հասարակության ինստիտուտները, ինքնակառավարման մեխանիզմն ու

մակարդակները, իրավական համակարգի, իրավաստեղծման ու իրավակիրառման հիմքերը, միջպետական հարաբերությունների ու միջազգային կազմակերպությունների նորմերն ու հաստատությունները:<sup>105</sup> Դրա հետ մեկտեղ հեղինակը կատարում է հետևյալ նկատողությունը, վերոնշյալներից որոշ օբյեկտներ բացառիկ են, քանի որ կապված են միայն հանրային իրավունքի հետ, իսկ ուրիշները հարակից են, քանի որ կարող են անցնել մասնավոր իրավունքի բնագավառային կարգավորում: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել, հանրային-իրավական կարգավորման սահմանները:

<<Հանրային շահ>> հասկացությունը ոչ թե լոկ պարզ տեսական վերացական կառուցվածք է: Տվյալ հասկացությունը ակտիվորեն կիրառվում է օրենսդրությունում:

Հանրային շահերի, նրա հնարավոր խախտման կամ պաշտպանության հետ են կապված որոշակի իրավական հետևանքներ:

Գիտության մեջ առկա հանրային շահ հասկացության մասին տեսանկյունները թույլ են տալիս ձևակերպել այնպիսի նրա բաղկացուցիչներ, ինչպիսիք են՝

- սերտ կապը հասարակական պահանջմունքների հետ,
- ըստ բնույթի նրանք յուրահատուկ անձնական, խմբակային շահեր են,
- կողմեր են հանդիսանում հասարակությունը և պետությունը,
- ընդունվում է պետության կողմից նորմատիվ-իրավական ամրագրման միջոցով:

Իրավական ռեժիմի հասկացման ընդհանուր տեսական մոտեցման հիման վրա կարելի է կայացնել, որ հանրային-իրավական ռեժիմը հանրային շահերի ապահովման միջոց է, որոնք կարգավորվում են հանրային իրավունքի կողմից, հասարակական հարաբերությունների այն բնագավառներում, ուր անհրաժեշտ է նման համալիր կարգավորիչ կամ պաշտպանական ազդեցություն:

Հանրային-իրավական ռեժիմի ընդհանուր ուղղությունների սահմանման նորմատիվ-իրավական հիմքը կարելի է ճանաչել բյուջետային օրենսդրության նորմերը, որը սահմանում է պետական ծախսերի հիմնական ուղղությունները:

---

<sup>105</sup> Տե՛ս **Тихомиров Ю.А.** Публичное право. М., 1995, էջ 31-32:

ա. Ընդհանուր պետական հարցեր՝ ՀՀ նախագահի, բարձր պաշտոնատար անձանց պետական իշխանության մարմինների ու մունիցիպալ կազմավորումների ներկայացուցչական մարմինների գործարկումը, դատական համակարգը, հարկային, մաքսային, ֆինանսական մարմինների ու ֆինանսական վերահսկողության մարմինների գործունեության ապահովում, ընտրությունների, հանրաքվեների անցկացման ապահովումը, միջազգային հարաբերությունները և միջազգային համագործակցությունը, պետական նյութական ներուժը, հիմնարար հետազոտություններ, պահուստային հիմնադրամներ, կիրառական գիտական հետազոտություններ պետական հարցերի ոլորտում, այլ համապետական հարցեր:

բ. Ազգային պաշտպանությունը:

գ. Ազգային անվտանգությունը և իրավապաշտպան գործունեությունը, դատախազական և ոստիկանական մարմինները, արդարադատության մարմիններ, պատժի կատարման համակարգ, անվտանգության մարմիններ, սահմանապահ ծառայության մարմիններ, թմրանյութերի ու հոգեմետ նյութերի շրջանառության վերահսկողության մարմիններ, բնական ու տեխնոլոգիական բնույթի արտակարգ իրավիճակների տարածքի ու ազգաբնակչության պաշտպանություն, քաղաքացիական պաշտպանություն, հրդեհային անվտանգության ապահովում, միգրացիոն քաղաքականություն, ներքին զորքերի, գործադիր իշխանության փրկարարական ծառայությունների, որն լիազորված է քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար, իրավապահ ու այլ մարմինների մոդերնիզացիա, կիրառական գիտական հետազոտություններ ազգային անվտանգության ու իրավապահ գործունեության բնագավառում, այլ հարցեր ազգային անվտանգության ու իրավապահ գործունեության ոլորտում:

դ. Ազգային տնտեսություն, համատնտեսական հարցեր, վառելիքային-էներգետիկ համալիր, տիեզերական տարածության հետազոտություն և կիրառում, հանքային-հումքային բազայի վերարտադրություն, գյուղատնտեսություն և ձկնաբուծություն, ջրային տնտեսություն, անտառային տնտեսություն, տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն, կապ և ինֆորմատիկա, կիրառական գիտական հետազոտություններ

ազգային տնտեսության բնագավառում, այլ հարցեր ազգային տնտեսության բնագավառում:

ե. Բնակկենցաղային տնտեսություն, բնակարանային տնտեսություն, կենցաղային տնտեսություն, բարեկեցություն, կիրառական գիտական հետազոտություններ բնակկենցաղային տնտեսության ոլորտում, այլ հարցեր բնակկենցաղային տնտեսության ոլորտում,

զ. Շրջակա միջավայրի պաշտպանություն, բնապահպանական վերահսկողություն, թափոնների հավաքում և վերացում, հոսքային ջրերի մաքրում, բնական ու կենդանական աշխարհի օբյեկտների ու նրանց սնուցման միջավայրի պաշտպանություն, կիրառական գիտական հետազոտություններ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում, այլ հարցեր շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում,

է. Կրթություն, նախադպրոցական կրթություն, ընդհանուր կրթություն, սկզբնական մասնագիտական կրթություն, միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական նախապատրաստում, վերապատրաստում ու որակավորման բարձրացում, բարձրագույն ու հետբուհական մասնագիտական կրթություն, երիտասարդական քաղաքականություն երեխաների առողջացում, կիրառական գիտական հետազոտություններ կրթության ոլորտում, այլ հարցեր կրթության ոլորտում:

ը. Մշակույթ, կինեմատոգրաֆիա, կիրառական գիտական հետազոտություններ մշակույթի, կինեմատոգրաֆիայի ոլորտում, այլ հարցեր մշակույթի, կինեմատոգրաֆիայի ոլորտում:

թ. Առողջապահություն, կայուն բժշկական օգնություն, ամբուլատոր օգնություն, բժշկական օգնություն բոլոր տիպի ցերեկային ստացիոնարներում, շտապ բժշկական օգնություն, սանատոր-առողջապահական օգնություն, դոնորի արյան ու նրա բաղկացուցիչների նախապատրաստում, վերամշակում, պահպանում և ապահովում, սանիտարական-համաճարակաբանական բարեկեցություն, կիրառական-գիտական հետազոտությունները առողջապահական ոլորտում, այլ հարցեր առողջապահության ոլորտում:

ժ. Սոցիալական լայն քաղաքականություն, կենսաթոշակային ապահովում, բնակչության սոցիալական սպասարկում, բնակչության սոցիալական ապահովություն, մանկության ու ընտանիքի պաշտպանություն, կիրառական գիտական հետազոտություններ սոցիալական քաղաքականության ոլորտում, այլ հարցեր սոցիալական քաղաքականության ոլորտում:

ի. Ֆիզիկական մշակույթ և սպորտ, զանգվածային սպորտ, բարձրագույն ձեռքբերումների սպորտ, կիրառական գիտական հետազոտություններ ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի բնագավառում, այլ հարցեր ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի բնագավառում, ՋԼՄ, հեռուստատեսություն և ռադիոհեռարձակում, պարբերական տպագրություն և հրատարակություն, կիրառական գիտական հետազոտություններ ՋԼՄ բնագավառում, այլ հարցեր ՋԼՄ բնագավառում:

Բյուջետային դասակարգման տվյալ բաժինները և ենթաբաժինները հանդես են գալիս որպես հանրային-իրավական ռեժիմների սահմանման ու գործարկման բնագավառների համար հիմքեր:

Ժանրային իրավունքի մեթոդի հետազոտությունը չի կարող կառուցվել միայն իրավունքի բնագավառների կարգավորման մեթոդների վերլուծության հիման վրա, որոնք մտնում են հանրային իրավունքի համակարգ:

Այս առումով անպտղաբեր են համարվում հանրային իրավունքի մեթոդի առանձին բնագավառների մեթոդների բնութագրերի միջոցով բացահայտելու փորձերի ճանաչումը, որոնք կենտրոնացած կերպով արտահայտում են հանրային իրավունքի առանձնահատկությունները:

Այսպիսով, հանրային իրավունքի մեթոդը բնագավառային մեթոդ չէ, ոչ էլ բնագավառային մեթոդների միասնականություն, այն այլ կարգի երևույթ է: համապատասխանաբար, հանրային-իրավական կարգավորման մեթոդի հետազոտությունը պետք է ուղղորդվի այն բանի պարզորոշ գիտակցմամբ, որ հանրային իրավունքը չի կարող դիտարկվել բնագավառային բնութագրերում, ազգային իրավունքի բնագավառային կառուցվածքի մասին ընդհանուր պատկերացումներում:

Իրավունքի տեսության մեջ կան առանձին գիտնականների՝ հանրային-իրավական մեթոդների բնութագրման փորձեր:

Առավել տարածված է հանրային-իրավական մեթոդի որպես հասարակական հարաբերությունների վրա ազդեցության իմպերատիվ միջոցի բնութագրությունը:

Այսպես, սուբորդինացիան հանրային իրավահարաբերություններում պայմանավորել է հանրային իրավունքի մեթոդի որպես սուբորդինացիոն, համապետական հետաքրքրությունների իրավունքների բոլոր սուբյեկտների կենտրոնացած ենթակայության ապահովմանն ուղղված երևույթի սահմանումը:

Կատարելով միջանկյալ եզրահանգում՝ կարելի է ասել, որ հանրային իրավունքի մեթոդը կարելի է անվանել իմպերատիվ, իշխանության ու ենթակայության մեթոդ, սուբորդինացիոն, կենտրոնացած կարգավորման մեթոդ:

Իրավագիտության մեջ առկա են հանրային-իրավական մեթոդի յուրահատուկ համալիր սահմանման փորձեր:

Հանրային իրավունքի մեթոդը իրավական կարգավորման առարկայով ու օրենսդրի կամքով պայմանավորված իրավական միջոցների համակարգ է, որոնք սահմանվում են կենտրոնացած կերպով պաշտոնական իրավաստեղծման գործընթացում, որոնց շրջանում հիմնական են համարվում պահանջ-միջոցները, միջոց-սահմանափակումները, որոնք կիրառվում են՝ անկախ կարգավորվող հարաբերությունների մասնակիցներից:

Սակայն տվյալ սահմանման մեջ հեղինակը նույնականացնում է իրավական կարգավորման միջոցներն ու եղանակները: Այսպիսի մոտեցման դեպքում կա հանրային իրավունքի հանրային-իրավական կարգավորման մեխանիզմով փոխարինման որոշակի վտանգ, քանի որ մեթոդը չի համակցվում իրավական միջոցներին, այլ պետք է նրանց վրա հիմնվի: Միևնույն ժամանակ չի կարելի չնշել հեղինակի ուշադրությունը համապատասխան իրավական նախատեսումների սահմանման միջոցների հանդեպ, որը արժեքավոր է ինչպես մեթոդի բնութագրման, այնպես էլ հանրային-իրավական կարգավորման մեխանիզմի համար, որի միջոցով արտահայտվում է հանրային-իրավական ռեժիմը:

Հանրային իրավունքի մեթոդի առանձնահատկությունները կայանում են հետևյալում՝

- իրավական կարգավորման մեջ գերակայում են դրական պարտավորությունները ի հակակշիռ թույլատվություններին, որոնք տարածված են քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային իրավունքում,

- տվյալ մեթոդը իմպերատիվ է. սուբյեկտները չեն կարող իրենց կամքով ձեռք բերել իրավունքներ ու պարտականություններ, սահմանել նրանց բովանդակությունը հայտնի սահմաններում, իրականացնել դրանք: Սուբյեկտների իրավունքները երկրորդական, ածանցյալ են պարտականություններին, որոնք ամրագրված են օրենսդրության մեջ,

- տվյալ մեթոդը կոնֆորմիստական է, հակադիր է իրավական նախաձեռնությանը, իրավունքի սուբյեկտները իրավահարաբերությունների մեջ են մտնում ոչ իրենց կամքով, այլ միայն հետևում են պետության համապատասխան ակտերի նախատեսումներին,

- մեթոդը բնութագրվում է սուբյեկտների անհավասարությամբ, որոշ սուբյեկտներ ունեն իշխանական սահմանումներ հրապարակելու իրավունք, իսկ ուրիշները՝ չունեն:

Այսպիսով, իրավունքի հանրային բնագավառների իրավական կարգավորման մեթոդի համար բնորոշ են՝

- իմպերատիվությունը, որը հիմնված է դրական պարտականությունների ու արգելքների վրա,

- սուբյեկտներից մեկին լիազորությունների տրամադրում իր իրավասության շրջանակներում,

- սուբյեկտների անհավասարություն, «իշխանություն-ենթակայություն» հարաբերությունների կառուցում:

Իրավունքի հանրային բնագավառների իրավական կարգավորման մեխանիզմը հիմնվում է դրական պարտականությունների վրա, սկզբում առաջանում է պարտավորեցնող իրավական նորմը, հետո հարաբերական իրավահարաբերությունը և իրավաբանական պարտականությունների իրականացումը՝ ուղղորդելով դեպի պարտականությունների կատարման պահանջները: Ըստ Ալեքսեևի՝ իրավական միջոցների այս համալիրում իրավաբանական կարգավորման մեխանիզմին էներգետիկ ուժ է տալիս ոչ այդքան իրավունքի սեփական ուժը, որքան պետական իշխանությունը:

Գիտության մեջ արտահայտված է կարծիք, որ հանրային իրավունքին բնորոշ չէ իրավական կարգավորման հատուկ մեխանիզմ, քանի որ հասարակական հարաբերությունների վրա ազդեցության մեխանիզմը իրավունքի համար ընդհանուր երևույթ է, որը կապված չէ նրա կառուցվածքային տարրերի բնույթի հետ:

Չմտնելով վերոնշյալ դատողության մասին գիտական բանավեճի մեջ՝ այնուամենայնիվ պետք է պարզաբանել տվյալ հարցի վերաբերյալ սեփական դիրքորոշումը: Այսպես, հանրային-իրավական կարգավորման մեխանիզմի տարրերը դիտարկվում են որպես համապատասխան իրավական ռեժիմների, նրանց բովանդակության բաղկացուցիչներ: Իրավական ռեժիմը իրավական հատուկ մեխանիզմ է, որն ուղղված է դեպի օբյեկտների կոնկրետ տեսակներ, որի շրջանակներում վերջիններս գործում են: Այն իր մեջ ներառում է մի քանի իրավական բլոկեր, որոնցից յուրաքանչյուրը իրականանում է իրավական կարգավորման մեխանիզմի միջոցով: Դրա համար էլ իրավական ռեժիմը կոնկրետ սոցիալական իրավիճակի վրա իրավական կարգավորման մեխանիզմի պրոյեկցիա է:

Իրավունքի հանրային բնագավառներում իրավական կարգավորման մեխանիզմը իրավական ռեժիմներին մատակարարում է իրավական միջոցների հատուկ հավաքածուով, որոնք հաճախ չեն պահանջում մասնավոր իրավական բնագավառներ: Դրա հետ կապված՝ կարելի է թույլ տալ իրավունքի հանրային բնագավառներում իրավունքների ու պարտականությունների իրականացման հատուկ մեխանիզմների գործողություն, հատկապես որ կանոնակարգման հանրային-իրավական միջոցների յուրահատկությունը գիտնականների կողմից չի վիճարկվում:

Հանրային-իրավական կարգավորման միջոցների հանրագումարը, որոնք կազմում են համապատասխան մեխանիզմ, բավականին լայն է: Ընդհանուրն այն է, որ այդ ամենը ուղիղ իրավական ազդեցության միջոցներ են: Դրանք հանրային-իրավական նորմեր, հարաբերություններ, իրավունքների ու պարտականությունների իրականացման ակտեր են, որոնք բնորոշ են հանրային իրավունքին, իրավակիրառիչ ակտեր և այլն:

Այսպես հանրային-իրավական կարգավորման շրջանակներում հիմնականում կիրառվում են իրավական նորմերի հետևյալ տեսակները՝

- նորմ-սահմանումներ, որոնք պարունակում են այս կամ այն հասկացությունների նորմատիվ նշանակությունը,

- նորմ-սկզբունքներ, որոնք ամրագրում են իրավական կարգավորման հիմնական օրինաչափությունները այս կամ այն հանրային-իրավական բնագավառում,

- նորմ-նպատակներ, որոնք ամրագրում են վերջիններիս որպես գործունեության որոշակի տեսակների պարտադիր նորմատիվ կողմնորոշում,

- պարտավորեցնող նորմեր, որոնք պարունակում են որոշակի գործողությունների իրականացման նախատեսումներ սուբյեկտների համար,

- նորմ-արգելքներ, որոնք ճանաչում են որոշակի գործողություններ անթույլատրելի ու հասարակայնորեն վնասակար իրավական տեսանկյունից:

Հանրային իրավունքի սկզբունքները, որպես հիմնարար, ելակետային դրույթներ սահմանում են իրավական կարգավորման ուղղությունները, նաև գտնվում են իրավական կարգավորման մեթոդից ուղիղ կախվածության մեջ:

Հանրային-իրավական ռեժիմների հիմնական բաղադրիչների վերլուծության արդյունքում կարելի է ընդգծել դրանց հետևյալ առանձնահատկությունները՝

- մանրամասն կերպով ամրագրվում են նորմատիվ-իրավական ակտերում,
- կրում են իմպերատիվ բնույթ,
- հիմնված են դրական պարտավորեցումների և արգելքների վրա,
- իրավական սուբյեկտների միջև հարաբերությունները կառուցված են «իշխանություն- ենթարկում» գծագրով,

- իրենց զինանոցում օգտագործում են իրավական միջոցների սպեցիֆիկ հավաքածու կենտրոնացման իրավական կարգավորման սահմաններում:

- հիմնված են հանրային- իրավական սկզբունքների հատուկ համակարգի գործունեության վրա,

Հիմա հարկ է դիտարկել մասնավոր իրավունքի բնույթի ռեժիմները:

Քանի որ հանրային-իրավական կարգավորման առարկայի, մեթոդի, մեխանիզմի և սկզբունքների որոշ պրոբլեմային ասպեկտներ հատուկ են նաև մասնավոր իրավական

կարգավորմանը, մասնավոր իրավական ռեժիմները բնութագրելիս այս պահերը ավելի քիչ մանրամասնությամբ կդիտարկվեն:

Մասնավոր իրավունքի առարկան ավանդական կերպով կազմում են գույքային և ոչ գույքային հասարակական հարաբերությունները առանձին ֆիզիկական և իրավաբանական անձանց անհատական (խմբակային, ոչ պետական) շահերով, որտեղ հավասար են իրենց իրավունքներով, իսկ նրանց շահերը իրականանում պաշտպանվում են բացառապես սեփական նախաձեռնությամբ:

Մասնավոր իրավունքի իրավական կարգավորման առարկան որոշելիս կենտրոնական տարրը գիտնականների կողմից ճանաչված է մասնավոր շահի կատեգորիան:

«Մասնավոր շահ» հասկացության հայացքների վերլուծությունը հանրային շահին հակառակ թույլ է տալիս վերհանել նրա հետևյալ առանձնահատկությունները՝

- ինքնավար և հարաբերականորեն ինքնուրույն սուբյեկտին պատկանելությունը,
- սուբյեկտի (սուբյեկտների խմբի) պահանջմունքներով, նպատակներով և դրդապատճառներով պայմանավորված լինելը,
- մասնավոր իրավունքի նորմերով կարգավորումը,
- ինքնակամ իրականացումը,
- խախտված մասնավոր շահի պաշտպանությունը հենց տվյալ անձի ակտիվ

գործողությունների դեպքում:

Հանրագումարելով վերը ասվածը, նշենք որ մասնավոր իրավական ռեժիմները սահմանվում են և գործում են մասնավոր (ֆիզիկական, իրավաբանական) անձանց միջև գույքային և անձնական ոչ գույքային հարաբերություններում, որոնք ստեղծվում են մասնակիցների կամքով, որոնք հիմնված են մասնակիցների իրավահավասարության վրա՝ կողմերի իրավահավասարության վրա:

Մասնավոր իրավունքի մեթոդ՝ դիսպոզիտիվ, կորրդինացիոն, ապակենտրոնացված կարգավորման:

Դիսպոզիտիվությունը նշանակում է սուբյեկտին տրամադրել հնարավորություն իրականացնելու ընդհանուր առմամբ իրավունակության իր հայեցողությամբ ձեռք բերելու

կամ ձեռք չբերելու սուբյեկտիվ իրավունքներ, ընտրել դրանք ձեռք բերելու կոնկրետ միջոցներ, կարգավորել սեփական հայեցողության սահմաններում հաստատված իրավահարաբերության բովանդակությունը, տնօրինել առկա սուբյեկտիվ իրավունքը, կիրառել կամ չկիրառել խախտված իրավունքի պաշտպանության միջոցառումներ:

Ինչ վերաբերում է մասնավոր իրավական կարգավորման մեխանիզմին, ապա հարկ է նշել նրա մեջ մտնող մասնավոր իրավական միջոցների հետևյալ առանձնահատկությունները:

Մասնավոր իրավունքի նորմերը սուբյեկտին չեն վերագրում որոշակի վարքագիծ, այլ ընդամենը պարունակում են վարքագծի տարբերակ, որի հետ կողմերը կարող են և չհամաձայնել, հաստատելով այլ բան իրենց համաձայնությամբ:

Հանրային իրավական միջոցներն ապահովում են սոցիալապես կարևոր նպատակներին հասնելը, որպես կանոն, նրանց, որոնք անմիջականորեն ամրագրված են իրավունքի մեջ, իսկ իրավունքի իրականացնող գործունեության սուբյեկտների նպատակները բավարարում են անուղղակի կերպով՝ հանդես գալով միայն բացասական իմաստով, երբ իրավական միջոցի ընտրությունը տեղի է ունենում սուբյեկտի կողմից նրա համար, որ նա չենթարկվի պատասխանատվության, ինչը կարող է դառնալ խոչընդոտ նրա անձնական նպատակին հասնելիս և նրա անձնական պահանջումները բավարարելիս:

Մասնավոր-իրավական միջոցները նախատեսված են իրավաիրականացնող գործունեության սուբյեկտների նպատակների բավարարման համար, և իրավունքում նպատակներին նրանք բավարարում են միջնորդավորված կերպով, նրանց՝ որպես իրավունքի սուբյեկտներ, ընտրության ուղիով սեփական նպատակներին հասնելու համար:

Մասնավոր-իրավական միջոցների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրանց բովանդակությունը սահմանվում է իրավունքի սուբյեկտներով այն ժամանակ, երբ օրենսդիրը սահմանում է սուբյեկտների նախաձեռնությունների իրականացման շրջանակները: Օրինակ, օրենսդիրը սահմանում է պայմանագրի, նրա կնքման ընթացակարգի հիմնական պահանջները, ամրագրում է պայմանների շարքը, որոնք

անհրաժեշտ են պայմանագիրը կնքված ճանաչելու համար, իսկ այս պայմանների կոնկրետացում իրականանում է պայմանագրային հարաբերությունների կողմերի միջոցով:

Մասնավոր իրավունքի համակարգի ոչ բնագավառային բնույթի ուժով մասնավոր իրավունքի սկզբունքները կրում են ոչ թե նեղ ճյուղային ինստիտուցիոնալ, այլ հարակից, միջճյուղային բնույթ:

Կիրառելով մասնավոր իրավունքի սկզբունքների դասակարգման հանդեպ վերը մշակված մոտեցումը՝ պետք է արձանագրել, որ մասնավոր իրավունքի սկզբունքների համակարգը իր մեջ ներառում է երեք ենթախմբեր՝ ընդհանուր, միջճյուղային, ճյուղային:

Մասնավոր իրավունքի ընդհանուր սկզբունքներ բնորոշ են իրավունքի բոլոր ճյուղերի համար՝ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր:

Մասնավոր իրավունքի միջճյուղային շարքին են դասվում մասնավոր-իրավական հարաբերությունների սուբյեկտների հավասարության սկզբունքը, պայմանագրի ազատության, դիսպոզիտիվության, աշխատանքային ու այլ տնտեսական, առաջին հերթին ձեռնարակատիրական, գործունեության ազատության պաշտպանության, սեփականության բոլոր ձևերի ճանաչման ու պաշտպանության, մրցակցության ազատության ու հակամենաշնորհային կարգավորման, սուբյեկտի իրավունքների չարաշահման անթույլատրելիության, նրանց բանական ու բարեխիղճ կիրառման սկզբունքները:

Մասնավոր իրավունքի ճյուղային սկզբունքներին են դասվում սկզբունքներ, որոնք բնորոշ են մասնավոր իրավունքի առանձին ճյուղային օրինակ, քաղաքացիական իրավունքին, քաղաքացիական հարաբերությունների մասնակիցների հավասարության սկզբունքը, սեփականության անձեռնմխելիության սկզբունքը, պայմանագրի ազատության, որևէ մեկի կողմից մասնավոր գործերին խառնվելու կամաձին միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման, իրավունքների խախտման վերականգնման ապահովման ու դատական պաշտպանության սկզբունքները:

Մասնավոր իրավունքում իրավական ռեժիմը կողմնորոշված է դեպի մասնավոր իրավիճակներ, որոնք կապված են կարգավորման համեմատաբար նեղ բնագավառի հետ:

Այստեղից բխում է իրավունքի հանրային բնագավառների հանդեպ պետության բարձր ուշադրությունը: Իրավունքի հանրային բնագավառներում իրավունքի սուբյեկտը տեղեկացվում է այն մասին, որ ընկնում է իրավական ռեժիմի գործողության ոլորտ և պետք է գործի որոշակի շրջանակներում՝ ճշգրտորեն հետևելով սահմանված նախատեսումներին:

Անհրաժեշտ է դիտարկել հանրային-իրավական ու մասնավոր-իրավական ռեժիմների նորմատիվ-իրավական ամրագրման առանձնահատկությունները կոնկրետ օրինակների վրա:

Այսպիսով, հանրային-իրավական ռեժիմի նորմատիվ իրավական ամրագրումը ունի հետևյալ առանձնահատկությունները՝

- հանրային-իրավական ռեժիմը մանրամասն մշակվել է օրենսդրական մակարդակում, մանրամասնորեն կարգավորվել են հիմնական տարրերը, որոնք կազմում են նրա բովանդակությունը,

- միջոցներ, որոնք նախատեսված են իրավական ռեժիմի կողմից, ինչպես նաև, ըստ նրանց կիրառման, իշխանական սուբյեկտների լիազորությունները, առանձնացված են վերջնական ցանկով,

- պետական իշխանության վերոնշյալ մարմինների ակտեր, որոնք իրավական ռեժիմ են պարունակում, որոնք իրենց հերթին հրապարակվել են իրավասության սահմաններում, պարտադիր են, ներքոհիշյալ մարմինների, կազմակերպությունների, նրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքացիների կողմից կատարման համար,

- ռեժիմային կարգավորման մեջ գերակայում են պարտավորեցնող և արգելող նորմերը, ինչպես նաև նորմերը, որոնք կարգավորում են իշխանական սուբյեկտների լիազորությունները:

Մասնավոր-իրավական ռեժիմի օրինակ կարող է ծառայել ամուսինների գույքի պայմանագրային ռեժիմը:

Տվյալ իրավական ռեժիմի բնագավառը հանդիսանում է անհատական հետաքրքրությամբ գույքային և ոչ գույքային հասարակական հարաբերությունները, այսինքն մասնավոր իրավական կարգավորման բնագավառը:

Այստեղ, ինչպես և առաջին դեպքում, որպես օրինակ դիտարկվում է իրավական վիճակը, որը ճանաչվում է օրենսդրի կողմից որպես իրավական ռեժիմ:

Ընտանեկան օրենսգրքով կանոնակարգվում են ամուսինների գույքի պայմանագրային ռեժիմի հետևյալ տարրերը՝

- իրավական ռեժիմի գործողության մեջ ներմուծման հիմունքներ, տվյալ իրավական ռեժիմի սուբյեկտներ,

- իրավական ռեժիմի օբյեկտներ, ինչպես նաև օբյեկտներ, որոնք չեն ընկնում տվյալ ռեժիմի գործողության տակ,

- իրավական ռեժիմի դադարեցման հիմունքներ:

Տվյալ իրավական ռեժիմը կանոնակարգվում է օրենսդրի կողմից մասնակիորեն: Նորմերը, որոնք կազմում են ամուսինների գույքի պայմանագրային ռեժիմի իրավական հիմքը, սուբյեկտների համար չեն նախատեսում որոշակի իրավունքներ ու պարտականություններ, այլ լոկ պարունակում են վարքագծի տարբերակ, որով կողմերը կարող են և չհամաձայնվել՝ սահմանելով այլ համաձայնություն:

Այսպես, համաձայն ամուսնաընտանեկան օրենսդրության ամուսինները իրավունք ունեն սահմանել ամուսնական պայմանագրի մեջ համատեղ պահպանման իրենց իրավունքներն ու պարտականությունները, միմյանց շահույթի մեջ մասնակցության միջոցները, ընտանեկան վճարումների մեջ յուրաքանչյուրի մասնակցության կարգը, սահմանել այն գույքը, որը կտրվի ամուսիններից յուրաքանչյուրին ամուսնալուծության դեպքում, ինչպես նաև ներառել ամուսնական պայմանագրի մեջ այլ դրույթներ, որոնք վերաբերում են ամուսինների գույքային հարաբերություններին:

Դրանով իսկ մասնավոր-իրավական ռեժիմի իրավական ամրագրումը տաբերվում է նրանով որ՝

- մասնավոր իրավական ռեժիմը բավականին սխեմատիկորեն մշակված է օրենսդրական մակարդակում, կարգավորված են միայն հիմնական տարրերը, որոնք կազմում են նրա բովանդակությունը,

- մասնավոր իրավական ռեժիմի չափումների ավելի մանրամասն սահմանումը հաղորդվում է կողմերին,

- իրավական ռեժիմի բովանդակության սահմանումը, որը չի կանոնակարգվել օրենսդիրի կողմից, իրականացվում է իրավական ռեժիմի սուբյեկտների համաձայնությամբ,

- ռեժիմային կարգավորման մեջ գերակայում են լիազորված նորմերը,

- որպես տեխնիկա-իրավաբանական միջոց չի կիրառվում ավարտուն շարքը:

Տալով հանրային և մասնավոր-իրավական ռեժիմների իրավական հետազոտությունների հանրագումարը, կարելի է արձանագրել, որ տվյալ երևույթները գոյություն ունեն, ունեն հատուկ նախանշաններ ու կոնկրետ բովանդակություն, որոնք կապված չեն բնագավառային իրավական ռեժիմների հետ, ոչ կարգավորվող հարաբերությունների ծավալի, ոչ էլ բովանդակության առումով:

Հանրային իրավական ու մասնավոր իրավական բնագավառների որոշակի մերձեցման ուժով, հանրային իրավական ռեժիմները ներթափանցում են մասնավոր-իրավական կարգավորման բնագավառ և հակառակը:

Ընտանեկան իրավունքում հանրային-իրավական ռեժիմների գործողությունը պայմանավորված է ընտանիքի, մայրության, հայրության և մանկության պետական աջակցության ապահովման սահմանադրական սկզբունքներով և ընտանիքի մայրության ու մանկության պետական պաշտպանության աջակցությամբ:

Դրանով իսկ ռեժիմային հանրային-իրավական կարգավորումը իրավունք է մասնավոր բնագավառներում, պայմանավորված է հասարակական հարաբերությունների որոշակի բնագավառի հատուկ կարգավորմամբ, պետության կողմից նրանց մասնակիցների պաշտպանության ուժեղացման տեսանկյունից, որին չեն կարող հասնել բավականին ազատ, մասնավոր-իրավական կարգի շրջանակներում:

Եվ հակառակը մասնավոր-իրավական ռեժիմների ներդրումը հանրային–իրավական նյութի մեջ, թույլ է տալիս որոշ դեպքերում օպտիմալացնել հասարակության կառավարման գործընթացը՝ իր գործունեության որոշակի կողմեր ինքնուրույն սահմանելով իրավունքը իշխանական սուբյեկտներին տրամադրելու ուղիով, յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար կառավարչական գործունեության ավելի ընդունելի միջոցի ընտրության նպատակով, կառավարչական մեթոդների միավորման նկատառումով նրանց ճիշտ հարաբերակցությամբ գործողության համար, նրա հանրային գործառույթների անհրաժեշտ կատարման համար վարչակազմի պատասխանատվության ուժեղացման նպատակով և այլն:

## Ամփոփում

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Իրավական ռեժիմի հատկանիշների (նպատակը, հատուկ կարգը և այլն) բացահայտումը և ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեցին լիարժեքորեն բացահայտել դրա էությունը և սահմանել որպես իրավունքի սուբյեկտների շահերի բավարարման համար բարենպաստ (անբարենպաստ) պայմաններ ստեղծող և օպտիմալ սոցիալապես արժեքավոր արդյունքի ձեռք բերմանը կողմնորոշված իրավական միջոցների (այդ թվում իրավական կարգավորման միջոցների), երաշխիքների և սկզբունքների որոշակի համակցության վրա հենված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման հատուկ կարգ:

2. Իրավական ռեժիմների էությանը, բովանդակությանը և նշանակությունը համապատասխան առաջարկվում է առանձնացնել դրանց այնպիսի տեսակներ, ինչպես առավելությունների և սահմանափակումներին հենված իրավական ռեժիմներ:

Առավելություններին հենված իրավական ռեժիմը՝ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման հատուկ կարգ է, որը իրենում ներառում է իրավական միջոցների որոշակի համակցություն՝ թույլտվությունների (սուբյեկտիվային իրավունքների, օրինական շահերի, արտոնությունների, իմունիտետի, աջակցության և այլն), երաշխիքների և սկզբունքների, որոնք իրավունքի սուբյեկտի շահերի բավարարման համար բարենպաստ պայմանների ստեղծման ուղիով կողմնորոշված են օպտիմալ սոցիալական վիճակի ձեռք բերմանը: Առավելություններին հենված իրավական ռեժիմների գոյությունը ոչ միայն չի խախտում քաղաքացիների հավասարության սահմանադրական սկզբունքը, այլ նաև նպաստում է նրանց փաստացի անհավասարության հաղթահարմանը, կողմնորոշված է քաղաքացիների վրա դրված հատուկ պետական (հասարակական) գործառույթների արդյունավետ իրականացմանը, նրանց անհիմն ոտնձգություններից պաշտպանությանը և գործունեության բարենպաստ պայմանների ստեղծմանը՝ դրանով իսկ ունենալով խթանիչ ազդեցություն նշված

սուբյեկտների վարքագծի վրա: 9. Սահմանափակումներին հենված իրավական ռեժիմը՝ հասարակական հարաբերությունների կարգավորման հատուկ կարգ է, որը կայանում է իրավունքի սուբյեկտի սեփական շահերի բավարարման համար անբարենպաստ պայմանների ստեղծման ուղիով օպտիմալ սոցիալական վիճակի ձեռք բերմանը կողմնորոշված իրավական միջոցների՝ ընդհանուր արգելքների և դրական պարտականությունների (կասեցում, պարտականություններ, ցենզեր, լիմիտեր, պետական հարկադրության և պատժման միջոցներ և այլն), երաշխիքների և սկզբունքների որոշակի համակցության մեջ: Սահմանափակումներին հենված իրավական ռեժիմը մեծամասամբ հաստատվում և գործում է պետությունների, պետական մարմինների և պետական ծառայողների նկատմամբ:

3. Ճյուղային իրավական ռեժիմները ունեն ինտեգրատիվ և կողմնորոշումային նշանակություն և մարմնավորում են իրավական միջոցների համալիրի սերտ միասնությունը կարգավորվող հարաբերությունների բովանդակության հետ: Ճյուղային իրավական ռեժիմը իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների կոնկրետ ճյուղերի իրավական կարգավորման հատուկ կարգ, որը հենված է այդ ճյուղերում օպտիմալ սոցիալական վիճակի ձեռք բերմանը կողմնորոշված ճյուղային առարկայի և իրավական կարգավորման մեթոդի, իրավական սկզբունքների ազդեցության շրջանակներում իրավական միջոցների և եղանակների (թույլտվություններ, արգելքներ, դրական պարտականություններ) որոշակի համակցություն:

4. Հանրային և մասնավոր իրավական ռեժիմները իրենցից ներկայացնում են երևույթ, որը բնութագրում է հատուկ առարկայով, իրավական կարգավորման սկզբունքներով, մեթոդներով, մեխանիզմներով, իրավունքի միասնական ենթահամակարգերով: Հանրային-իրավական և մասնավոր իրավական ոլորտների բնույթների որոշակի մերձեցման ուժով հանրային-իրավական ռեժիմները ներթափանցում են մասնավոր իրավական կարգավորման ոլորտներ և, հակառակը, մասնավոր իրավական ռեժիմները գործում են ի սկզբանե հանրային իրավական ոլորտներում:

5. Հանրային-իրավական ռեժիմային կարգավորումը մասնավոր իրավունքի ոլորտներում պայմանավորված է հասարակական հարաբերությունների մասնակիցների

պետության կողմից պաշտպանվածության ուժեղացման տեսանկյուններից որոշակի հարաբերությունների հատուկ կարգավորման անհրաժեշտությամբ, ինչն էլ հնարավոր չէ ձեռք բերել իրավական կարգավորման բավականին ազատ մասնավոր իրավական կարգով: Եվ, հակառակը, մասնավոր իրավական ռեժիմների ներածումը հանրային-իրավական նյութի մեջ հնարավորություն է ընձեռնում մի շարք դեպքերում օպտիմալացնել հասարակության կառավարման գործընթացը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար կառավարման գործունեության իրականացման առավել ընդունելի եղանակի ընտրության նպատակներով իշխանական սուբյեկտներին սեփական գործունեության որոշ կողմները ինքնուրույն սահմանման, իրենց համար անհրաժեշտ հարաբերակցությունում ազդեցության համար կառավարման մեթոդների (ուղիղ և անուղղակի) միավորման, ադմինիստրացիայի իր հանրային գործառույթների պատշաճ իրականացման համար պատասխանատվության ավելացման ուղիով:

6. Իրավական ռեժիմների օպտիմալացումը որպես գործընթաց ենթադրում է դրանց արդյունավետության բարձրացում և դրա մաքսիմումի ձեռք բերում այս կամ այն գործընթացներում: Իրավական ռեժիմի արդյունավետությունը անհրաժեշտ է դիտարկել նորմատիվ-իրավական ակտի տեքստում իրավաստեղծ սուբյեկտի կողմից ամրագրված դրա նպատակների և որոշակի սոցիալ-քաղաքական պայմաններում իրական հաստատված արդյունքների միջև հարաբերակցության միջոցով: Բացի դրանից, իրավական ռեժիմի արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ են այնպիսի պայմաններ, ինչպես. հասցեատերերի համար հայտնիությունը, իրավական նորմաների ոչ հակասությունը և ընկալելի լինելը, սոցիալական նպատակների և այդ նպատակների ձեռք բերման իրավաբանական միջոցների համաչափությունը, իրավական ռեժիմների գործառնության ապահովումը իրավակիրառական մարմինների ազդեցիկ աշխատանքով՝ ներառելով իրավապահ և արդարադատության մարմինները:

7. Իրավական ռեժիմների օպտիմալացման նպատակներով անհրաժեշտ է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում պետական քաղաքականության իրականացման ժամանակակից առաջնությունները, նպատակները, սկզբունքները, հիմնական ուղղությունները, խնդիրները և մեխանիզմները ամրագրող պետական մակարդակում հատուկ մարտավարությունների (ծրագրերի, հայեցակարգերի)

հաջորդական ընդունում և տվյալ կողմնորոշիչների պատեհաժամ արտացոլում գործող օրենսդրության մեջ: Շատ կարևոր է, որ իրավական ռեժիմի հիմնական տարրերը ամրագրող յուրաքանչյուր նորմատիվային ակտ պարունակվի կամ նախաբանում, կամ այն նպատակների վերաբերյալ նշման առաջին հոդվածներում, որոնց իրավաստեղծ մարմինը կցանկանար հասնել վերջինիս օգնությամբ: Տվյալ դրույթը անհրաժեշտ է ամրագրել նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ դաշնային օրենքում ընդհանուր պարտադիր կանոնի որակով, հակառակ դեպքում իրավունքի սուբյեկտները ստիպված կլինեն սահմանել իրավական կարգավորման նպատակներ, մեկնաբանել օրենքի դրույթները իրենց համար շահավետ տարբերակներով:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### ա) նորմատիվ իրավական ակտեր և օրենսդրական ակտերի ժողովածուներ

1. ՀՀ Սահմանադրություն 1995թ. (2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2015 (հատ. թող.), 07.12.2015:
2. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին), ՀՀ ՊՏ 2003/25, 02.05.2003:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 1998թ. հուլիսի 1 -ին), ՀՀ ՊՏ 1998.09.21/22(55):
4. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք (ընդունվել է 2004թ. նոյեմբերի 9-ին), ՀՀ ՊՏ 2005.01.31/8(380):
5. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին), ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50):
6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին), ՀՀ ՊՏ 1998.09.09/20(53):
7. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին), ՀՍՍՀԳՍ 1985/23:
8. ՀՀ աշխատանքային օրենսգիրք (ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 24-ին), ՀՀ ՊՏ 2004.12.21/69 (368):
9. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին), ՀՀ ՊՏ 2011.06.17/37(840):
10. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին), ՀՀ ՊՏ 2002.08.08/32(207):
11. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001թ. ապրիլի 16-ին), ՀՀ ՊՏ 2001.05.31/15(147):
12. «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1997թ. նոյեմբերի 17-ին), ՀՀ ՊՏ 1997.12.25/29:

13. «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին), ՀՀ ՊՏ 2002.07.19/26(201):
14. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին), ՀՀ ՊՏ 2002.01.09/1(176):
15. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001թ. հոկտեմբերի 24-ին), ՀՀ ՊՏ 2001.12.12/39(171):
16. «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին), ՀՀ ՊՏ 2007.12.05/61(585):
17. «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին), ՀՀ ՊՏ 2002.08.08/32(207):
18. «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին), ՀՀ ՊՏ 2002.08.14/33(208):
19. «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006թ. հունիսի 11-ին), ՀՀ ՊՏ 2009.07.15/35(701):
20. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. փետրվարի 5-ին), ՀՀ ՊՏ 2003.05.16/28(263):
21. «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին), ՀՀ ՊՏ 2004.03.31/18(317):
22. «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2005թ. հունիսի 8-ին), ՀՀ ՊՏ 2005.08.17/52(424):
23. «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006թ. օգոստոսի 5-ին), ՀՀ ՊՏ 2006.07.26/40(495):
24. «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2005թ. հուլիսի 8-ին), ՀՀ ՊՏ 2005.08.24/54(426):
25. «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2014թ. մայիսի 19-ին), ՀՀ ՊՏ 2014.06.18/31(1044):
26. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին», ՀՀ օրենք (ընդունվել է 2014թ. մայիսի 19-ին), ՀՀ ՊՏ 2014.06.18/31(1044):

- 27.«Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2007թ.նոյեմբերի 28-ին), ՀՀ ՊՏ 2007.12.26/66 (590):
28. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ դեկտեմբերի 14-ին), ՀՀ ՊՏ 2005.01.26/7(379):
29. «Դատախազության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2007թ. փետրվարի 22-ին), ՀՀ ՊՏ 2007.04.11/19(543):
30. «Աժ կանոնակարգ» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. փետրվարի 20-ին), ՀՀ ՊՏ 2002.04.12/12(187):
31. «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին), ՀՀ ՊՏ 2002.08.15/34(209):
32. «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2011թ. ապրիլի 14-ին), ՀՀ ՊՏ 2011.04.22/23(826):
33. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 5-ին), ՀՀ ՊՏ 2007.01.17/4(528):
34. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2012թ. մարտի 21-ին), ՀՀ ՊՏ 2012.04.25/21(895):
35. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2007թ. հոկտեմբերի 22-ին), ՀՀ ՊՏ 2007.11.28/59(583)
36. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Երևան, 2015, 94 էջ:
37. Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.) Գիրք Ա, Երևան , 2000, 875 էջ:
38. Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999թթ.) Գիրք Բ, Երևան , 2001, 927 էջ:
39. Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1999-2000թթ.) Գիրք Գ, Երևան , 2001, 481 էջ:
40. Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2001թ.) Գիրք Դ, Երևան, 2002, 1063 էջ:
41. Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (2002թ.) Գիրք Ե,

